Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

IX–XII դդ.

ԵՐԵՎԱՆ

1946

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ГОС. ИСТОРИЧЕСКИЙ МУЗЕЙ АРМЕНИИ

В. АБРААМЯН

# РЕМЕСЛА И ЦЕХОВЫЕ ОРГАНИЗАЦИИ В АРМЕНИИ IX—XIII в.в.

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1946

902.7
Ա-16

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ОБМЕН

2093

# ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ԵՎ ՀԱՄՔԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ IX—XIII Դ.Դ.

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1946

ՀՍՍՌ ԳԱ Արևելագիտության ինստ.
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т востоковед. АН Арм. ССР

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
Նախագահության կարգադրությամբ

Պատասխանատու խմբագիր՝
Ա. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 9—13-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Յոթերորդ դարի 40-ական թվականներին Հայաստանը ենթարկվում է արաբական արշավանքներին և նույն դարի 80-ական թվականներին վերջնականապես անցնում է խալիֆայության տիրապետության տակ։

Արաբական առաջին երկու արշավանքները գերազանցորեն կրել են ավարառական բնույթ։ Գերեվարության ու ավարի են ենթարկվել Հայաստանի կարևոր շրջանների ու քաղաքների, առաջին հերթին Դվինի, բնակչությունն ու նրանց ունեցվածքը։

Արաբական խալիֆայությունը վերջնականապես իր գիրքերն ամրացնելով Արևելքում՝ Օմայանների դինաստիայի (661—750 թ. թ.) սկզբնական շրջանում Հայաստանում վարում էր անհամեմատ ավելի մեղմ քաղաքականություն։ Դրան ապացույց կարող է ծառայել Թեոդորոս Ռշտունու և Ասորիքի փոխարքա Մուավիայի միջև 651 թ. կնքված պայմանագիրը։ Սակայն խալիֆայությունն ինչպես իրեն հպատակ մյուս երկրներում, այնպես էլ ֆեոդալական Հայաստանում շատ շուտով սկսում է փոխել իր քաղաքականությունը. ծանրանում է արաբական լուծը, որն ավելի դաժան է դառնում հատկապես Աբբասյանների տիրապետության շրջանում (750—856 թ. թ.)։ Այդ ժամանակից երկիրը տնտեսապես ավելի է քայքայվում, ծանրանում են հարկերը, թուլանում են առևտրական հարաբերությունները, կենտրոնական քաղաքները տարանցիկ առևտրի մեջ կորցնում են իրենց դերը և դառնում ռազմա-վարչական կենտրոններ։ Արաբական խալիֆայությունն իր այս քաղաքականությամբ ցանկա-

նում էր ոչ միայն տնտեսապես քայքայել երկիրը, այլև վարում էր Հայաստանի ռազմական ուժի ոչնչացման քաղաքականություն։ Այդ նպատակին հասնելու համար արաբական կառավարիչները Հայաստանում գործադրում էին ամեն տեսակ ճնշիչ միջոցներ, ինչպես, օրինակ, ոչնչացնում են շատ նախարարական տներ, փոխարինելով նրանց արաբ հողատեր էմիրներով ու առևտրականներով։ Վերջիններիս բերում ու բնակեցնում են Հայաստանի խոշոր ու վաճառաշահ քաղաքներում և արգավանդ վայրերում՝ Դվինում, Նախիջևանում, Խլաթում և այլն։

Հայաստանում 8—9-րդ դարերում ուժեղացավ արաբական լծից ազատագրվելու ձգտումը, որն արտահայտվեց մի շարք ավելի ուժեղ ապստամբություններով և երկարատև արյունալի կռիվներով։ Այդ ապստամբություններից հիշատակության արժանի են Վարդանակերտի 702—703 թ. թ. հերոսական ճակատամարտը և 772—75 թ. թ. համաժողովրդական ապստամբությունները, որոնք թեև մեծ վնաս պատճառեցին արաբներին, սակայն հետագայում արաբական իշխանությունը դաժան կերպով ճնշեց հայերի այդ շարժումները։

Հարուն-ար-Ռաշիդի մահվանից (809 թ.) հետո արաբական խալիֆայությունը տնտեսական և քաղաքական տեսակետից ապրում էր իր մայրամուտը։ Ստեղծված ֆինանսական ճգնաժամն անդրադարձել էր բանակի վրա և թուլացման ու քայքայման հասցրել նրան։ Ներքին գահակալական կռիվները, հպատակ երկրների ազատագրական ապստամբությունները, որոնցից ամենագլխավորն էր հյուսիսային Պարսկաստանում՝ Բաբեկի գլխավորությամբ (816—838 թ. թ.) կազմակերպված ապստամբությունը և Հայաստանում 850—851 թ. թ. տեղի ունեցած համաժողովրդական ապստամբությունները, մյուս կողմից՝ Բյուզանդիայի առաջխաղացումն ի վերջո պատճառ դարձան խալիֆայության թուլացման և Հայաստանում առանձին նախարարական տների ուժեղացման։

Իններորդ դարի երկրորդ կեսից, երբ արդեն թուլացել ու քայքայման էր հասել արաբական խալիֆայությունը, Հայաստանում և նրա սահմանակից երկրներում ուժեղացել էին մի կողմից՝ առանձին արաբ էմիրները, իսկ մյուս կողմից՝ հայ իշխանական մի քանի տոհմեր. սրանց մեջ աչքի էին ընկնում



Բագրատունիները, Արծրունիները և Սյունյաց իշխանությունները, որոնք ձեռք բերելով խոշոր կալվածներ, ձգտում էին դուրս գալ արաբական տիրապետությունից։

Հայաստանի իշխանական այդ տներից ավելի ծանրակշիռ տեղ էր գրավում Բագրատունյաց իշխանությունը, որ սկզբից ևեթ վարում էր ինքնուրույն քաղաքականություն։ Սահակ Բագրատունու ժառանգների՝ Աշոտի և Շապուհի, ժամանակ Բագրատունիները, որոնք բնակվում էին Սպերում, հետզհետե ուժեղանալով՝ հաստատվում են Հայաստանի միջնաշխարհում և իրենց կալվածներն ընդարձակում ի հաշիվ մահմեդական էմիրությունների և հայ իշխանների (հատկապես Մամիկոնյանների և Կամսարականների), որոնց կալվածները ձեռք են բերում զենքի ուժով և կամ գնման ճանապարհով։

Աշոտ Մսակերի որդի Սմբատ Բագրատունին հաստատվում է Դվինում և ստանձնում սպարապետության պաշտոնը, մյուս որդին՝ Բագրատ Բագրատունին, հաստատվում է Տարոնում և Սասունում, հետագայում սա կրում է «իշխանաց իշխան» տիտղոսը։ Բագրատունի այս իշխանները, մանավանդ սրանցից վերջինը, առիթներ էին որոնում Հայաստանն ազատագրելու արաբական տիրապետությունից։ Թեև Հայաստանում 850—852 թ.թ. տեղի ունեցած համաժողովրդական ապստամբությունները արաբների կողմից ճնշվում են մեծ դաժանությամբ, սակայն վերջին վերջո խալիֆայությունը, ելնելով իր ներքին դրությունից և հաշվի առնելով արտաքին պայմանները, հարկադրված է լինում ճանաչել Հայաստանի ինքնուրույնությունը և 855 թ. Սմբատի որդի Աշոտին հաստատում է Հայաստանի կառավարիչ։

Աշոտ Բագրատունին, Հայաստանի կառավարիչ նշանակվելուց հետո, կարողանում է իր շուրջը համախմբել երկրի ռազմական ուժը, ձեռք է բերում մեծ հեղինակություն և հայ իշխանների պահանջով, խալիֆայությունն ստիպված է լինում 885 թ. նրան ճանաչելու որպես Հայաստանի թագավոր։ Սրանով Հայաստանի մեծ մասը ձեռք է բերում փաստական անկախություն, որոշ քանակությամբ հարկ վճարելու և խալիֆայության գերիշխանությունը ճանաչելու պայմանով։ Հետագայում Աշոտի հաջորդները հրաժարվում են նաև դրանից։ Աշոտ թագավորի

որդի Սմբատ Ա. հետամուտ է լինում իր պետության սահմաններն ընդարձակելու, ի միջի այլոց, նա 892—93 թ.թ. գրավում է նաև Դվին քաղաքը։

Հզորացող Բագրատունյաց թագավորությունը 10-րդ դարի երկրորդ կեսին, Սմբատ Բ-ի ժամանակ, ոչ միայն վերջնականապես թոթափում է խալիֆայության լուծը և դադարում հարկ վճարելուց, այլև սկսում է ինքնուրույն քաղաքականություն վարել հարևան երկրների, ավելի ևս Բյուզանդիայի նկատմամբ, որով կարգավորվում են երկու երկրների միջև եղած հարաբերությունները և նախապայման է ստեղծվում տարանցիկ առևտրի զարգացման համար։

Եթե արաբական տիրապետության ժամանակ Հայաստանը կորցնում է իր ինքնուրույն տեղը միջազգային առևտրի ասպարեզում, ապա այդ հնարավոր է լինում վերականգնել արդեն 9-րդ դարի երկրորդ կեսից։

9—11-րդ դարերում Հայաստանով անցնում էին տարանցիկ առևտրի մեծ ճանապարհներ։ Սրանցից առաջինը, որ համարվում էր նոր ժամանակ և ուներ խոշոր տնտեսական նշանակություն, արաբական խալիֆայության կենտրոնական քաղաքներից Հայաստանի վրայով անցնում էր դեպի Տրապիզոն։ Այդ առևտրական գիծը գալիս էր Խոյից՝ Նախիջևան, Դվին, Անի, Կարս, Արծն և ապա Տրապիզոնի վրայով կապվում Սևծովյան երկրների հետ։ Այս առևտրական ճանապարհը Դվինի մոտ բաժանվում էր երկու ճյուղի, որոնցից մեկը տանում էր դեպի հյուսիս-արևելք՝ Պարտավ (Բարդա—Ադրբ. ՍՍՌ) քաղաքը, իսկ մյուս գիծը՝ դեպի Թբիլիսի։ Այն գիծը, որ Դվինը կապում էր Պարտավի հետ, անցնում էր երկու ուղղությամբ՝ Դվինից դեպի Բերդկունք (այժմյան Սևանի շրջանում գտնվող Ակալա ամրոցի և Հայրեվանքի կենտրոնում եղած Ազատ քաղաքի տեղը) և ապա Կաղանկատույքի ավերակների մոտով՝ դեպի Պարտավ։ Իսկ մյուս գիծը՝ Դվինից դեպի Պարտավ, անցնում էր Բաշնորաշենով և Արփայի վրայով։

Կարևոր նշանակություն ուներ նաև Դվինից Մցխեթ տանող առևտրական գիծը, որը այժմյան Լենինականի մոտ բաժանվում էր երեք ճյուղի։

Առաջին ճյուղն անցնում էր Դեբեդ գետի հովտով, երկրորդը՝ Վարանցովկայի, իսկ երրորդն Ախալքալաքի և Բորժոմի վրայով դեպի Մցխեթ*։

Բացի հյուսիսային այդ ճանապարհից, 9—11-րդ դարերում կարևոր նշանակություն ուներ նաև հարավային գիծը, որն անցնում էր Խոյից դեպի Բերկրի, ապա Վանա լճի հյուսիսային ափերով՝ Արճեշի, Խլաթի և Բիթլիսի վրայով ձգվում էր դեպի հարավ և միանում Ամիդին. այստեղից գիծը բաժանվում էր մի քանի ճյուղերի։

Հայ ժամանակագրական աղբյուրները ցույց են տալիս, որ այս շրջանում Հայաստանի հյուսիսային մասում գտնվող վերոհիշյալ քաղաքները ներգրավվելով արտաքին առևտրի մեջ, կարողանում են ստեղծել իրենց համար փոխանակության ներքին շուկա, որի հիման վրա կենտրոնական քաղաքներում արագ թափով զարգանում են թե առևտուրը և թե արհեստները։

Հայաստանի հնագույն քաղաքներից Դվինը, որը հանդիսանում էր խոշոր առևտրական կենտրոններից մեկը, 893 թ. երկրաշարժից հետո նորից վերականգնվում և դառնում է առևտրական ու տեղական արդյունագործության կենտրոն։ 11-րդ դարի պատմիչ Արիստակես Լաստիվերտցին ունի խիստ համառոտ, բայց արժեքավոր հիշատակություններ Հայաստանի մի շարք քաղաքների առևտրի զարգացման և ճոխության մասին։ Պատմիչն Անին անվանում է «տիեզերահռչակ», Արծն քաղաքն ամենամեծ և նշանավոր բոլոր քաղաքներից՝ «Մեծանիստ և 'ի շահաստան քաղաքս մեր»**. ապա ավելացնում է. «Հոյակապ և ականաւոր էր ամենայն աշխարհաց, իբրև զքաղաք որ 'ի վերայ լերինն կայցէ. և ծով և ցամաք երկնէր և առատանայր կրել 'ի սմա զզօրութիւն իւր.... Վասն որոյ և վաճառականք սորա փառաւորք, և օգնողք թագաւորք ազգաց։ Եւ իբրև ակն մի պատուական լուսազեղ պայծառութեամբ փայլէր քաղաքս մեր 'ի մէջ ամենայն քաղաքաց, ամենեին գեղեցիկ, բոլորովին զարդարուն»***։

---

* Ակադ. Հ. Մանանդյան—«Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», Երևան, 1936 թ., էջ 183, 202։

** Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ, Թիֆլիս, 1912 թ., էջ 63։

*** Նույնը, էջ 78, 79։

Անի քաղաքի մեծության մասին տեղեկություն է հաղորդում ուշ շրջանի պատմագիրներից Աբրահամ Կրետացին, որը, հավանաբար օգտվելով գրավոր հին հիշատակություններից, հանգամանորեն նկարագրում է Անիի բնակչության կենցաղը, նիստ ու կացը։

«Զորրորդ՝ ծուլութիւնն տիրեալ առ ամենեսին, զի առանց աղախնայց և ծառայից ոչ լինէին. և հետիոտս յեկեղեցին ոչ ընթանային. ոմանք գրաստիւ, և այլք ի գրաստէ իջանել ոչ կամէին, այլ զժամարարն արտաքս կոչէին և բարձրացուցանել տային զԱւետարանն և համբուրէին. և այնպէս զնշխարս առեալ գնային ի թատերս ի թէատրոնս և ի սաղնշխարս առեալ գնային ի թատերս ի թէատրոնս և ի սապարէզս ձիարշաւանաց։ Հինգերորդ՝ ագահութիւնն ևս քան զևս, և արժատ ամենայն չարեաց արծաթասիրութիւնն, զի այնպէս ագահ էին, մինչև զի զմիմեանց բարին յափշտակէին»*։

Պակաս զարգացած չէր նաև Կարսը, որ Բագրատունի Աբաս Թագավորի ժամանակ (928—951 թ. թ.) դարձավ թագավորական նիստ քաղաք և առևտրական կապերով կապված էր Արտանուճի և Սևծովյան նավահանգիստների հետ։ Արիստակես Լաստիվերտցին հիացմունքով է խոսում Կարս քաղաքի մասին. «Հարստացեալք բազում ընչեղութեամբ 'ի ծովէ և 'ի ցամաքէ ամբարեալ»**։ Արտանուճն, ըստ Կոստանդին Ծիրանածնի, լինելով առևտրական կենտրոն, կապված էր ոչ միայն Իբերիայի, Աբխազիայի, այլև Հայաստանի մի շարք քաղաքների, առաջին հերթին Կարս քաղաքի հետ։ Միջազգային առևտրի հանդույցում էր պոնտական քաղաքներից նաև Տրապիզոնը։ Ըստ արաբ պատմիչ Մասուդիի՝ Տրապիզոնում ամեն տարի կազմակերպվում էր տոնավաճառ, ուր գալիս էին մահմեդական, հույն և հայ վաճառականներ։ Տրապիզոնի միջազգային կենտրոն և սահմանային քաղաք լինելու մասին մեզ բավական արժեքավոր տեղեկություններ է տալիս նաև արաբ աշխարհագիր Իստախրին, ըստ որի հունական (բյուզանդական) ապրանքները Տրապիզոնից էին փոխադրում Հայաստանի վրայով դեպի արևելյան երկրները։

* Ա.բ. Կրետացի—«Պատմութիւն անցից իւրոց և Նագը-շահին Պարսից», Վաղարշապատ, 1870 թ., էջ 108։

** «Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ», Թիֆլիս, 1912 թ., էջ 91։



Այսպիսով Հայաստանն առևտրական հարաբերության մեջ էր մի կողմից՝ արաբական տիրապետության ենթակա մի շարք քաղաքների և Բյուզանդիայի հետ, իսկ մյուս կողմից՝ կապված էր Դվինից դեպի հյուսիս-արևելք գտնվող Պարտավ քաղաքի հետ (այժմյան Բարդա՝ Եվլախ կայարանից 20 կիլոմետր դեպի արևմուտք)։ Պարտավը այն ժամանակ հանդիսանում էր շատ նշանավոր առևտրական կենտրոն։ Հայաստանից այնտեղ արտահանվում էր ոչ միայն հում նյութ, այլև պատրաստի ապրանքներ։ Այդ արտահանվող ապրանքներից հիշատակության արժանի է Հայաստանի «որդան կարմիր» ներկը, մետաքսյա գործվածքները, ոսկե թելերով ասեղնագործած պատրաստի հագուստները, գորգերը, հացահատիկը, անտառանյութը, կաշվեղենը և զանազան տեսակի ներկեր։

10-րդ դարի տնտեսական բարգավաճ կյանքի օգտին է խոսում նաև այն փաստը, որ արաբ պատմիչ Իբն Հաուքալը Բագրատունյաց ենթակա երկրամասերը համարում էր ամենահարուստ երկրներից, որոնք ավելի շատ հարկ էին ուղարկում արքունի գանձարանը, քան մյուս իշխանությունները։

Այդ փաստերը վկայում են այն մասին, որ 10-րդ դարից մինչև 11-րդ դարի կեսերը Հայաստանի հիշյալ քաղաքները ոչ միայն սոսկ առևտրական կենտրոններ էին, այլև աչքի էին ընկնում իրենց զարգացած արհեստներով ու արդյունագործությամբ։

Սակայն Հայաստանի տնտեսական ու քաղաքական կյանքի նորմալ զարգացմանը խոչընդոտ էին հանդիսանում մի կողմից՝ երկրի ներսում բուն դրած արաբ էմիրները և հայ իշխանների միջև տեղի ունեցող պայքարը, մյուս կողմից, որ ամենագլխավորն է, Բյուզանդական կայսրության կործանարար արտաքին քաղաքականությունը և, հետագայում, սելջուկ-թուրքերի արշավանքները։ Անշուշտ, այդպիսի պայմաններում շատ դժվար էր երկրում ստեղծել միացյալ ուժեղ իշխանություն, մանավանդ որ Հայկական բարձրավանդակը, լինելով Արևելքի ու Արևմուտքի մրցակցության շահերի բախման ասպարեզ, գրեթե անհնարին էր դարձնում այդ կենտրոնացման փորձերը։ Հայաստանի նվաճմանը ձգտող պետություններից ամեն մեկն աշխատում էր երկ-

պառակություն առաջացնել երկրի ներսում և պաշտպանել իր քաղաքականության կողմակից կենտրոնախույս ֆեոդալ իշխաններին։ Այս պետություններից ամենաագրեսիվն այդ ժամանակ հանդիսանում էր Բյուզանդական կայսրությունը։ Բյուզանդիան Վասիլ Բ կայսրի օրով Հայաստանի նկատմամբ ուժեղացրեց իր այդ քաղաքականությունը, որի հետևանքով հայերի ռազմական դիմադրական ուժը դնալով թուլացավ։ Կայսրության առաջին հարվածն իջավ հայ խոշոր ազնվականության տիրական իրավունքների վրա և այդ նպատակով կատարվեցին նույնիսկ տեղահանումներ։ Վասիլ Բ օրով Դավիթ Կյուրոպաղատը (Տայեցին) իր ծառայությունների համար որպես վարձատրություն ստացած մի քանի գավառներ, հենց իր կենդանության ժամանակ ստիպված եղավ նույն Բյուզանդական կայսրության բռնի ուժի ազդեցության տակ նրան «կտակել»։ Վասպուրականի Սենեքերիմ թագավորը, նույնպես արտաքին հարձակումներից հարկադրված, 1021 թ. իր երկիրը հանձնում է նույն կայսրին, փոխարենն ստանալով Սեբաստիա քաղաքն իր շրջակայքով։ Անիի Բագրատունյաց թագավոր Հովհաննես Սմբատը, Բյուզանդիայի առաջխաղացումից վախենալով՝ 1022 թ. ստիպված եղավ կայսրությանը «կտակել» Անի քաղաքը, որին փաստորեն Բյուզանդիան տիրացավ Գագիկ Բ ժամանակ, և Անիի փոխարեն Գագիկին «նվիրեցին» Փոքր Ասիայի Պիղա քաղաքը։ Վասակ Պահլավունու որդի Գրիգոր Մագիստրոսն 1046 թ. իր կալվածները հանձնում է Մոնոմախ կայսրին և փոխարեն ստանում նոր կալվածներ ու Միջագետքի դքսությունը. նա Հայաստանից զաղթեցնում է բավական թվով ազնվականություն։ 11-րդ դարի պատմիչ Արիստակես Լաստիվերտցին ավելի մանրամասն գույներով է նկարագրում այդ տեղահանման հետևանքները. Հովհաննես Սմբատի մահից հետո, երբ պետության հիմունքները խախտվում են, այն ժամանակ այդ հալածանքի պատճառով՝ «ելին իշխանքն 'ի հայրենի ժառանգութենէ իւրեանց, և եղեն պանդուխտ յօտար երկիր. յորում աւերեցան գաւառք և գնացին յաւար տանն Յունաց»*։

Ապա պատմիչը նկարագրում է, թե ինչպես ազնվական դասի հետ միասին գաղթում է նաև հայկական զորքը. «Հնձելագործն անտէրունչ շրջեալ ոմն 'ի Պարս և ոմն 'ի Յոյնս, և ոմն 'ի Վիրս։ Սեպուհ գունդն աղատաց ելեալ 'ի հայրենեաց... մոնչեն ուր և են իբրև զկորիւն առիւծուցն 'ի խշտիս իւրեանց»*։

Այսպիսով՝ Հայաստանի թե ներքին և թե արտաքին դրության համար ստեղծվում են աննպաստ պայմաններ, որոնք ավելի ևս հեշտացնում են արտաքին թշնամիների ներխուժումը։ Կայսրությունը քայքայելով Հայկական բարձրավանդակի ռազմական ուժը, ինքն ևս անկարող եղավ պաշտպանել Հայաստանի սահմանները սելջուկ-թուրքերի արշավանքներից։

1048—1071 թ. թ. սելջուկ-թուրքերը վերջ տվին բյուզանդական իշխանությանը Հայաստանում։ Թղրմուշի և Իբրահիմ Յանալի (1048—1049 թ. թ.), Տուղրիլի (1054 թ.) և Ալփ-Արսլանի (1063—1072 թ. թ.) ասպատակությունների ժամանակ երկիրն ենթարկվում է թալանի և մեծ ավերածությունների։ Հայաստանի առևտրական-արդյունագործական կենտրոնները՝ Դվինը, Անին, Արծնը, Կարսը և Խլաթը ավերվում են և ամբայանում։ Այդ անցքերի մասին Արիստակես Լաստիվերտցին գրում է. «... և այսպիսի ձեռնարկութեամբ ապականեցին զաշխարհս մեր, ոչ միանգամ, այլ երիցս անգամ մի 'ի միոյ վերայ դարձ արարեալ՝ մինչև առհասարակ հատաւ երկիրս 'ի բնակչաց, և բարձաւ կառաչ անասնոց»**։ Այնուհետև պատմիչն ավելի մանրամասն գույներով է նկարագրում Արծն քաղաքի ավերածությունը. «...հասին 'ի վերայ անօրինացն ժողովք իբրև շունք քաղցեալք, և շրջապատեցին զքաղաքն. և մտին իբրև հնձողք ոճոյ ագարակի, և սուր առն 'ի վերայ եդեալ հնձեցին մինչև անջատեցաւ 'ի կենդանւոյ քաղաքս... Անդանօր էր տեսանել տեսիլ ողորմագին և զարհուրական յոյժ. զի ամենայն քաղաքն լի էր դիակամբք անկելոցն, վաճառափողոցք և նրբափողոցք և ընդարձակ սրահք... Այսոքիկ են չարաչար պատմութիւնք քո, ո՛վ քաղաք երջանիկ և երանելի, յղփացեալ, ականաւոր 'ի մէջ աշխարհաց»***։

Մեծ ավերածություններ է կատարում Ալփ-Արսլանն Անի-

* Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ, Թիֆլիս, 1912 թ., էջ 51։

** Նույնը, էջ 93—94

*** Նույնը, էջ 83—84։

ում։ «...մտեալ յաշխարհս մեր,—գրում է նույն պատմիչը,—ահ և երկիւղ հասուցանէր հեռաւորաց և մերձաւորաց. կոխէր, տապալէր զաշխարհս բազումս, մինչև եհաս 'ի քաղաք՝ որ զմեզս իւր 'ի կատարումն լրիւ իւրով ունէր... Անդ էր տեսանել զվիշտս և զտագնապս իւրաքանչիւր հասակի. զի 'ի գրկաց մարդն յափշտակեալ լինէին մանկունք՝ անողորմաբար զքարի հարեալ, և մարքն ա-ռնամբ և արտասուօք զմանկունսն իւրեանց թանային. զհայր և զորդին մի սուր խողխողէր... և եղև ամենայն բնակութիւնն իրրև հողաբլուր. և վաշխն և նենգութիւնն որ 'ի նմա՝ խափանեցաւ»*։

Հայաստանի այս ծանր աղետի պատճառը հայ ժողովուրդն իրավամբ վերագրում էր Բյուզանդիային, որը միանգամայն քայքայել էր երկրի ռազմական ուժը և ինքն անհրաժեշտ քանակությամբ զորք չէր պահում Հայաստանում արտաքին թշնամիների՝ սելջուկների առաջն առնելու համար։ Բյուզանդիան նույնիսկ սկսել էր կրոնական հալածանք, որ ավելի էր թշնամացնում հայերին իր հետ։ Բյուզանդական և հայկական եկեղեցիների միջև եղած հին պայքարը, որ վերասկսվել էր Բագրատունիների ժամանակ, ավելի սուր բնույթ էր ստացել. հունական իշխաններից Կոմնենոսն սկսում է սաստիկ հալածել հայ եկեղեցականներին, աքսորում է նրանցից շատերին, հարկադրման է ենթարկում եկեղեցին։ Այս ներքին կռիվների և անիշխանության շրջանում երկրի աշխատավոր մասսայի դրությունը գնալով վատթարանում էր, իսկ Բյուզանդական կայսրությունը ոչ մի կերպ չէր բարելավում նրա դրությունը։

Սելջուկյան արշավանքների հետևանքով խիստ ավերվել էին ոչ միայն Հայաստանի հարավային, այլև հյուսիսային մասերը, սակայն այդ ապատակությունները և անիշխանությունը շարունակվեցին մինչև Մելիք-Շահի իշխանության ժամանակ։ Սրա օրով սելջուկյան սուլթանությունը վերջնականապես հիմնավորվելով Առաջավոր Ասիայում, առաջին հերթին ձեռնարկում է երկիրը դուրս բերել այդ կիսավեր դրությունից։ Դրավված երկրներում Մելիք-Շահի կարգադրությամբ սկսվում է շինարարական աշխատանք՝ վերաշինվում են ավերված քաղաքներն ու

* Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերցւոյ, Թիֆլիս, 1912 թ., էջ 165—167։



գյուղերը, կարգի են բերվում հաղորդակցության ճանապարհները, հոգ է տարվում գյուղատնտեսությունը բարձրացնելու համար։ Ժամանակակից հայ պատմիչները Մելիք-Շահի կառավարության մասին գովասանքով են խոսում։ 13-րդ դարի պատմիչ Վարդան վարդապետը գրում է. «Կարի քաղցր և բարեմիտ առ Հայս. վասն որոյ խնամածեալ ազգիս՝ շինեցաւ աշխարհս. ազատեալ զվանորայս, և զաժենայն եկեղեցականս»*։ Նույնպիսի հարգանքով է խոսում նաև Մ. Ուռհայեցին. «...սա տիրեալ էր ամենայն աշխարհին Հայոց։ Եւ էր սա յամենայն կողմանց քաղցր և ողորմած և բարի և խնամակալ և մարդասէր և խաղաղարար և շինող ամենայն աշխարհին Հայոց... և ի ժամանակս նորա կայր ուրախութեամբ լցեալ ամենայն Հայքն»**։

Մելիք-Շահի մահվանից հետո սելջուկյան պետությունը քայքայման է դիմում. սրան նպաստում են գահակալական կռիվները և պետության զեկավարության հանձնումը խնամակալներին—աթաբեկներին, որոնք, գահի ժառանգների անչափահաս լինելու պատճառով փաստորեն իրենք էին կառավարիչները։ Այս աթաբեկների օրով սրվում է ներքին պայքարը, գլուխ են բարձրացնում ֆեոդալական բոլոր այն տները, որոնք զրկվել էին իրենց կալվածներից, իսկ մյուս կողմից նախկին իգդաները (պետական պաշտոնյաները) չէին ցանկանում ենթարկվել կենտրոնական իշխանության և ձգտում էին անկախություն ձեռք բերել։ Այսպիսով, 12-րդ դարի առաջին քառորդում քայքայվում է սելջուկյան պետությունն Առաջավոր Ասիայում և ստեղծվում են մի շարք մանր իշխանություններ—էմիրություններ։ Հայաստանի կենտրոնական քաղաքներից Դվինը, Անին, Կարսը, Մանազկերտը, Կարինը դառնում են զանազան էմիրությունների կենտրոններ. իսկ այս ժամանակ հայ ֆեոդալական տներից մնացել էին միայն Զորագետի Բագրատունիների ու Կապանի Սյունյաց թագավորությունները և մի քանի մանր իշխանություններ՝ Ռշտունիքում և Սասունում, որոնք ապաստան էին գտել իրենց երկրների անառիկ բերդերում։ Դանձակի էմիրությունից հետո մահմեդական խոշոր կենտրոններ էին հանդիսանում Դվինը և Անին, որոնք գտնվում

* Վարդան Վ.—«Պատմագիրք հայոց», Վենետիկ, 1862, էջ 108։

** Մ. Ուռհայեցի—«Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 217։

էին Շեդդադյան տոհմի ձեռքին, իսկ Խլաթում և Մանազկերտում իշխում էին Շահարմենները։

Հայաստանում հիմնված այս մի շարք անկախ էմիրությունները անընդհատ հակամարտության մեջ էին միմյանց հետ՝ իրենց տերիտորիաները ընդարձակելու համար։ Այդ երևույթը խիստ բացասաբար էր ազդում Հայաստանի տնտեսական և քաղաքական կյանքի վրա։ Ահա այս հանգամանքները ևս բավականին նպաստեցին վրացական համեմատաբար ավելի ուժեղ պետության առաջխաղացմանը։

Սելջուկյան արշավանքներից համեմատաբար քիչ էր տուժել Վրաստանը, որովհետև նա գտնվում էր սելջուկների առաջխաղացման գլխավոր ճանապարհներից դուրս։ Իսկ Հայաստանում և Աղվանից աշխարհում տեղի ունեցող ֆեոդալական կռիվները և խաչակրաց արշավանքները նպաստավոր հող ստեղծեցին Վրաստանի հետագա նվաճումների համար։

Վրաստանը Դավիթ Վերաշինողի ժամանակ (1089—1125 թ.թ.) ետ է մղում թուրք ամիրաների հարձակումները և ընդարձակում իր սահմանները՝ նվաճելով ամբողջ Գուգարքը, Ուտիքը և Աղվանքի մեծագույն մասը։ Վրաստանի հաղթանակից թեավորված և նրանց հորդորներով ոգեվորված Անիի բնակչությունը 1124 թ. ապստամբում է Անիի ամիրա Աբուլսվարի դեմ և գրավում քաղաքը. սակայն նրանց այդ հաղթանակը վերջնական չէր, որովհետև դրանից հետո էլ մի քանի անգամ Անին ընկնում է Շեդդադյանների ձեռքը։ Միայն 1174 թ. վերջնականապես քաղաքը նվաճվում է վրաց թագավոր Գեորգի Գ կողմից, և կառավարիչ է նշանակվում Իվանե Օրբելյանը։

Վրացական տիրապետության ժամանակ Հայաստանում նորից հանդես են գալիս նոր ֆեոդալական տներ, որոնք ձեռք են բերում խոշոր կալվածներ։ Էմիրությունից ազատված հյուսիսային Հայաստանն ամբողջապես անցնում է Զաքարյաններին, որոնց ներկայացուցիչները բարձր զինվորական պաշտոն ունեին վրաց արքունիքում։ Իշխանական այս տոհմից ծագած զորապետները կարճ ժամանակամիջոցում Վրաստանի ոգնությամբ նվաճում են Արարատյան ամբողջ նահանգը, Ուտիքը և Սևանա լճի շուրջը գտնվող բոլոր հայկական գավառները ու հաստատվում այդ տերիտորիաներում։ Վայոց ձորում և Սյունիքում, Զաքարյանների ցանկությամբ սկսում են իշխել Օրբելյանները, որոնք մինչ այդ Վրաստանում կորցրել էին իրենց կալվածները։ Սրանք արդեն ենթակա էին Զաքարյաններին։ Բացի սրանցից՝ Հայաստանի տարբեր մասերում ստեղծվել էին մի շարք հայկական վասալ իշխանություններ, որոնցից հայտնի են Վաչուտյանները։ Այս տոհմի զորավար Սարգիսը 13-րդ դարի սկզբին հիմնում է Վաչուտյան իշխանությունը, որը ենթարկվում էր Զաքարե Ամիրսպասալարին։

Սևանա լճի հարավ-արևելյան շրջանում իշխում էր Զաքարեի և Իվանեի հորեղբոր՝ Վահրամի սերունդը։

Թարթար գետի հովտում և նրան կից Սոթից գավառում հաստատվում է Դոփյանների իշխանական տունը։

Մածնաբերդում և Նորաբերդում իշխում են Զորագետի Բագրատունյաց Կյուրիկե Գ թագավորի սերունդը և մի շարք այլ մանր իշխանական տներ։

Այսպիսով՝ Զաքարյանների տիրապետությունն ընդգրկում էր ոչ միայն Բագրատունիների նախկին սահմանները՝ Շիրակը, Անին և Զորագետի թագավորությունը, այլև Դվինն իր շրջակայքով, որը սելջուկյան արշավանքներից առաջ գտնվում էր մահմեդական էմիրության ձեռքին։

12—13-րդ դարերի հայկական ֆեոդալիզմի մասին խոսելիս չպետք է սահմանափակվել միայն աշխարհիկ ֆեոդալների և նրանց հարաբերությունների քննությամբ, այլ պետք է նկատի ունենալ նաև հոգևոր ֆեոդալներին։ Զաքարյաններն իրենց իշխանության ժամանակ գլխավորապես իրենք էին նշանակում նոր եպիսկոպոսներ, կառուցում էին նոր եկեղեցիներ, վանքեր և տալիս էին նրանց մեծ քանակությամբ կալվածներ։ Հայ մատենագիրներից Մխիթար Գոշը հաղորդում է, որ անգամ օրենքով նախատեսված էր եկեղեցուն հասանելիք բաժինը՝ պատերազմական ավարից, որ կազմում էր ամեն տասակի ավարի առնվազն 1/50 մասը։

Աշխարհիկ և եկեղեցական ֆեոդալները խոշոր կալվածներ են ձեռք բերում մի կողմից՝ քայքայվող ազատ գյուղացիների հաշվին և մյուս կողմից՝ գնման ճանապարհով. ճորտ գյուղացին վճարում էր ոչ միայն հողային հարկ և գլխահարկ, այլև տալիս էր եկեղեցական հարկ, որն այդ ժամանակ կրկնապատկվել էր։





ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

12-րդ դարում և 13-րդ դարի սկզբներին ճորտ գյուղացիության դրության՝ նրա անձնական կախման մասին մեզ տեղեկություններ են հաղորդում այդ դարերի վիմական արձանագրությունները և Գոշի «Դատաստանագիրք»-ը, որոնք հաստատում են ճորտ գյուղացիության ծանր վիճակը։ Նպատակ չունենալով այդ հարցի վրա մանրամասն կանգ առնել, հարկավոր ենք համարում միայն մատնանշել գոյություն ունեցող դրությունը։ Մատենագրական փաստերը հաստատում են գյուղացիների կախյալ վիճակը, որոնց նվիրել են երբեմն հողի հետ միասին*։

12—13-րդ դարերում, արտաքին և ներքին խաղաղության շնորհիվ, Հայաստանում մի շարք քաղաքներ սկսում են նորից կենդանանալ։ Այդ դարերում Հայաստանը առևտրական հարաբերություններով կապված էր մի կողմից՝ Պարսկաստանի, Միջին Ասիայի, իսկ մյուս կողմից՝ Սև ծովի վրայով եվրոպական երկրների հետ։ Նորից վերսկսվում է Սևծովյան առևտուրը և նշանակալից չափով աշխուժանում է տարանցիկ առևտուրը դեպի Տրապիզոն։ Պատմական փաստերը հաստատում են, որ առևտրական հայ գաղութներ կային Վրաստանում, Ղրիմում, Սևծովյան նահանգներում և այլ վայրերում։ Մարկո Պոլոյի (1271—1295 թ. թ.) հաղորդածներից և իտալական այլ աղբյուրներից երևում է, որ Հուլավույան իշխանության ժամանակ Ճենովայի ու Վենետիկի առևտրականներն իրենց առևտուրը կատարում էին Հայաստանի վրայով դեպի Թավրիզ և Սուլթանիե. նրանք Թավրիզում ունեին նույնիսկ իրենց առևտրի գրասենյակը և կոնսուլությունը**։

Հայաստանի կենտրոնական քաղաքներից Դվինում, Անիում, Կարսում, Մանազկերտում, Խլաթում և Էրզրումում նորից աշխուժանում է առևտուրը և աճում է կուլտուրական կյանքը։ Արդեն ոչ միայն առևտրականները, այլև արհեստավորությունն իր արտադրանքով մասնակցում էր առևտրին, որը նպաստում է

* Կ. Կոստանեան—«Վիմական տարեգիրք», Պետերբուրգ, 1913 թ., էջ 68—70։ Կ. Ղափադարյան—«Պատմա-հնագիտական գիտողություններ Նոր բերդի Կյուրիկյան իշխանության մասին» (Արմֆանի «Տեղեկագիր», 1940 թ., № 4—5, էջ 168)։

* Акад. Я. Манандян—„О торговле и городах Армении“, էջ 195։



ճրկրի ներքին ապրանքափոխանակության լայնացմանը։ Կային արդյունագործական ձեռնարկներ, արհեստանոցներ և արհեստագործական կազմակերպություններ։ Հայաստանի ներքին շուկայի լայնացման գործում խոշոր բաժին ուներ արհեստավորական արտադրանքը։ Հիշյալ ժամանակաշրջանում արհեստները, համեմատած նախկինի հետ, նոր թափ են ստանում. որքան զարգանում և առաջ էր գնում քաղաքային կյանքը Հայաստանում, այնքան արհեստավորության աշխատանքը դառնում էր բազմակողմանի։

Բազմաթիվ հիշատակություններ կան նաև այդ շրջանում սկսված դրամական կուտակումների մասին։ Մատենագրական տվյալներն ապացուցում են, որ ֆեոդալներից շատերն իրենց եկամուտների խոշոր մասը պահում էին գանձի ձևով. իսկ այդ գանձի կուտակումը կարող էր տեղի ունենալ միայն առևտրա-վաշխառուական կապիտալի զարգացման պայմաններում։ Հիշատակվում է նաև կարմիր ղուկատի մասին, որ ոմն Ճար անունով գրում է, թե իր հայրը գնել է Գետիկը 40 հազար կարմիր ղուկատով, մի ուրիշ տեղ հիշատակվում է 10 հազար սպիտակի (արծաթ դրամի) մասին և նման բազմաթիվ այլ հիշատակություններ*։ Առևտրի զարգացման հետևանքով ավելի են ուժեղանում դրամական կուտակումները, և առևտրական կապիտալը թափանցում է նույնիսկ գյուղ, որտեղ անշարժ գույքերը, կալվածքները դառնում են առևտրի առարկա։

12-րդ դարից հետո եղած արձանագրությունների մեջ բազմաթիվ հիշատակություններ կան կրպակների, այգիների, այլ և այլ կալվածների և արդյունագործական ձեռնարկների գնման՝ իրենց «հոգու փրկության» համար վանքերին նվիրելու դեպքերի մասին։ Եկեղեցիներին էին նվիրվում ոչ միայն սեփական կալվածները, այլև գանձով գնածները, դեպքեր, որոնք ցույց են տալիս, թե հողը դարձել էր առևտրի առարկա, որի հետևանքով ավելի ուժեղանում էր վաշխառուական կապիտալը և իր կուտակումը կատարում ի հաշիվ ստորին խավերի։

Զաքարյանների շրջանի Հայաստանի տնտեսական դրության և առանձնապես քաղաքների մասին ակադ. Ն. Մառը գրում է.

* Կ. Կոստանեան, «Վիմական տարեգիրք», էջ 124—125։

«Վրացական այս նոր թագավորության ամենափայլուն ժամանակ, 13-րդ դարի սկզբին, դարձյալ քաղաքները ստանում են իրենց նշանակությունը, Հայաստանի նոր քաղաքների աճման, առաջին հերթին Անիի վերածնման, զուգընթաց ծնունդ է առնում հայրենի հայկական բուրժուազիան։ Դեռևս զոյություն ունեին հայ իշխանները և այստեղ մեծ դեր էին խաղում, բայց ոչ իբրև ազգայնորեն կազմակերպված հայ հասարակական ուժ։ Այդպիսի ազգային հասարակական ուժի տեղը գրավում էր միջազգային կապեր ունեցող բուրժուազիան՝ հարուստ առևտրական և արհեստավորական դասը, որի շնորհիվ վերածնվեց Հայաստանի միջնաշխարհի կուլտուրական կյանքը»*։

Օրենքների մշակման և հաստատման գործում, լինի դա քաղաքացիական թե կրոնական, խոշոր դեր ուներ քաղաքային նոր դասը, և այդ օրենքները նպաստում էին առևտրական հարաբերությունների կարգավորման ու է՛լ ավելի լայնացման գործին։ Սակայն, պետք է նշել, որ քաղաքային դասի այդ իրավունքները, որ ձեռք էին բերվել ֆեոդալ իշխանների դեմ մղված երկարատև պայքարի ընթացքում, դեռ ևս սահմանափակ էին։

* Акад. *Н. Я. Марр*—„Кавказский культурный мир и Армения“, Петроград, 1915, էջ 43։






Վաղ միջնադարում, երբ արտադրողական ուժերը դեռևս գտնվում էին ցածր մակարդակի վրա, և իշխում էր ընատնտեսությունը, այդ շրջանում արհեստագործությունը չէր կարող անջատվել գյուղատնտեսությունից։ Գյուղացիներն իրենց տերերին հայթայթում էին ոչ միայն գյուղատնտեսական մթերքներ, այլև նրանց բավարարում էին արհեստագործական արտադրանքներով։

Էնգելսը վաղ միջնադարի մասին գրում է. «Միջնադարյան հասարակության մեջ, մոնավանդ առաջին դարերում, արտադրությունն էապես հետապնդում էր ինքնասպառման նպատակներ։ Նա գլխավորապես բավարարում էր միայն արտադրողի և նրա ընտանիքի կարիքները։ Որտեղ զոյություն ունեին անհատական կախման հարաբերություններ, ինչպես գյուղերում, նա բավարարում էր նաև ֆեոդալի կարիքները։ Այստեղ, ուրեմն, փոխանակություն չէր կատարվում, ուստի և պրոդուկտներն ապրանքների բնույթ չէին ստանում։ Գյուղական ընտանիքն արտադրում էր հատարյա այն բոլորը, որի կարիքը նա զգում էր, ինչպես կենսամթերքներ, նույնպես և գործիքներ, կահ-կարասիք ու զգեստներ։ Միայն այն ժամանակ, երբ սեփական կա-

ռիքները հոդալուց և ֆեոդալին հասանելիք բնական տուրքերը վճարելուց հետո նրա արտադրությունն ավելցուկ էր տալիս, միայն այն ժամանակ նա սկսեց նաև ապրանքներ արտադրել։ այդ ավելցուկը հասարակական փոխանակության մեջ նետվելով, վաճառքի հանելով ապրանք դարձավ»*։

Ինչպես հայտնի է, Մարքսը գյուղատնտեսական և արհեստագործական աշխատանքի միացումը համարում էր նատուրալ տնտեսության հատկանիշը, սակայն, իհարկե, այդ չէր բացառում առևտուրը. սպառումից մնացած ավելցուկը կարող էր հանվել վաճառքի և այդ ավելցուկը շրջանառության պրոցեսում կարող էր ապրանք դառնալ։ Ուստի կարող ենք ասել, որ քաղաքային արհեստավորները սկզբից ևեթ արտադրում էին փոխանակության համար, սակայն նրանք իրենց սեփական կարիքների մեծ մասը բավարարում էին իրենց արտադրությամբ, չնայած արհեստավորներն ունեին այգի, հողատաս և անասուններ, բայց և այնպես ապրանքների արտադրությունը դեռ նոր էր ծագում, ուստի դրա համար էլ տիրում էր սահմանափակ փոխանակություն և սահմանափակ շուկա։

Ինչպես Եվրոպայում, այնպես էլ պատմական Հայաստանում ազգաբնակության զբաղմունքը վաղ միջնադարում եղել է անասնապահությունը և երկրագործությունը, սակայն, որպես օժանդակ աշխատանք, գյուղացին պարապել է նաև տնայնագործությամբ։ Հայաստանի ֆինականն ինքն էր պատրաստում գրեթե բոլոր տեսակի պրոդուկտներն իր սեփական կարիքների համար և այդ աշխատանքը կատարում էր ոչ միայն տղամարդը, այլև կինը։ Վերջինիս անբաժան գործն է համարվել բրուտությունը, ջուլհակությունը, գորգագործությունը։ Հայ շինականը չէր կարող այդ սահմաններից դուրս գալ, որովհետև արտադրողական ուժերն այն աստիճանի վրա չէին, որ հնարավոր լիներ աշխատանքի լայն բաժանումը և դրանով պայմանավորվող արհեստի անջատումը գյուղատնտեսությունից, որպեսզի արհեստը դառնար տնտեսության եկամուտի հիմնական աղբյուրը։

Ամենահին արհեստները պատմական Հայաստանում եղել են կավագործությունը և դարբնությունը, որոնց միջոցով պատրաստվել են կավե, երկաթե և պղնձե բոլոր տեսակի անհրաժեշտ

* Ֆրիդրիխ Էնգելս—«Անտի-Դյուրինգ», Երևան, 1932 թ., էջ 349։



իրերը, լինեին դրանք գյուղատնտեսական գործիքներ, սառը զենքեր, թե տնային կահ-կարասիք։ Վաղ միջնադարյան դարբնի աշխատանքն ընդգրկում էր մի շարք արհեստներ, որոնք հետագա դարերում բաժանվեցին մասնագիտական առանձին ճյուղերի։ Եթե սկզբնական շրջանում դարբինը կատարում էր զինագործի, պղնձագործի, պայտարի, կողպեքարարի գործ, ապա հետագա դարերում սրանցից յուրաքանչյուրն ուներ իր առանձին մասնագիտացած արհեստավորը։

Ֆեոդալիզմի սկզբնական շրջանում, երբ դեռ զարգացած չէին քաղաքները և ֆեոդալ կալվածատերն իր կալվածքի սահմաններից գրեթե դուրս չէր եկել ու տնտեսական թույլ հարաբերության մեջ էր իր հարևան ֆեոդալ իշխանի հետ, արհեստավորության արտադրանքը գնում էր ավելի նեղ շրջանի պահանջների բավարարման ուղղությամբ։ Արհեստավորները մեծ մասամբ անբաժան են եղել ֆեոդալներից, ապրել են վերջիններիս ղղյակներին, կամ վանքերին կից, աշխատել են ժամանակակից տիրող դասի պահանջների ու պատվերի համաձայն, նրանց անձնական կարիքների համար։

Հայտնի է, որ Հայաստանը միշտ էլ մասնակցել է արտաքին առևտրին, որի ընթացքում, անշուշտ, ժամանակակից ֆեոդալները հարևան և հեռավոր երկրներից ներմուծել են թանկարժեք իրեր, սակայն այս հանգամանքը չի կարող բացասել Հայաստանում սեփական արդյունագործության անհրաժեշտությունն ու հնարավորությունը։ Անտարակույս, Հայաստանի ֆեոդալ իշխաններն իրենց կենցաղային իրերի և զենքերի մեծագույն մասը տալիս էին տեղական արհեստավորներին պատրաստելու և ուրիշ կերպ էլ չէր կարող լինել։ Մենք ունենք բավականաչափ հարուստ տվյալներ հայ մատենագրական աղբյուրներում, որոնք ոչ միայն հիշատակում են տեղական արհեստավորների գոյությունը, այլև խոսում են նրանց արտադրանքի մասին։ Օրինակ՝ 5-րդ դարի պատմիչ Ղ. Փարպեցին Արարատյան դաշտի նկարագրության մեջ ասում է. «...գանձել անձանց շահս և զվայելս այսր աշխարհիս ի մեծութիւն թագաւորաց և ի հաստատութիւն հարկահանաց, զոսկի և զպղինձ և զերկաթ և զպատուական քարինս. զոր ընկալեալ արուեստող ձեռաց՝ զարդարեն զթագաւորս մեծատեսիլ զարդեօքն յօրինուածովքն, զոր ի խոյրսն

և ի թագոն և ի հանդերձան յոսկեհուռս պաճուճեալս ընդելուզանեն»*։

Մ. Խորենացին խոսելով Հայաստանում Շամիրամ թագուհու կատարած շինարարության մասին, ասում է. «Ասա իմն ակնակառոյց լեալ այրասիրան այն և կաթոտն Շամիրամ, հրաման տայ բիւրուց և երկու հազար արանց անարուեստից գործաւորաց յաստրեստանեաց և յայլոց իշխեցելոց, և վեց հազար իւրոց ընտրելոց յամենայն արուեստաւոր գործաւորաց փայտի և քարի, պղնձոյ և երկաթոյ, որք ամենեքին կատարեալք իցեն ի յարուեստագիտութեան, ածել անխափան ի փափագեալ տեղին»**։

Հայ պատմիչների վերոհիշյալ վկայություններից պարզվում է, որ Հայաստանում եղել են արհեստավորներ, որոնք աշխատել են գլխավորապես իրենց իշխանների կարիքները բավարարելու համար։ Անիի և Դվինի պեղումներից դուրս եկած իրերի մեծ մասը թե տեխնիկայի և թե արվեստի տեսակետից միանգամայն հաստատում է վկայությունները. կասկած չի կարող լինել այն մասին, որ այդ իրերը հանդես են եկել որպես հատուկ պատվերի արդյունք և բավարարել են սոցիալական առանձին խավերի կարիքները (նկ. №№ 1, 2, 3)։



Նկ. 1. Ջնարակած նկարազարդ քլեզան, գտնված Անիում (ԺԴ դար)։ Պետ. Պատմ. թանգարան

Նման իրերով հարուստ էին նաև Սասանյան Պարսկաստանն ու Բյուզանդիան, որոնց հետ Հայաստանը միշտ էլ ունեցել է առևտրական և կուլտուրական սերտ հարաբերություններ։ Բնական է, որ Հայաստանի և իր հարևան այդ երկրների միջև պետք է որ գոյություն ունենար ոչ միայն պատրաստի ապրանքների, այլև հում նյութերի փոխանակություն, որպիսի հանգամանքն ավելի էր նպաստում

* Ղ. Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1908, էջ 21։

** Մ. Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913 թ., էջ 56։



երկրի ներքին արտադրության զարգացմանը։ Հայաստանում գտնված այդ ժամանակաշրջանի իրերն իրենց արվեստով շատ նման են նույն ժամանակների Պարսկաստանի համանման իրերին, բացառությամբ որոշ առանձնահատկությունների։

Օրինակ՝ Անիում գտնված մի շարք իրեր, որոնց թվում նաև բրոնզե մոմակալները, իրենց տեխնիկայով ու արվեստով նման են Պարսկաստանում գտնվածներին։ Լենինգրադի Պետական Էրմիտաժի Արևելյան բաժնում ցուցադրված Սասանյան արծաթե ափսեները ցույց են տալիս արտադրության տեխնիկայի ընույթը և հատակական այս կամ այն խավին պատկանելը։ Նյութական կուլտուրայի այդ մնացորդներն արտացոլում են թագավորների և ընդհանրապես ազնվական դասի կենցաղն ու զբաղմունքը, իշխող դասի ներքին հարաբերությունները։ Այդ իրերի մեջ ամենաբնորոշն ազնվական դասի որսորդական և առհասարակ զինվորական կյանքն արտացոլող ափսեներն են՝ ինչպես, օրինակ, պարսից Խոսրով թագավորի զինավարժությունը, Շապուհ Բ-ի (310—379 թ.թ.) որսի տեսարանը և այլն։ Մի այլ ափսեի վրա քանդակված է Կավատի որդի Խոսրով թագավորը, շրջապատված չորս սատրապներով, որ ցույց է տալիս այդ ժամանակվա Իրանի վարչական կառուցվածքը և նրա զինվորական ուժի չորս հատվածները։ Մեզ համար ավելի հետաքրքրական է Շապուհ Գ-ի որսի տեսարան ունեցող մի այլ ափսեն։



Նկ. 2. Հախճապակյա նկարազարդ ափսե, գտնված Անիում։ Պետ. Պատմ. թանգարան

Թագավորների և ֆեոդալների անմիջական գործածության այդ իրերը պատրաստված են հատուկ պատվերով և, անշուշտ, այնպիսի արհեստավորների ձեռքով, որոնք աշխատում էին ար-

քունիքին կից և միայն վերջինիս կարիքների համար։ Էրմիտաժի հիշված ափսեներից մեկի, Շապուհ Գ-ի որսի տեսարանին հար և նման, սակայն ավելի կոպիտ արվեստով, մի քանդակ ունենք քարի վրա, որը գտնված է Զվարթնոցի ավերակներում, պատի մեջ։ Այդ բարելեֆը պատրաստված է եղել Հայաստանում և, անշուշտ, հայ վարպետների ձեռքով։ Այդ հին բեկորն օգտագործված է Զվարթնոցի կառուցման ժամանակ և ոչ մի կապ չունի շենքի ընդհանուր կառուցողական արվեստի հետ։ Բարելեֆի վրա ևս զգեստի առաջին մասը շրջանաձև է ու երկար, ինչպես ափսեի վրա քանդակված Շապուհ Գ-ի տարազը, որը գործածական է եղել 4—6-րդ դ.դ. Պարսկաստանում, թերևս և Հայաստանում։ Այս մանրամասնությունը բացատրվում է երկու հարևան երկրների կուլտուրական մոտիկությամբ և փոխազդեցությամբ։ Զվարթնոցում հայտաբերված այդ բարելեֆը պատահական չէ։ Արթիկի շրջանում հայտաբերվել է մի այլ բարելեֆ էլ, որի վերին մասը կոտրված է*։



Նկ. 3. Զնարկած սափորիկ, գտնված Անիում։ Պետ. Պատմ. թանգարան

Հին Հայաստանում արհեստավորները թե տնտեսական և թե իրավական տեսակետից հավանաբար ավելի շատ կախման մեջ են եղել ֆեոդալներից, բայց նրանք աշխատել են իրենց սեփական գործիքներով և այդ հանգամանքը՝ արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը՝ նպաստել է հետագայում արհեստների ազատ զարգացմանը։ Մարքսը խոսելով միջնադարյան արհեստավորների մասին, գրում է. «Հողի սեփականությունն անհրաժեշտ է արտադրության զարգացման համար, ինչպես գործիքների այդ եղանակի լրիվ սեփականությունը արհեստագործական արտադրության ազատ զարգացման համար»*։

Նկ. 4. Սասանյան արծաթեղ ափսե. Շապուհ Գ-ը որսի ժամանակ։ (Էրմիտաժ)

Հայաստանում ևս արհեստավորները արտադրության միջոցներին և հետագայում աղքատության և առևտրի զարգացման, մանավանդ միջազգային առևտրական հարաբերությունների աշխուժացման շրջանում արհեստների

* Երևանի Պետական Պատմական թանգարան։

* *К. Маркс*— Капитал, т. III, кн. III, изд. третье, Ленинград, 1928.

զարգացումը և պարզ ապրանքային փոխանակությունն ուժեղ թափ ստացան։

Եթե երկրագործ շինականն իր գյուղատնտեսական աշխատանքի հետ զուգընթաց զբաղվում էր նաև զանազան արհեստներով իր անմիջական կարիքները բավարարելու համար, եթե



Նկ. 5. Արջառոս, գտնված Զվարթնոցի հնագույն ավերակներում։

ֆեոդալական ղղյակին կից արհեստավորները բավարարում էին իրենց տերերի պահանջները և աշխատում նրանց պատվերով, ապա արհեստավորների մի որոշ խավ էլ կապված էր վանքական հաստատությունների հետ, աշխատում էր այդ վանքերին կից գոյություն ունեցող «գործատներում», արտադրում էր նույնպես պատվերով և բավարարում վանքերի ու հոգևորականության պահանջները։ Այդ «գործատների» մասին հիշատակում է 13-րդ դարի մատենագիր Ստ. Օրբելյանը Տաթևի վանքի կառուցման կապակցությամբ (վանքի շինարարությունը տեղի է ունեցել 889—911 թ.թ.)։

«...շինէ և գաղտանոցս գետնափորս ի ներքոյ վանիցս ծածուկ երկրաւ՝ բազում տունս և դարանս ի պէտս եկեղեցւոյն. և հարթեալ հաւասարեալ գվայրն՝ շինէ և սրբաշէն տրապէզս և գործատներս, հաւբարանոցս և սրբատունս և գրատունս. և ի դրան եկեղեցւոյն տուն աղօթից և տեղի դամբանի իշխանաց և եպիսկոպոսաց Սիւնեաց»։ Ապա շարունակում է. «...լի էր և ծովամատոյց փիլիսոփայիւք երաժշտական երգոց, ճոխ էր և վարժարանն վարդապետական կրթութեամբն. նաև արհեստաւորք նկարչացն և գրողաց անհամեմատք»*։ Մի այլ էջում, երբ պատմում է Ցուրա բերդի բնակչության ապստամբության մասին, նույն պատմագիրն ասում է. «եւ յաւուր միոմ եկեալ ի գիշերի յեղակարծ ժամու, սկսան կողոպտել զեկեղեցին և զգործատներն և զյարկսն կրօնաւորաց»**։

Ստ. Օրբելյանը խոսելով Տաթևի Հովհաննես եպիսկոպոսի շինարարական գործունեության մասին, գրում է՝ «...զարդարեաց զեպիսկոպոսարանն՝ զմեծ նախագահ տունն Սիւնեաց ...և ելից բազմութեամբ կրօնաւորօք, անյաղթ փիլիսոփայիւք և աննման երաժշտօք..., նաև յոգնապատիկ արհեստաւորօք»***։ Բայց իսմայելցիները գալիս ավերում են և«... այլ զամենայն շինուած վանացն այրեցին և քակեալ յատակեցին զգործատներն և զտրապէզն մարմնաւոր սեղանոյն և զամենայն յարկս կրօնաւորացն և այլ բնակչացն»։ Այս հատվածներից կարելի է եզրակացնել, որ «գործատները» եղել են առանձին հաստատություններ, որտեղ աշխատել են տարբեր մասնագիտության արհեստավորներ։

Վանքերում կենտրոնացած էր ժամանակակից կուլտուրական կյանքը. այնտեղ էին գրվում, արտագրվում և կամ թարգմանվում բազմապիսի բովանդակություն ունեցող երկեր. աստիճանաբար զարգանում է գրչության արվեստը։ Ձեռագրերի հա-

* Ստ. Օրբելեան—«Պատմութիւն Նահանգին Սիսական», Թիֆլիս, 1911, էջ 225, 226։

** Նույնը, էջ 247։

*** Նույնը, էջ 312—313։

մար անհրաժեշտ մագաղաթը և կաշվե կազմը պահանջում է կաշեգործության և կազմարարության զարգացում։ Ավետարանների և այլ գրքերի ոսկեպատումը կամ արծաթապատումը, եկեղեցական անոթների՝ արծաթյա և ոսկյա խաչերի և այլ իրերի պատրաստումը պահանջում էր ունենալ որակյալ արհեստավորներ. գրչության և մանրանկարչության համար անհրաժեշտ էին հատուկ ներկեր պատրաստողներ, գրիչներ, նկարիչներ (ծաղկողներ), կոկողներ, գծողներ և այլն։

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Մատենադարանի № 102 ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Բանզի զտիպս աւետարանին տեսանեմք նկարեալս ոչ միայն յոսկիոյ և արծաթոյ, այլև յոսկերաց փղաց և կարմիր մորթով կազմեալ...»։ Նորավանքում 989 թ. Հովհաննես գրչի գրած մի ձեռագրի կազմը ծածկված է փղոսկրով, որը հանդիսանում է արվեստի ամենանուրբ գործերից մեկը։ Ձեռագրերի բազմաթիվ հիշատակարաններում հաճախ հիշվում են ոչ միայն գրչի, այլև ոսկերչի, կազմողի և նկարչի անուններ։ Մատենադարանի № 1039 (Մուշից բերված) ԺԳ դարու արծաթապատ և ոսկեջրած կազմով ավետարանի հիշատակարանում ասված է.

«Զատուող արծաթոյ զՄելիքսէթ եպս. ոբ. Կրպտի յիշ./
«Զկազմող պատկերացս զԿրպտ, աբեղայս զԲաղիշեցիս յշ./
«Զոսկերիչ Սքանդարն և զՇահղուբաթն յշ/*։

Այսպիսի բազմատեսակ արհեստների համար պետք է աշխատեին հատուկ մարդիկ, որովհետև գործը պահանջում էր բավականաչափ հմտություն և վարպետություն։ Այս արհեստները շատ զարգացել էին միջնադարյան Հայաստանում և կենտրոնացած էին գլխավորապես նշանավոր վանքերում, ուր կային գրատներ։

10—13-րդ դարերում վանքերում, բացի առանձին գործածության համար իրեր արտադրելուց, կատարում էին նաև դրսի պատվերներ։ Մի շարք հիշատակարաններից երևում է, որ ձեռագրերի և նրանց տուփերի վրա աշխատել են առանձին վարպետներ՝ վանքերի կողմից նախապես տրված պատվերի համա-

* Գ. եպ. Ցովսէփեան—Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից, Հալեպ, 1930 թ., էջ 19, 43։



ձայն։ Վաճառքի հանելու համար և կամ նախօրոք պատվիրված ձեռագրերն անմիջապես աչքի են ընկնում իրենց արտաքին տեսքով ու ներքին ձևավորումով։ Վանքերի տնտեսական գործառնության մեջ խոշոր տեղ է գրավում ձեռագրի վաճառքը։

Բացի գրիչներից ու կազմողներից՝ վանքերում կենտրոնացած են եղել նաև մանրանկարիչներ, որոնցից նշանավոր են Թորոս Ռոսլին, Սարգիս Պիծակ, Վարդան երեց, Գրիգոր քահանա և այլն, որոնց մանրանկարչական արվեստը հասնում էր չափազանց բարձր զարգացման։

Տասերորդ դարի երկրորդ կեսից, երբ Հայաստանն ստիպողաբար ազատագրվում է արաբական խալիֆայության գերիշխանությունից, սկսում են արագ թափով զարգանալ արհեստները։ Առաջ են գալիս նորանոր քաղաքներ և ավաններ, որոնց մասին հիշատակում են մեր մատենագիրները։ Նախկին ֆեոդալական դղյակները, առևտրական հանգույցները և ռազմական նշանակություն ունեցող վայրերն աստիճանաբար փոխում են իրենց բնույթը՝ կենտրոնացնելով իրենց շուրջը մեծ չափերի հասնող «անաշխատ» մասսա, քայքայվող տարրեր, որոնք մեզ հայտնի են ռամիկ անունով։ Այդ բազմամարդ քաղաքներում կենտրոնացած բազմատեսակ խավերի պահանջների բավարարման համար արհեստավորությունը զուրս է հանում իր արտադրանքը և ստեղծում ներքին շուկա։ Հայաստանի գլխավոր քաղաքներում՝ Դվինում, Անիում, Արծնում և այլն առաջանում են արհեստավորական առանձին թաղամասեր։ Այդ քաղաքների զարգացման ընթացքն ավելի պարզ պատկերացնելու համար, որպես օրինակ, վերցնենք Դվինը և Անին։

Հայաստանի հնագույն քաղաքներից է Դվինը, որը հիմնադրվել է Խոսրով Բ-ի ժամանակ (330—339 թ.թ.), սակայն, իբրև քաղաք, նա հանդես է գալիս միայն 5-րդ դարից։ Ինչպես Արտաշեսյան դինաստիայի և Արշակունիների սկզբնական շրջանում Արտաշատ քաղաքը, այնպես էլ մարզպանական ու արաբական շրջաններում Դվինը հանդիսանում էր առևտրական, վարչական, տնտեսական և կուլտուրական խոշոր կենտրոն։ Դվինի վրայով էին տեղափոխվում չինական մետաքսը, թանկարժեք կտորները, անուշահոտ յուղերը և համեմունքները։

Բյուզանդացի պատմիչ Պրոկոպիոս Կեսարացու վկայու-

թյամբ՝ «Դվինը շատ բարեբեր վայր է, ունի առողջարար օդ և լավ ջուր, Դվինից մինչև Թեոդոպոլիս (Կարին) 8 օրվա ճանապարհ է, այնտեղ շատ հարմար է ձիով գնալու համար, բազմամարդ գյուղերն ընկած են իրար կողքի և զբաղվում են առևտրով. այստեղ են գալիս Հնդկաստանից, հարևան Վրաստանից, համարյա պարսից և մինչև անգամ հռոմայեցոց հպատակ բոլոր ժողովուրդները, այնտեղ էին բերում ապրանքներ, որոնցով նրանք առևտուր էին անում»*։

Դվինն ունեցել է մեծ թվով բնակչություն, որ երևում է պատմիչների տված տեղեկություններից։ 7-րդ դարի պատմիչ Սեբեոսը և այլ պատմիչներ հիշում են արաբների կողմից 640 թ. Դվինից 35 հազար հոգի գերի տանելու և 12 հազար հոգի սպանելու մասին։ «Եւ զիմնալ ի ներքս զաւրք թշնամեացն սատակեցին սրով զբազմութիւն քաղաքին... եւ խաղացուցին զբազմութիւնն գերւոյն Լ.Է (35) հազար ոգի»**։ Այդ թվերի մասին հիշատակում է նաև 13-րդ դարի պատմիչ Վ. Բարձրբերդցին***։

Ճիշտ է, հաճախ վտանգի ժամանակ շրջակայքի բնակչությունն ապաստան էր գտնում պարսպապատ քաղաքներում և բերդերում, սակայն Դվինի ավերակների այժմյան մեծ տարածությունը ցույց է տալիս, որ, իրոք, քաղաքն ունեցել է հոծ բազմություն։ Ա. Լաստիվերտցին, պատմելով սելջուկ, թուրքերի կատարած արշավանքների մասին, գրում է. «Բազում և անհամար հոգիք, ի վերագոյն գաւառացն, վասն տեղեացն ամրութեան՝ անդր ժողովեալ էին»****։

Իսկ Կիրակոս Գանձակեցին Կարին քաղաքը գրավելու առթիվ գրում է. «Եւ զի յոյժ բազում ամրոխ էր ի ժամանակին յայնմիկ, քաղաքն, լցեալ քրիստոնէիւք և Տաճկօք, այլև ամենայն գաւառն անդր հաւաքեալ էր»*****։ Սակայն այս հանգամանքը չի բացառում քաղաքների բազմամարդ լինելը։

* *Прокопий Кесарийский*, 181—182.

** Սեբեոս—«Պատմութիւն Հայոց», Պետերբուրգ, 1879 թ., էջ 109։

*** Վ. Բարձրբերդցի, *Մոսկվա, 1861 թ.*, էջ 93։

**** Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ, Թիֆլիս, 1912 թ., էջ 95։

***** Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, Թիֆլիս, 1910, էջ 264։



7-րդ դարի 40—50-ական թվականներին նախ Դվինը մի քանի անգամ ենթարկվում է արաբական զորքերի ասպատակումներին, ավերումներին ու թալանին, իսկ հետագայում, խալիֆայության հաստատումից հետո, մանավանդ Աբբասյանների դինաստիայի ժամանակ, շնորհիվ նրանց վարած դաժան քաղաքականության, Հայաստանի շատ երկրամասերի, մասնավորապես Դվին քաղաքի վիճակը դառնում է անտանելի։ Ծանր հարկերի պատճառով ժողովրդի կրած տանջանքները, արաբական կայազորների ծախքերը, տիրապետողի ծանր լուծը, որը տևեց մոտ երկու և կես դար, պատճառ դարձան մի շարք համաժողովրդական բնույթ կրող ապստամբությունների։ Անշուշտ, այդպիսի պայմաններում Դվինը, ինչպես նաև Հայաստանի մյուս քաղաքները չէին կարող այլևս առաջ գնալ և աճել, նրանք քայքայվում և դադարում են տնտեսական խոշոր դեր կատարելուց, դառնալով սոսկ ռեզիդենցիա կամ զորակայան արաբական զորքերի համար։ Միայն 10-րդ դարի երկրորդ կեսից, Բագրատունիների ժամանակ, Հայաստանում սկսում է խաղաղ և հանգիստ կյանք տիրել։ Դվինն ընկած լինելով հյուսիսային առևտրական ճանապարհի հանգույցում, որոշ չափով վերականգնում է իր դրությունը, ուր նույնիսկ զարկ է տրվում տեղական արդյունագործությանը և դառնում արհեստավորական ու առևտրական կենտրոններից մեկը։ Քաղաքը ոչ միայն մասնակից է դառնում տարանցիկ առևտրին, այլև իր համար ստեղծում է ներքին շուկա, որ առիթ է տվել հայ պատմիչներին նրան անվանել «շահաստան», «մայրաքաղաք», «մեծ քաղաք»։

10-րդ դարի պատմիչ Թովմա Արծրունին, երբ նկարագրում է Դվինը երկրաշարժից առաջ, հիշատակում է նրա մեծության և առևտրական կենտրոն լինելու մասին։

«...Մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու, որ Բլուրն Նորուն ասի, յորում շահաստանն Դուին, մարդախիտ, պարսպաւոր պատնիշօք պատուարեալ և տուր և առիկ վաճառականութեամբ և ազգի ազգի պղծութեամբ յափրացեալ յղփացեալ՝ զնա ի հիմանց տապալեալ»*։ Նույն հեղինակը, երբ խոսում է Դվինի երկրաշարժի մասին, հիշում է, որ 893 թվա-

* Թ. Արծրունի—«Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917 թ., էջ 371։

կանի երկրաշարժի ժամանակ Դվինում մեռել է 70 հազար հոգի։

Որքան էլ Թովմա Արծրունու ցույց տված թվերը չափազանցված լինեն, այնուամենայնիվ փաստ է, որ Դվինը 10 և 11-րդ դարերում եղել է առևտրական-արհեստավորական աչքի ընկնող կենտրոն և նույնիսկ իր կենսունակությունը չի կորցրել երկրաշարժից հետո էլ։

Ըստ արաբ պատմիչներ Իբն Հաուքալի և Իստախրի վկայության, Դվինում պատրաստում էին ամենաթանկարժեք գործվածքները, որոնցից նրանք արժանի են համարում հիշատակելու Մարիցինի դոտիները, գլխի ծածկոցները, բարձերը, բազմոցի երեսները, վարագույրները և այլն*։

Միջնադարյան Հայաստանի ամենախոշոր քաղաքը Դվինից հետո եղել է Անին։ Պատմության մեջ Անին, որպես ֆեոդալական ամրոց, հիշատակվում է դեռևս մեր թվականության 5-րդ դարում։ Սակայն դրանից առաջ էլ նա եղել է Հայաստանի հնագույն վայրերից մեկը, ինչպես այդ մասին վկայում են նյութական կուլտուրայի մնացորդները (բերդ-շենները, կիկլոպյան ամրոցները, դամբարանները և այլն)։

Ճարտարապետ Թ. Թորամանյանն իր ուսումնասիրության ընթացքում պարզել է, որ մինչև Կամսարականների տան հաստատվելը Անիում կառուցված են եղել Արշակունիների առաջին շրջանին պատկանող շենքեր, որոնք իրենց կառուցողական ոճով և տեխնիկայով նման են այն հին շենքերին, որոնցում գործադրվել են երկաթյա կապեր՝ շենքերին ամրություն տալու համար. ինչպես, օրինակ, Գառնիի հեթանոսական տաճարը, Երվանդաշատի պարիսպները, Զվարթնոցը և Կարմրավորը։ Արշակունիների տիրապետության ժամանակ Տրդատ Գ 321 թ. Շիրակի գավառի հետ միասին Անին պարգևում է իր բարեկամ Կամսարականների տոհմին։

Նյութական կուլտուրայի մնացորդները և պատմական հիշատակությունները ապացուցում են, որ Անին մինչև 8-րդ դարը պատկանել է Կամսարականների տոհմին և եղել է սոսկ ֆեոդալական ամրոց։ Բագրատունիներին անցնելուց հետո, 10—11-րդ դարերում Անին դառնում է խոշոր առևտրա-արհեստավորական կենտրոն և իր տնտեսական ու քաղաքական կշռով խոշոր տեղ է գրավում։

Երբ արաբական խալիֆայության օրով Բագրատունիները ծանրակշիռ դերք են գրավում և խոշոր կալվածներ ձեռք բերում միջնաշխարհում, Աշոտ Գ ժամանակ իրենց մայրաքաղաքը Կարսից տեղափոխում են Անի։ Բագրատունիների տիրապետության առաջամանակյա խաղաղ պայմանները հնարավորություն ստեղծեցին Անի քաղաքի զարգացման համար։ Ազգաբնակության աճման հետ միասին անհրաժեշտություն է զգացվում քաղաքն ընդարձակել, դրա համար էլ կառուցվում են նոր պարիսպներ և շենքեր։ Անիի առաջին պարիսպը իր բուրգերով և աշտարակներով, որ կառուցվել է Աշոտ Գ ժամանակ, տարածվում էր Մզկիթի մոտից դեպի Ծաղկոցաձորը։ Ըստ ճարտարապետ Թորամանյանի՝ այդ ժամանակաշրջանին են պատկանում պալատի արևմտյան դուռը և ջրամբարը։ Հետագայում, քաղաքի ընդարձակման հետ միասին, ֆեոդալական քաղաքին հատուկ, կառուցվել են նոր պարիսպներ՝ Սմբատ Բ օրով, գլխավորապես քաղաքի հյուսիսային կողմում. այդ պարիսպների բարձրությունը հասնում էր 8—10 մետրի, իսկ լայնությունը՝ մեկ մետրի, որով և ապահովվում էր քաղաքի պաշտպանությունը*։

10—11-րդ դարերում Անին այնքան է մեծանում, որ դրսից նոր եկող բնակչությունը և քաղաքացիների որոշ մասը բնակություն է հաստատում քաղաքի գլխավոր պարիսպներից դուրս։ Թորամանյանն իր աշխատության մեջ մանրամասն տեղեկություն է տվել Անիի պեղումների արդյունքների մասին՝ կապված քաղաքի լայնացման խնդրի հետ. բուն քաղաքը, ըստ հեղինակի, համարվում է պարսպից դուրս. նա այդ եզրակացությանը հանգել է, նկատի ունենալով պարսպից դուրս՝ մոտ մի կիլոմետր հեռավորության վրա կառուցված եկեղեցիների և մատուռների գոյությունը։ Բացի այդ՝ նշված վայրում գտնվել են նաև հասարակաց բաղնիքների մնացորդներ, իսկ կես կիլոմետր հեռավորության վրա՝ բնակելի շենքերի մնացորդներ։ Ախուրյան գետի ափին և քաղաքի հարավային ու արևմտյան կողմերում կան

* *Акад. А. Манандян*—«О торговле и городах Армении», էջ 161։

* Թ. Թորամանյան—«Անին քաղաք, թէ ամրոց», «Ազգագրական Հանդէս», գիրք 22, 23։

քարայրեր և դետնափոր ստորերկրյա բնակարաններ, ուր ապրել է քաղաքի ցածր խավը, որի մեջ կային արհեստավորներ և մանր առևտրականներ։

Անիի պեղումները եկան հաստատելու, որ Հայաստանի քաղաքներն այդ ժամանակաշրջանում կարողացել էին ստեղծել իրենց ներքին փոխանակային բազան և որ դրանց զարգացումը չէր պայմանավորվում միայն տարանցիկ առևտրով։ Արտաքին առևտրին Հայաստանը մասնակցում էր հում նյութով և իր արտադրանքով, որ պատրաստվում էր տեղական արհեստավորության կողմից՝ բավարարելու համար լայն շուկայի պահանջները։ Եթե մենք մատենագրական աղբյուրներում քիչ տեղեկություններ ունենք մասսայական իրերի արտադրության մասին, սակայն բազմաթիվ փաստեր կան նյութական կուլտուրայի մնացորդներից՝ այդ հանգամանքը հաստատելու համար։ Անիի պեղումներից հանած նյութական կուլտուրայի բազմատեսակ նմուշները (կերամիկայի և մետաղյա իրերի) ցույց են տալիս, որ Անին լինելով խոշոր առևտրական քաղաք, ոչ միայն ներմուծել է պարսկական, արաբական (նկ. № № 6,7) և չինական (նկ. № 8) ծագում ունեցող իրեր, այլև ունեցել է իր սեփական արտադրությունը։ Այդ են ապացուցում նյութական կուլտուրայի մնացորդները, վիմական արձանագրություններում հիշատակված արհեստավորական թաղամասերը, մատենագրական աղբյուրներում մատնանշվող պատրաստի արտադրանքների բազմաթիվ տեսակներն ու անունները, դրան պետք է ավելացնել նաև պղնձաձուլարանի* ու աղյուսի գործարանի գոյության փաստը և Անիի խոշոր հյուրանոցը, որ դարեր շարունակ ծառայել է քարավանների կարիքներին։ Ահա այդ է պատճառը, որ մեր մատենագիրների կողմից Անին արժանացել է «տիեզերահռչակ», «շահաստան» և «մեծ քաղաք» կոչումներին։

Միջին Ասիայի և Հայաստանի քաղաքների կառուցվածքի միջև նկատվում է ընդհանուր նմանություն։ Միջին Ասիայի

* Ակադ. Ն. Մառ—«Անվո ավերակները» («Արարատ» ամսագիր, 1911 թ., № 8, էջ 660)։

Նկ. 6. Ներմուծված հախճապակյա ամանների կտորներ, գտնված Անիում։ (Պետ. Պատմ. թանգարան)

Նկ. 7. Հախճապակյա ափսե, բերված Միջագետքից։ (Պետ. Պատմ. թանգարան)



Նկ. 8. Ճենապակյա աման (չինական սելատոն), գտնված Անիում։ (Պետ. Պատմ. թանգարան)

քաղաքներից՝ Բուխարան, Սարայը և ուրիշները, որոնք սկզբում հանդիսանում էին իբրև ֆեոդալական ամրոցներ, ժամանակի ընթացքում վերածվում են խոշոր առևտրա-արհեստավորական կենտրոնների և այդ քաղաքներում, Դվինի ու Անիի նման, շինվում են արհեստավորական ու առևտրական հատուկ թաղամասեր։

Ակադ. Վ. Բարտոլդի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Միջին Ասիայի մեծ քաղաքները բաղկացած են եղել 3 մասից. առաջին մասը նա անվանում է «Քուհենդուզ»—միջնաբերդ, երկրորդը՝ «Շահրիստան», որը համարվում էր բուն պարսպապատ քաղաքն իր մի քանի մուտքերով։ Այնտեղ էին ապրում ազնվականներն իրենց մերձավորներով, իսկ «Ռաբադ»-ը քաղաքի այն մասն էր, որ կից էր պարիսպներին և համարվում էր քաղաքի արվարձանը, որտեղ գտնվում էր նաև շուկան. այդ մասում էին ապրում աշխատավորները և բնակչության ստորին այլ խավերը*։

Հայաստանի քաղաքներից Անին, որը պարիսպների ներսում բռնում էր 175 հեկտար տարածություն, կարող էր բավարարել թե Բագրատունյաց իշխանական առմին, թե պաշտոնյաներին, եկեղեցականներին և թե առևտրա-արհեստավորական դասի մեծ մասին, որն այդտեղ ուներ խանութներ և արհեստանոցներ՝ հատուկ թաղամասերով։

Մեր կարծիքով՝ ավելի ճիշտ կլիներ «Շահրիստանը» համարել քաղաքի այն մասը, ուր գտնվում էին նաև առևտրական և արհեստավորական թաղերը։ Անի քաղաքի կենտրոնական մասում կառուցված մզկիթի վրա եղած արձանագրությունից պարզվում է, որ հատուկ օրենքով նախատեսված էր բամբակի և քաթանի առևտուրը կատարել այդ նույն մզկիթի մոտ։ Միաժամանակ պեղումների ընթացքում պարսպից ներս հայտաբերված խանութների, պղնձաձուլարանի և աղյուսի արհեստանոցի մնացորդների գոյությունը գալիս է կրկին հաստատելու նաև արհեստավորական դասի առկայությունը «Շահրիստանում», սակայն այդ չի բացառում նաև այն, որ «Քուհենդուզից» դուրս, «Շահրիստանում» կային առանձին թաղամասեր ազնվականության և հոգևորականության համար։ Եթե ընդունենք, որ Դվինի և Անիի պարիսպներից ներս եղած այդ ընդարձակ տարածության վրա բնակվում էր միմիայն ազնվականությունը, նշանակում է սկզբունքորեն ժխտած կլինենք այդ քաղաքների գերակշռող դերը առևտրի և արհեստագործության ասպարեզում, նրանց խոշոր առևտրա-արհեստավորական կենտրոն լինելու փաստը, քանի որ քաղաք հասկացողությունը տնտեսական կատեգորիա է, և ազգաբնակության մեծ մասը պետք է լիներ քաղաքային դասը (արհեստավորներ և առևտրականներ) և արտադրության եղանակի մեջ արդյունագործությունը պետք է գերիշխողը լիներ։ Իսկ «Ռաբադում», ինչպես վերը նշեցինք, ապրում էին ռամիկները, այն է՝ վարձու աշխատողները և այն արհեստավորները, որոնք «Շահրիստանում» խանութ բանալու հնարավորություն չունեին, ջրկիրները, փայտհատները, քարտաշները, բեռնակիրները և այլն։ «Ռաբադում» ապրող բնակչության մեջ բավականին մեծ թիվ էին կազմում նաև երկրագործությամբ ու այգեգործությամբ պարապողները, որի փայլուն ապացույցն են հանդիսանում պեղումների ընթացքում բացված հնձանները, մեծ թվով գինու կարասները և առուների հետքերի գոյությունը։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի ամենատիպիկ քաղաքներից Դվինի և Անիի անհրաժեշտ ու հակիրճ նկարագրությունը տալուց հետո, այժմ անցնենք մեր անմիջական թեմային, այն է՝ արհեստների առանձին ճյուղերին։

Մեր ուսումնասիրության ընթացքում առայժմ մեզ հաջողվել է ծանոթանալ 40 տեսակ արհեստների, որոնցով զբաղվել է Հայաստանի արհեստավորությունը։ Դյուրության համար այդ արհեստները ենթարկել ենք որոշ խմբավորման*։

## 1. ՄԵՏԱՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում մետաղագործության ճյուղին պատկանող արհեստների զարգացման համար միշտ էլ եղել է հարուստ բազա, որովհետև Հայկական բարձրավանդակը հարուստ է եղել բազ-

* *В. Бартольд*—Историко-географический обзор Ирана, СПБ, 1903, էջ 8—9 և 29։

* Աշխատության մեջ հիշված արհեստներն ընդհանուր գծով և համառոտակի են այստեղ բերված. մենք արդեն ձեռնարկել ենք այդ արհեստներից յուրաքանչյուրի մասին առանձին ուսումնասիրություն պատրաստել։

մատնսակ մետաղահանքերով։ Դեռևս երկրորդ հազարամյակի սկզբներից (մ. թ. ա.) Հայաստանի բնիկները ծանոթ են եղել մետաղին, մշակել և օգտագործել են այն։ Բնական է, որ միջին դարերում մետաղների մշակումը տեխնիկական տեսակետից ավելի է զարգանում։ Մեր հնագույն պատմագիրները զանազան կապակցությամբ հիշում են Հայաստանում գտնվող տարբեր հանքերի մասին. այսպես՝ Հակոբ Մծբնա հայրապետի մասին հիշվում է, թե նա ճանապարհվելով Ռշտունիքով «Գայր հասանէր ի լիառն երկաթահատացն և կապարահատացն»*, «Երկաթ ելանէր յԱյրարատ նահանգէն». ապա շարունակում է. «Եւ պղինձ ելանէր յԱյրարատ նահանգէն»։

Կիրակոս Գանձակեցին խոսելով մոնղոլական հարկային քաղաքականության մասին և հիշելով, որ երկաթահանքերը և աղահանքերը հարկի տակ են գտնվում, միևնույն ժամանակ ավելացնում է, թե՝ «այլև գծովակս, և զլիճս ձկնորսաց, և զերկաթահանս, զդարբինս... և զամենայն աղահանս առին...»**։

Արաբ պատմիչ Իբն Բատուտայի ճանապարհորդությունից տեղեկանում ենք Երզնկայի պղնձի հանքերի և պղնձե ամանների ու «բայսուզ»-ների (աշտանակների) մասին***։

Վերջին դարերի մատենագիրներից՝ Հակոբ Կարնեցին իր «Նկարագիր Վերին Հայոց» փոքրիկ աշխատության մեջ հետաքրքրքական տեղեկություն է տալիս Գյումուշխանի հանքերի մասին. «Եւ անտի ուղիղ ի կողմն հիւսիսոյ ձորն է Ծանախոյ. ունի գիւղք և փոքր բերդօրայք... եւ ունի քաղաք զԿիւմիւշխանան... եւ բնակիչք սորա հայ և հոռոմք բազում... եւ ելանէ անտի ոսկի եւ արծաթ ընտիր բազում. ելանէ նաև պղինձ, արճիճ եւ երկաթ բազում»****։ Բացի երկաթից և պղնձից՝ թե

* Փ. Բիւզանդ—Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 30։

** Կիրակոս վարդապետի Գանձակեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 349։

*** Իբն Բատուտա, թարգմ. պրոֆ. Ա.ճառյանի, Երևան, 1940, էջ 31։

**** Հ. Կարնեցու հիշյալ հատվածը վերցրել ենք «Հույն պատմիչների վկայությունը հին Հայաստանի ոսկե հանքերի և նրանց տեղի մասին» գրքից, Երևան, 1925 թ., էջ 4։



հայ և թե օտար պատմիչները հիշատակում են նաև ոսկու հանքերի գոյությունը Հայկական բարձրավանդակում։ Հայ պատմագիրներից Ղ. Փարպեցին գրում է ոմն Վրրվ իշխանի ամբաստանության մասին Վահանի դեմ. «... Երթեալ լինէր ամբաստան զՎահանայ առաջի թագաւորին Պերոզի, ասելով, թէ «Ինձ ի գործ ոսկէհատին չեմ ինչ մոտ երթալ. և իւր ժողովեալ զամենայն ոսկի աշխարհին՝ խորհի երթեալ առ կայսր և կամ յաշխարհն Հոնաց, և տուեալ զոսկին՝ կամի խնդրել գունդ եւ ապստամբել»*։

Հույն պատմիչներից Ստրաբոնը և Պլինիոսը հիշում են Սպերի ոսկու հանքերի մասին։ «Ի դրանց Կովկասեանց ընդ լեռինս Կորդուացւոյ Վալլք, Սուարնք ազգք անուանեալիք, բայց բրօղք են հանքաց ոսկւոյ»**։ Ոսկու հանքերի մասին Ստրաբոնի մոտ կա նաև մի ուրիշ տեղեկություն. «Սուսպիրիտիս (Սպերը) երկրի մեջ Կարալլայի մոտ գտնվում էին ոսկու հանքեր, ուր Աղեքսանդր Մեծն ուղարկեց Մենոնին զորքով, սակայն վերջինս տեղացիներից սպանվեց»***։ Այնուհետև պատմիչը խոսելով Խաղտիքի մասին, որ կից էր Սպերին, հիշատակում է, որ վերջինս հարուստ է եղել մետաղահանքերով՝ երկաթով և արծաթով, որ այդտեղ ապրող լեռնցիները չեն զբաղվել երկրագործությամբ, այլ միայն հանքեր են շահագործել****։ Իսկ Պրոկոպիոսը «Պարսկական պատերազմներ» երկի մեջ հիշում է երկու բերդերի անուն՝ Փարանգիոն և Բոլոն*****, որոնց մոտ եղել են ոսկու հանքեր, որոնք շահագործվելիս են եղել հանքերի վրա վերակացու կարգված Սիմեոն անունով մի հայի կողմից******։ Ըստ Ղևոնդ պատմիչի՝ 8-րդ դարի վերջերում Հայաստանում, հավանաբար Սպերում, բացված է եղել արծաթի հանք և օգտագործվել է Աբբասյանների տիրապետության օրով տեղի ունեցած զրամական ճգնաժամի ընթացքում։

* Ղ. Փարպեցի—Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912 թ., էջ 256—257։

** Ինճիճեան—Հնախօսութիւն, Ա. հատոր, Վենետիկ, 1835 թ., էջ 186։

*** Ստրաբոն, գիրք ԺԱ, գլ. ԺԴ, էջ 9։

**** Նույնը, էջ 60։

***** Ըստ Ղ. Փարպեցու՝ Փարանգիոն և Բոլոն բերդերը գտնվել են Բասենում, իսկ ըստ պրոֆ. Ադոնցի՝ այդ հանքերը գտնվում են Սպերում։

****** «Հույն պատմիչների վկայությունը հին Հայաստանի ոսկու հանքերի և նրանց տեղի մասին», էջ 8։

Ինչպես տեսնում ենք վերոհիշյալ մեջբերումներից, Հայաստանում վաղ ժամանակներից շահագործվել են բազմաթիվ հանքեր, որոնք նյութական բազա են ծառայել մետաղագործության զարգացման համար։

1. Դարբնություն։—Դեռ շատ հին ժամանակ դարբնությունը համարվել է ժասսայական և ամենից ավելի տարածված արհեստը պատմական Հայաստանում։ Սկզբնական շրջանում դարբնություն հասկացողության մեջ ամփոփված են եղել մի շարք արհեստներ, դրա համար էլ ընդհանուր առմամբ էին գործածում դարբին կոչումը։ Դարբինները երկաթից, պղնձից պատրաստում էին զանազան տեսակի գործիքներ՝ լինի դա զենք, թե կենցաղային իր, կահ-կարասի, զարդարանք և այլն։

Վիմական արձանագրությունների և հիշատակարանների մեջ բազմիցս հիշվում է դարբնություն արհեստը, հայտնի են նույնիսկ դարբինների անուններ. այսպես՝ 13-րդ դարի նվիրատվական-մի արձանագրության մեջ կարդում ենք. «Ի թուիս ՈԿԲ [1213] ողորմութեամբն... Ես Աբդլմսեհ կրաւնականս Կոնդերս դարբին տուաք զսա երկու զուռն տներն ի սուրբ ուխտս Խծկաւնից...»*։

Մի ձեռագրական հիշատակարան տալիս է դարբնի բնութագիրը և թե ինչպիսի ժրաջան աշխատանք է կատարում նա. «Թուի ՌՀԲ [1223] ամէր աստուած ողորմեսցի ի գաւառապետին Մրվան դարբնի, որ սարուծիկն մեր զուքէր և այլ զինչ տանս պէտք էր անտրտում աշխատէր և ոչ հապաղէր, այլ սրտով խորհրդով գործէր»։ Երևանի Պետական Մատենադարանի № 2743 ձեռագրի (գրված Տարոնում) հիշատակարանի հեղինակ Աստվածատուր գրիչը խոսում է մի շարք արհեստների և ապա Աբրահամ և Սիմեոն դարբինների մասին, որոնք մեծ օժանդակություն են ցույց տվել կաթուղիկեի կառուցմանը։ Վանում գրված № 4185 ձեռագրի հիշատակարաններից մեկում գրիչը մի առ մի թվելով Զորավոր եկեղեցու նվիրատու իշխանների, վաճառականների և արհեստավորների անունները, հիշում է նաև դարբին ու պղնձագործ արհեստավորների անունները և նրանց

* Կ. Կոստանեան—Վիմական տաբեգիր, Պետերբուրգ, 1913, էջ 55։



ձեռքով պատրաստված եկեղեցական պղնձյա անոթներ, խաչեր, սկիհներ և այլ իրեր՝ եկեղեցուն նվիրելու համար։

Երկաթի գործածությունը խոշոր տեղ է բռնել նաև շինարարության մեջ, որի մասին տեղեկություններ կան գրավոր աղբյուրներում։ Այդ մասին ավելի շատ փաստեր են տալիս պեղումների ընթացքում հայտաբերված նյութական մնացորդները։ Մովսես Խորենացին Գառնիի տաճարի շինարարության առթիվ գրում է. «Զայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և կապարով մածուցեալ...»։ Ապա հիշում է նաև Երվանդաշատ բերդի կառուցման ժամանակ պարիսպների մեջ պղնձե դռներ շինելու և երկաթյա սանդուխքներ պատրաստելու մասին*։ Պատմական տեղեկությունների համաձայն՝ մեծ քանակությամբ երկաթ է գործադրվել Գագիկ Արծրունու կառուցված Աղթամարի տաճարի շինարարության վրա։ 10-րդ դարի պատմիչ Թովմա Արծրունու հաղորդած տեղեկությունից երևում է, որ այդ տաճարի վրա գործադրված է եղել երկու հարյուր հազար լիտր երկաթ։ «Եւ քանզի էին ի դրան արքունի գումարեալք արուեստաւորք բազումք արք պատուաւորք ժողովեալք յամենայն ազգաց յերկրէ, որք ոչ վրիպէին առնել զոր խորհէր արքայ, այլ ըստ հրամանին վաղվաղակի և գործն առնոյր զկատարումն՝ ումեմն ի նոցանէ ճարտարապետի առն իմաստնոյ և հանճարեղի հրամայէ թագաւորն շինել տաճար մի քառանկիւն, Ա. [40] կանգնաւ ունելով զչափ լայնութեան և երկայնութեան, նմանապէս և ի բարձրութիւնն որոյ որմոյն լայնութիւնն երիւք մեծաքայլութեամբ չափով ունի զպարզուածն, գունդ անապակ կրոց և քարի, իբրև զհալուածս կապարի և պղնձոյ ընդ միմեանս խառնեալ. և շինուած տաճարին ի հիմանց անտի մինչև ցգլուխ նորին ի թռիչս կազմեալ՝ առանց սեան ունի զհաստատութիւն... պատմեաց մեզ և հաւատարիմ ոստիկան մի ի գործավարաց քաղաքին. եթէ հմուտ ի շինուած տաճարին երկաթ լտերս իբրև ՄՌ. [200,000]. եւ հաւատապէս ճշմարտութեամբ նուազեաց զասելն, քան թէ առատութեամբ յաւելեաց ի բազումս. իսկ և նիստ վառաց տաճարին

* Մ. Խորենացի—Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 161 և 243։

յամենայն կողմանց գաւառին ի մէջ քաղաքին երևի իբրև զմեծ մի բլուր. ոչինչ նուազեալ բարձրութեամբ քան զբարանձաւ ծայր կղզոյն»*:

Հնագիտական հետազոտությունները հաստատել են պատմիչների տվյալների լիակատար ճշտությունը. օրինակ, երկաթյա գամերի և արճիճի մնացորդներ նկատվել են Երևանդաշատի բերդի պարիսպներից ընկած քարերի վրա. նույնպիսի կապեր են հայտնաբերվել և Գառնիի «Տրդատաթախտի» հեթանոսական տաճարի քարերի և Անիի հին պարիսպների մնացորդների վրա: Հետագա դարերում ևս գործադրվել է այս տեխնիկան, որի մնացորդներից պահպանվել են 7-րդ դարի շինքերի՝ Զվարթնոցի պարսպի պատերի և աշտարակի նույն 7-րդ դարին պատկանող Կարմրավոր եկեղեցու տանիքի վրա, որտեղ ծածկի կղմինդրները կապված են եղել երկաթյա կապերով:

Ինչպես տեսնում ենք, դեռևս առաջին դարից սկսած շինարարության մեջ օգտագործվել են երկաթյա գամեր, որոնք պատրաստվում էին դարբին արհեստավորների ձեռքով: Դարբնի աշխատանքի արդյունքն է եղել նաև մեր պատմիչների կողմից շատ հաճախ հիշված «գրունս պղնձիս»** և «երկաթագամ», որոնցից, դժբախտաբար, շատ քիչ են հասել մեզ, այն էլ ուշ միջնադարից, օրինակ՝ Անիի գլխավոր մուտքի և Տաթևի պարիսպի դռները:

10—13-րդ դարերում մետաղագործ որոշ արհեստավորների տրվել է առաջնակարգ տեղ, ելնելով այդ ժամանակաշրջանի հասարակական պահանջներից: Այդ երևույթն իր արտահայտությունն է գտել Մխիթար Գոշի Դատաստանագրքում և նույնիսկ նրա առակների մեջ: Ըստ այդ աղբյուրի, երբ երկաթագործն ու պղնձագործն իրենց վեճը լուծելու համար դիմում են ծերերի ատյանին՝ «եւ նոքա [ծերերը] մեծարգոյ ցուցին զերկաթագործ ասելով, թե հասարակաց օգտակարն պատուական է»***: Նույն

* Թ. Արծրունի—Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 295—296:

** Մ. Խորենացի—Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913 թ., էջ 161 և 243:

*** Մ. Գոշ—Առակք, էջ 134:



հեղինակն իր Դատաստանագրքում ունի առանձին կետ՝ տարբեր արհեստների գնահատման մասին, ուր ասված է, թե «օգտակար արուեստն հողագործութիւնն և դարբնութիւն»— ապա ավելացնում է, որ «առաւել պատուէին երկաթագործ և փայտագործ»:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում արտադրողական ուժերի համեմատաբար ավելի զարգացման հետևանքով, որն սկսվում է Բագրատունիների տիրապետության ժամանակ, մի կողմից՝ գյուղատնտեսության զարգացման, հատկապես բերքատվության բարձրացման համար պահանջվող ավելի ամուր և կատարելագործված գործիքների կարիքը, և մյուս կողմից՝ քաղաքների աճը (ներքին և արտաքին առևտրի զարգացումը), էլ ավելի ուժեղացնում են արհեստագործության մեջ գոյություն ունեցող աշխատանքի բաժանումը և արհեստների մասնագիտացումը:

Արհեստների մասնագիտացման կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում այստեղ առաջ բերել արաբական մի աղբյուր, որը թեև վերաբերում է արաբ ժողովրդի մեջ եղած արհեստներին, սակայն ամենայն հավանականությամբ նույնը պիտի լիներ նաև Հայաստանում:

Երևանի Պետական Մատենադարանի № 695 ձեռագիր ժողվածուի 187 էջում մենք գտնում ենք 1221 թ. արաբերենից հայերեն թարգմանված մի հետաքրքիր գրվածք, որը կապ ունի երազագույցի հետ. սակայն այստեղ կարևորն այն է, որ ցույց է տված, թե ինչ արհեստներ կային այն ժամանակ և ժողովուրդն ինչ կարծիք ուներ այս կամ այն արհեստավորի մասին, և թե ինչ արժեք է ներկայացնում այս կամ այն արհեստը:

«Զինչ արուեստ կայ որ կու բանի. հանց ասեն դարբին տեսանես յերազի մեծ մարդ է, թէ ինքն դարբնութիւն առնէ, գանձ գտանէ. թէ լինի դարբին զմարդու բանն յատեանն կատարէ... գուսանն հանց մարդի լինի որ յայլոց շահ գայ սլհարարն հանց լինի որ օգնական է սառաճն և մազմանն կանայք լինին, լկամարարն ատենահաս մարդ լինի. նետարարն ուղորդախօս մարդ լինի և ուղորդ. թամբարարն երաւարար մարդ լինի, նալպանդն յայլոց լաւարար մարդ լինի: Կողպայքարարն առաջնորդ մարդ լինի, փորէգիկն... պղնձագործն հաւատացեալ մարդ է և

տուրայի այս մնացորդները մանավանդ, ավելի ևս հաստատում են մետաղագործության տարբեր ճյուղերի զարգացած վիճակը միջնադարյան Հայաստանի կենտրոնական քաղաքներում։

2. *Զինագործություն։*—Մետաղների մշակման գործում մեծ տեղ է բռնել զենքեր պատրաստելու արհեստը։ Հայկական բարձրավանդակը դարեր շարունակ եղել է պատերազմական գործողությունների թատերաբեմ արևելյան և արևմտյան խոշոր պետությունների ու նվաճողների համար, նա հանդիսացել է մի կամուրջ, որի վրայով դարեր շարունակ տեղի են ունեցել բազ-



Նկ. 9. Գունձե կաթսա, գտնված Հաղարծինում։

մաթիվ տեղաշարժեր Եվրոպայից և Արևելյան Ասիայի խորքից դեպի Առաջավոր Ասիա և կամ հակառակը. ահա այդ տեղաշարժերը չէին կարող կատարվել լուռ և հանգիստ, այլ կատարվել են զենքով-զրահով և տարբեր ժողովուրդների բախումներով. տիրողները նվաճել են նոր երկրամասեր և ընիկներին իրենց հպատակեցրել։

Ահա Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցած բազմադարյան բախումների ու կռիվների կենդանի վկաներ են հանդի-



սանում նյութական կուլտուրայի այն հարուստ մնացորդները, որոնց մեջ կան բազմատեսակ իրեր և այդ իրերի մեջ զենքերը։

Միջնադարյան Հայաստանն այդ երկարատև կռիվների պայմաններում կատարել է ոչ միայն խաղաղ շինարարություն՝ այլև պաշտպանական նպատակով կատարել է մի շարք կառուցումներ, պարսպապատել է քաղաքներն ու ավանները, շինել է աշտարակներ ու պատվարներ։ Մեր քննարկած ժամանակաշրջանում Հայաստանի նշանավոր կենտրոններն էին հանդիսանում Դվինը, Անին, Մանազկերտը, Արծն և այլն։ Պետք է ասել, որ այդ քաղաքների ամրացումը կատարվել է կառուցման օրից սկսած։



Նկ. 10. Գունձե ջահ, գտնված Անիի պեղումներից։
(Պետ. Պատմ. թանգարան)

Բերդաքաղաքներում զինվորության առկայությունը նպաստում էր ներքին շուկայի է՛լ ավելի լայնացմանը. գյուղացիներն ու արհեստավորները պարտավոր էին իրենց երկրի կայազորներին սննդամթերք, հագուստեղեն և ռազմամթերք մատակարարել ժամանակին։ Վերոհիշյալից երևում է, թե ինչ ասպիճանի անհրաժեշտություն է զգացվել զինագործությունը Հայաստանում զարգացնելու համար։ Բացի դրանից՝ տեղական ազնվականությունը, որպես զինվորական դաս, միշտ էլ մեծ քանակությամբ զենքի

պատվեր էր տալիս զինագործ արհեստավորին։ Ինչպես նշեցինք, Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքական վիճակը, Հայկական բարձրավանդակի աշխարհագրական պայմանները ինքնին թելադրում էին զարգացնել զինագործությունը։

Հնագույն շրջանին վերաբերող հարուստ և արժեքավոր նյութեր ենք ստացել Թովրախկալայի պեղումներից, այնուհետև ակադ. Մառի կողմից կատարված Ռոնակի, Դ. Մորգանի՝ Լոռու—Շեյթանդաղի, Բայերի՝ Ռեդկին-լագերի և Երվանդ Լալայանի՝ Ն. Բայազետի պեղումներից ու Կարմիր-բլուրի պեղումներից։ Կարմիր-բլուրի պեղածոնյութերից մեծ արժեք են ներկայացնում կացին ձուլելու կաղապարները, մեծ վահանը և կապարճը։ Այդտեղ գտնվել են նաև տարբեր տեսակի նետեր, դաշույններ, սուսերներ, սակրեր և այլն։

Վերոհիշյալ զենքերը պատկանում են հնագույն ժամանակաշրջանին, իսկ մեր ուսումնասիրությունը գլխավորապես վե-



Նկ. 11. Գունձե կաթսա, գտնված Անիում։



Նկ. 12. Կողպեք՝ ձիու կերպարանքով, գտնված Անիում (ԺԱ—ԺԳ դ.դ.)(Պետ. Պատմ. թանգարան)

բաբերում է միջնադարին, որը, դժբախտաբար, այդ տեսակետից աղքատ է, սակայն գրավոր աղբյուրները լրացնում են այդ բացը։ Միջնադարին վերաբերող վայրերի ու քաղաքների՝ Դվինի, Անիի, Ամբերդի պեղումները զինագործության վերաբերյալ քիչ արդյունքներ են տվել, իսկ այդ պետք է բացատրել, ըստ իս, հետևյալ պատճառներով. եթե հնագույն հասարակության մեջ սովորություն է եղել մեռելների հետ թաղել իրենց գործածած զենքերն ու զարդերը, միջնադարում այդ սովորությունը վերաց-



վել է։ բացի այդ, ինչպես գիտենք, զենքերը գործածվել են կռիվների ժամանակ՝ ռազմադաշտերում, բայց մինչև օրս այդպիսի վայրերում պեղումներ չեն կատարվել, միայն պեղվել են եկեղեցիներ, ընակելի շենքեր և առանձին թաղամասեր։ Իսկ մյուս պատճառն այն է, որ զենքը լինելով հազվագյուտ գործածվող իր, պահվել է խնամքով և փչանալու դեպքում վերանորոգվել է։ բացի այդ՝ տեղահանման հետ միասին Հայաստանի

Նկ. 13. Կողպեք՝ մարդու կերպարանքով, գտնված Անիում (ԺԱ—ԺԳ դ.դ.)։ (Պետ. Պատմ. թանգարան)



Նկ. 14. Գունձե կողպեք, գտնված Անիում (ԺԱ—ԺԳ դ. դ.)։ (Պետ. Պատմ. թանգարան)

ազգաբնակությունը իր հետ տարել է զենքեր, որ միշտ էլ պետք կգար նրան ինչպիսի միջավայրում էլ որ լիներ նա։

Հայաստանի աշխարհագրական պայմանները, այն է՝ սարահարթերը, հովիտները և լեռների կտրտվածությունը պատճառներից մեկն է, որ Հայաստանում առաջ եկան բազմաթիվ նախարարական տներ, որոնք տնտեսական և ներքին այլ հարցերում վարում էին ինքնուրույն քաղաքականություն։ Միայն պատերազմի պայմաններում, երբ երկրին ընդհանուր վտանգ էր

սպառնում, զորքի ցրվածությունը վերանում էր, և ամեն մի ֆեոդալ իր ունեցած զորամասերով օգնության էր գալիս Արշակունի թագավորին։

Բացի նյութական կուլտուրայի մնացորդներից՝ զինագործության վերաբերյալ հայ պատմիչների մոտ կան բազմաթիվ հիշատակություններ զորավարների ու զինվորների սպառազինման մասին և նույնիսկ մի առ մի հիշատակվում է յուրաքանչյուր զենքի տեսակը և գործածության ձևը։

Ութերորդ դարի պատմիչ Ղևոնդը, խոսելով Արտավազդ Մամիկոնյանի մասին, ի միջի այլոց տեղեկություն է տալիս նաև Դվինում գոյություն ունեցող զինանոցի մասին։

«Եւ սկիզբն բանիս այսորիկ լինէր ի ձեռն Արտաւազդայ որ էր ի տանէ Մամիկոնէից, որոյ երթեալ ի մայրաքաղաքն Դուին, կազմութիւն մեծ առնէր զօրաց իւրոց և ստանայր անդ զէնս և անօթս պատերազմի»*։

Բացի այդ՝ Հայաստանում զորամասերի հետ միշտ տանում էին զինագործ արհեստավորների հատուկ խմբեր, որոնք ճանապարհներին հոգում էին զորքի զինամթերքի կարիքները։ Այդ մասին նույն պատմիչը գրում է. «Հասանէին ի գաւառն Բագրեւանդ գիւղն Արձնի, անդ հարկանէին զբանակս իւրեանց առ եղերք գետոյն որ ընդ նա անցանէ և ընդ նոսա ամենայն արուեստականք և յարդարիչքն զինուց որք պատրաստէին զէնս և անօթս պատերազմի»**։

Զինագործության հնության մասին վկայում են նաև նյութական կուլտուրայի այն բազմաթիվ և հարուստ մնացորդները, որոնք հայտաբերվել են Հայաստանի զանազան վայրերից։

10-րդ դարի պատմիչ Թովմա Արծրունին, խոսելով հայկական բանակի սպառազինության մասին, ի միջի այլոց հիշատակում է պատերազմական գործիքների մի քանի տեսակները։

«Եւ ինքնեանք արկեալ զրահ զանձամբ, սաղաւարտ ի գլուխ եղեալ, բազպանս ի ձեռն արկեալ, զանգապանս ի վերայ բարձիցն պնդեալ, օդ ոտիցն կօշկաձև արուեստաւորեալ, վահան ի թիկունս եղեալ, սուսեր ընդ մէջ ածեալ, նիզակ ի ձեռին ունենալով կապարճս և աղեղունս պատրաստականս զառաջեաւ ի նիւսն ունենալով և զարդս ոսկեզարդս և արծաթազարդս և կամարս ընդ մէջ ածեալ»*։

Նույն զենքերի և տեսակների անունների մասին մենք հիշատակություն ենք գտնում նաև 13-րդ դարի պատմիչ Ստեփաննոս Օրբելյանի մոտ։ Պատմիչը խոսելով Լիպարիտ Օրբելյանի մասին մանրամասն թվում է նրա զենքերը**։

Ինչպես երևում է, եղած զենքերի մեջ անվանական և փունկցիոնալ տեսակետից քիչ փոփոխություն էր կատարվել։ Հնագույն շրջանում գործածված զենքերը իրենց գոյությունը պահպանել են մինչև 14-րդ դարը, միայն տեխնիկապես ավելի մշակված։

Հայաստանի հնագույն զենքերից է եղել նետն ու աղեղը, որը գոյություն է ունեցել շատ հին ժամանակներից սկսած. պեղումներից հանված նյութական կուլտուրայի հարուստ մնացորդները՝ նետ ու աղեղի կողքին, որպես հնագույն և հարվածող մարտական զենքեր, հիշատակվում են պարսատիկները, որոնցով հեռվից թշնամուն հարվածում էին քարերով։ Հովհ. Մամիկոնյանն իր աշխատության մեջ հայտնում է, թե «եւ հարին պարսաքարօք և աղեղամբք հինգհարեւր և քսան այր. պարսաքարամբք և գլոք կոտորեցին այրս երկու հազար և ութ հարիւր»***։ Հայերի վարժ նետաձգության մասին տեղեկություն է տալիս Դիոն Կասիոս****։

Զորրորդ դարում, հայ-պարսկական պատերազմի ժամանակ հայկական զորքը շատ անգամ հաղթանակել է շնորհիվ իր մարտունակության և վարած տակտիկային։ Վասակ Մամիկոնյանի կռիվների մասին խոսելիս Փ. Բյուզանդը թեև խիստ մեծ և առասպելական թվերով է հիշում այս զորքի քանակը, սակայն նա հայտնում է հայ զորքի զենքի տեսակը. «աղեղնաւորք, անվրէպք կորովիք»*****։

Արշակ Բ-ի ժամանակ Վասակ սպարապետի առաջին գործն այն եղավ, որ նա կազմակերպեց ուժեղ բանակ, և այդ բանակի

* Ղեւոնդ պատմիչ—«Պատմութիւն հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 138։
** Նույնը, էջ 148։

* Թ. Արծրունի, Թիֆլիս. 1917, էջ 220—221։
** Ստ. Օրբելեան, էջ 375։
*** Յովհ. Մամիկոնեան—«Պատմութիւն Տարօնոյ», Վենետիկ. 1832 թ., էջ 89։
**** Հ. Մանանդյան—«Տիգրան Բ. և Հռոմ», 1910, էջ 152—153,
***** Փ. Բիւզանդ, էջ 130։

մեջ նիզակավորները զինված էին զրահներով. նրանց հետևակ պաշտպանության հիմնական զրահը եղել է վահանը։ Փ. Բյուզանդն Արշակի և Շապուհի կռիվների մասին խոսելիս հիշատակում է հոռոմական լեգեոնի կողքին նաև հայկական գնդեր։ Ապա պատմիչը նույն գրքում, երբ նկարագրում է Վասակի սպառազինությունը, գրում է. «...և անդ ի յարքունուստ հասանէին բազում սպասաւորք վառեալք սուսերաւորք, նիզակաւորք, վազրաւորք, ասկուաւորք, սունաւորք և սպարակիրք հետևակք»*։ Ապա ավելացնում է. «... եւ Վասակ վաղվաղակի կատարէր զհրամանս թագաւորին. չորեք հարիւր հազար զօր կուռ վառեալք որ ընտիրք և պատերազմողք էին, լի արիութեամբ արուեստաց նահատակեն»։ «Նիզակաւորք, սուսերաւորք»։ Կռվի դաշտում նիզակավորները միշտ էլ առաջին շարքերում են եղել։ «Զի յորժամ հայոց նիզակաւորքն առաջին կարգէին, այսպէս յարձակէին որպէս զվեառն մի բարձր և կամ որպէս զաշտարակ հաստարեստ հզօր և անշարժ»**։

Փ. Բյուզանդի Պատմությունից երևում է, որ Պապ թագավորի ժամանակ Գանձակում և Ատրպատականում մնացել էին 30 հազար սահմանապահ զորքեր՝ «Ընտիր ընտիր նիզակաւոր կուռ վառեալք պատենազէնք և զրահաւոր...», այնուհետև հիշում է, որ Մուշեղ սպարապետը գումարեց «ի մի վայր զօրսն ամենայն Հայոց և էին կուռ վառեալք ինն սուն հազարք ընտիրք նիզակ ի ձեռին, թող զսպարակիրս»***։

Հայ պատմիչները շատ հաճախ նիզակ անվան փոխարեն գործ են ածել «աշտեն» անունը. այս անվան մենք հանդիպում ենք Հովհ. Մամիկոնյանի Պատմության մեջ, երբ նա խոսում է Գայլ Վահանի մասին. «... եւ ինքն առեալ զզօրս իւր արս եւ թէ հարիւր եկն ի Մուշն աւան և երեք հարեւր այր թողեալ յանցս տեղուայդ և երկու հարեւր այր աշտենաւոր թողեալ ի Սանասայի ի ծմակն և ինքն երկու հարեւր այր առեալ ընտիր եկն առ Միհրան»****։ Բացի նիզակից պատմիչները հիշատակում են նաև գեղարդի մասին, որ կատարել է նույն դերը։

* Փ. Բիւզանդ, էջ 130։

** Նույնը, էջ 202։

*** Նույնը, էջ 57։

**** Ղ. Մամիկոնեան—«Պատմութիւն Տարօնոյ», Վենետիկ, 1832, էջ 23։



Մ. Ուռհայեցին, խոսելով Վասակ Պահլավունու քաջագործության մասին, գրում է. «Յայնժամ հասանէր գաղանաբար այրն այն ռումբ եղեալ քաջին [Վասակին] որպեսզի ասցի զնա ի ծայր գեղարդեան իւրոյ»*։

Հայկական զորքի կարևորագույն զենքերից է եղել սուրը, դաշույնը, բացի այդ հատուկենտ հիշատակություններ կան նաև թրի մասին։

Միջնադարյան Հայաստանում սուրը և դաշույնն ամենից շատ տարածված և գործածական զենքերն են եղել։ Եթե նետ ու աղեղով կամ թե նիզակով զինված մարդկանց կարելի է տեսնել պատերազմի դաշտում, սուրն ու դաշույնը, բացի ճակատամարտի անհրաժեշտ զենք լինելուց, միևնույն ժամանակ մշտապես իր վրա է կրել իշխող դասը նաև խաղաղ ժամանակ, նրա անբաժան ընկերն է եղել. զենքի այդ տեսակները պատրաստում էին որաքով, ամենալավ մետաղից և զարդարում էին նուրբ, գեղեցիկ ոսկե և արծաթե զարդերով։

Հայ զինվորները միաժամանակ կարող էին կրել թե սուր և թե թուր. այդ առթիվ Փ. Բյուզանդը գրում է. «Սուսեր ընդ էջ թուր զգուաւոյ, աղեղնակապարձն զմիջոցն»։

5-րդ դարի պատմիչ Եղիշեն Ավարայրի 451 թվի ճակատամարտը նկարագրելիս, հիշատակում է գործածվող զենքերի մի քանի տեսակներ։

«... Եւ ամբոխ աղաղակին երկոցունց կողմանց՝ իբրև ի մէջ ամպոց շփոթելոց՝ ճայթմունս գործէր, և հնչումն ձայնից զբարանձաւս լերանցն շարժէր։ Ի բազմութենէ սաղաւարտից և ի փայլիւն պատենազէն վառելոցն իբրև նշոյլք ճառագայթից արեգական հատանէին։ Նաև ի բազում սուսերացն շողալ, և ի ճօճել բազմախուռն նիզակացն իբրև յերկնուստ ահագին հրաձգութիւնք եռային»**։

Սրի և դաշույնի ամենալավ և ամուր տեսակը, ինչպես ամենուրեք, նույնպես և Հայաստանում, հայ պատմագիրները կոչում են սուսեր, պողովատիկ։

Սեբեոս պատմիչը, երբ բերում է Վահրամի առ Մուշեղ Մամիկոնյան գրած նամակը, հիշում է պողովատիկի, սլաքների

* Ուռհայեցի, էջ 14—15։

** Եղիշէ, էջ 169—170։

մասին. «... այլ վաղիւ, քանզի լինի առ Սասանայ, ցուցանեմ ձեզ փիղս վառս, և ի վերայ՝ զաւրս սպառազինեալս քաջաց, որ տեղասցեն ի վերայ ձեր նետս երկաթեղէնս ձեռաձգութեամբ, և շառաւունս մուխս պողովատիկս՝ սլաքաւք ի հաստաձիգ աղեղանց. արս երիտասարդս հզաւրս սպառազէնս վատնելոց, և երիվարս տաճիկս և երազունս, տապարս և սուսերս մուխս և պողովատիկս և կռուիս՝ որչափ Խոսրովայ և ձեզ պիտոյ իցէ»*։

Երկայրի սրի մասին հիշում է Առղիկը Աբաս Թագավորի վարած կռվի կապակցութեամբ. «... արագապէս զերիվայրն խնդրեալ զզարդ զինուցն զանձամբ առեալ, զերկայրի սուսերն ի ձեռին ունելով, ընթանայր»**։

Հետաքրքիր է Ստ. Օրբելյան պատմիչի հաղորդած տեղեկությունը Լիպարիտ Օրբելյանի զործածած զենքերի մասին։ Նա ասում է.

«... և այնպէս զինեալ զենքն՝ հեծեալ ի տաճիկ երիվարն, և ընկենոյր զոսկին, կար Վահանն ի թիկանսն, և զճաւճ նիզակին յահեակ բազուկն, և զդայն պողովատիկ շմշիրն երկբերանի ի յայլ ձեռինն, և վաղրն ահագին ի ներքոյ բարձիցն իբր զուռն դարբնոց և կամ զսակր կացաւոր քարահատաց...»***։

Ինչպես տեսնում ենք, պատմիչը սրի փոխարեն հիշում է «շմշիր» անունը, որ նա կոչում է «շմշիր երկբերանի»։ Պատմիչի մոտ հիշատակված «շմշիրը» ոչ այլ ինչ է, բայց եթե միջնադարում զործածվող սովորական երկայրի սուրը։

Հայ զինվորի մարտական զենքերից է եղել նաև սակը, վաղը և ճիկը, որոնք պատերազմի դաշտում կատարել են միևնույն դերը. դեռ վաղագույն շրջանից այս զենքերի մասին մենք ունենք բազմաթիվ օրինակներ նյութական կուլտուրայի մնացորդներից, որոնցով հարուստ է եղել Հայկական բարձրավանդակը։

Վերոհիշյալ 3 զենքերի մասին հայ պատմիչների մոտ կան կարևոր հիշատակություններ. նրանք սակրի հետ միասին բազմիցս հիշատակում են վաղրի և ճիկոի մասին, բայց պետք է

* Սեբէոս,—«Պատմութիւն ի Հերակլն», Ս. Պետերբուրգ, 1879, էջ 38։
** Ստ. Տարօնացի, «Պատմութիւն տիեզերական», Գ. գիրք, գլ. 7, էջ 172։
*** Ստ. Օրբելեան, էջ 375։



ասել, որ մեր պատմիչները բավականացել են միայն անունների հիշատակությամբ և անտեսել են տալ նրանց ձևերի միջև եղած տարբերությունը։

Սակրը՝ դա տապարի ձևով շինված գործիք է, մի բերանով կամ թե երկբերանի, կորացած կեռով, որի համար մեր պատմիչները անվանել են կացավոր սակր, իսկ վաղրը նման է սակրին և մոտավորապես լայն զաշույնի նմանությամբ, որ նույնպես գործ է ածվել ջախջախելու, հարվածելու համար։

Հայ պատմիչներից Փ. Բյուզանդը խոսելով հայ-պարսկական պատերազմների մասին, հիշատակում է, թե ինչպես Վասակն իր զորքերը կարգի է բերում ըստ նրանց զինվածության, «եւ նա վաղվաղակի կատարէր զհրամանս Թագաւորին։ չորեք հարիւր հազար զօր կուռ վառեալք, որ ընտիրք և պատերազմողք էին, լի արութեամբ արուեստաց նահատակուեան։ Նիզակաւորք, սուսերաւորք, աղեղնաւորք անվրէպք կորովիք, վաղրաւորք, սակրաւորք, որք ոչ գիտէին զերկեւղ զանգիտելոյ յարանց յախոյանց»*։

Փ. Բյուզանդն առանձնացնում է վաղրավորներին և սակրավորներին իբրև առանձին գնդեր։

Հ. Դրասխանակերտցու տված տեղեկություններից երևում է, թե ինչպես վաղրավորները հարվածում և կտրում էին հակառակորդի զրահները։ «Իսկ յելանել արուսեկին փայլատակունք ի մերկապատեան վաղակաւորացն բազմութենէ հարանէին և ի սաղաւարտացն և ի թիկնապահ և ի լանջապահ պղնձի տախտակացն և ի պահպանակացն բարձիցն և բազկացն»**։ Թ. Արծրունին հիշատակում է «ազգ ազգ ունէին վաղերք և վակուրք, սուսերք, տապար, և այլն»։ Իսկ Օրբելյանը հիշում է «... զվաղրն ահագին ի ներքոյ բարձիցն իբր զուռն դարբնաց և կամ զսակը կացաւոր քարահատաց՝ անցեալ ի մէջ ռազմաւոր հանդիսին»***։ Իսկ ճիկոի մասին մեզ տեղեկություն է տալիս Մ. Ուռհայեցին. «Յայնժամ Ապլղարիպն պողովատի ճիկոովն հարկանէր երկաթի

* Փ. Բիւզանդ, էջ 130։
** Յովհ. Դրասխանակերտցի—«Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 312։
*** Ստ. Օրբելեան, 375։

դուռն քաղաքին և պատառեալ զերկաթն և յայն անցուցանէր*։

Բացի մատենագրական տեղեկություններից՝ մեր մատնանշած շրջանի զենքերի վերաբերյալ մենք ունենք ձեռագրերում պահված զենքերի մանրանկարները, որոնք թեև ըստ նկարչի ժամանակի ավելի ուշ շրջանի են, բայց զենքերի տեսակները հին շրջաններին են վերաբերում և, ինչպես մատնանշել ենք, նրանք երկար ժամանակամիջոցում այնքան էլ փոփոխության չէին ենթարկվում։ Ավելորդ չի լինի այստեղ հիշատակել 15-րդ դարի ձեռագրի մի նմուշ, որ վերաբերում է Ավարայրի ճակատամարտի մի տեսարանի։ Նկարչի ստեղծագործած այդ պատկերով մենք հնարավորություն ունենք գաղափար կազմելու միջնադարյան Հայաստանի մարտերում գործածված մի քանի զենքերի տեսակների մասին։ Ձեռագիր նկարի մի կողմում կանգնած է պարսկական բանակը՝ փղերով պաշտպանված, իսկ մյուս կողմում՝ փղերին նետահարում են աղեղնավորները չոքած դիրքով, որ կարողանան փղին վնասել նրա կաշվի ավելի բարակ տեղից։

Հետաքրքրական բարձրաքանդակներ են փորագրված երեք քարե կտորների** վրա. առաջին քարի վրա 14-րդ դարի իշխան Ամիր Հասանն է ձիու վրա լարված աղեղով. երկրորդ քարի վրա նետի ձևը, իսկ երրորդի վրա փորագրված է որսի կենդանին, նետը պարանոցի մեջ խրված։ Ամիր Հասանն իր դիրքին վայել երկար զգեստով է պատկերացված։ Ամիր Հասանի գերեզմանը գտնվում է Վայոց ձորում։ Նույն գավառումն է գտնված նույնպես մի այլ մատնաձան, որը պատկանում է պարոն Ավագենայս քարի վրա քանդակված իշխանը պատկերվում է որսի տեսարանով, ուր նա աղեղով հարվածում է որսին։ Շատ կարևոր արժեք է ներկայացնում նաև 12-րդ դարից մնացած Մուշի Առաքելոց վանքի դռան վրայի քանդակը, որը ռազմական մի տեսարան է ցույց տալիս. այստեղ պարզ երևում են միջնադարում գործածված նետ ու աղեղը, սուրը, երկար նիզակը և վահանը։ Փայտի այդ դռան վրա քանդակող վարպետը մեծ արվեստագետ

* Մ. Ուռհայեցի, «Ժամանակագրություն», Վաղարշապատ, 1898, էջ 33։

** Բարձրաքանդակ այդ քարերը ներկայումս գտնվում են Երևանի Պատմական թանգարանում։



է եղել, նա կարողացել է բավական նուրբ գծերով տալ զենքերի ձևերը և այլ մանրամասնությունները։ Քարի և փայտի վրա պահված այդ քանդակները որոշ գաղափար են տալիս միջնադարյան Հայաստանի մարտական զենքերի մասին (նկ.նկ. №№ 15, 16, 17)։

Զրահ.—Միջնադարյան Հայաստանի հայկական զորքի անձնական պաշտպանության միջոցներից մեկը հանդիսանում էր նրա զրահը։ Պաշտպանական հագուստների մասին մենք տեղեկություն ունենք դեռևս Հերոդոտի ժամանակվանից։

Նկ. 15. Մանրանկար. Ավարայրի ճակատամարտից (ԺԵ դար).

Հայ պատմիչները սպառազինված հայ զորքին անվանել են «զրահաւորք», «զրահապատք», «զրահավարք», «պատենազէնք», «շերտաւորք» և այլն։

Զրահը պատրաստում էին, բացի մետաղից, նաև կաշուց, վուշից կամ հատուկ մագից, որը գլխավորապես պաշտպանում էր զինվորի մարմինը այրվելուց. մետաղից պատրաստված զրահները իրենց գործածքով տարբեր տեսակի էին լինում, ինչպես օրինակ՝ հյուսվածքաձև, օղակաձև, շերտաձև, շատ հաճախ մե-



Նկ. 16. Մանրանկար. Մուշեղ Մամիկոնյանի երթը դեպի պատերազմ (ԺԵ դար)։

տաղյա հագուստի որոշ մասը կաշվով մեացած կամ հյուսված էր լինում։

10-րդ դարի պատմիչ Թ. Արծրունու մոտ գտնում ենք հիշատակություն բրդե զգեստների մասին, որով զինվորները պաշտպանվում էին հրդեհից։

Նկ. 17. Բարձրաքանդակ քարի վրա. Ամիր Հասանը որսի ժամանակ (ԺԴ դար)։ (Պետ. Պատմ. թանգարան)

«Եւ որք մերձ առ պարսպօքն զճակատ վառէին և զմարտանն գրգռէին՝ զգեստն ինքեանց յասուէից կազմեալ, զոր ի զօրութիւն թիկանց ուժոյ բազկաց ճնշեալ և մածուցեալ ընդ միմեանս՝ զնրբութիւն մաղոյն թաղ կոչեցին, զոր ի ջուր եղեալ՝ ծծէ

իրբև զսպունդ, զայն զինեալ ի վերայ անձանց սատակացուցանեն զպատերազմն, աներկիւղ մնալով ի հրոյն տոչորմանէ»*:

Մ. Խորենացին խոսելով Բելի և Հայկի կռիվների մասին գրում է.

«Եւ տախտակս պղնձիս լանջաց»**: Նույն գրքի 230 էջում խոսելով Տրդատի մասին, հիշում է.«... եւ ինքն վառեալ վերստ պահպանկօք, ուր ոչգծէին նետք»,***: Խորենացու մոտ հիշատակված «տախտակս պղնձիս թիկանց և լանջաց» համապատասխանում է վարսպանակին: Լանջանոցը մեր պատմիչները անվանել են նաև ճաւշ:

Ն. Շնորհալին «Ողբ Եդեսիոյ» գրվածքի մեջ պատմելով Զանգի Ամիրայի զորքերի հարձակումը Եդեսիայի վրա, ի միջի այլոց ասում է. «զրահաւորք, մըկնդաւորք, ճաշիւք, պատեալ՝ բոլոր անձին...»****: «Եւ ձիս և ջորիս և ուղտս անհամարս, և վրան ջոշան, և այլ սլեհ որ ոչ գոյ թիւ, և ոչխար բազում. լցաւ քաղաքն Անի ամենայն հարբստութեամբ... մինչև զընտիր ջոշանն երկու դանկ ծախէին»*****: Այս քաղվածքներն արդեն ցույց են տալիս, որ պատերազմի ժամանակ լանջանոցներ պատրաստում էին կաշվից կամ հատապատասխան կտորից:

Խորենացին խոսելով Ձիրավ դաշտի ճակատամարտի մասին, հիշում է, որ ոչ միայն հույները, այլև հայերը մարմնի պաշտպանության համար հագնում էին կաշուց պատրաստած պահպանակ:

«Ի կաշնայ պահպանակաց զգեստում զկարծրութեան վիմաց բերէին երևոյթ»:

Զրահի կարևոր մասերիցն է վահանը, որով պաշտպանվում էն զինվորի գլուխն ու դեմքը: Այդ առթիվ մեր պատմիչներից Փ. Բյուզանդը գրում է.

«Յորժամ տարածանէին ինչ զորքն Պարսից զզօրսն Յունաց և կամ զգունդ Նիզակաւորացն Հայոց, և լեգէոն վահանաւորացն Յունաց կամ ի սպարակէրն Հայոց իրբև ի բերդ մտեալ հանդ-

* Թ. Արծրունի, էջ 220:
** Մ. Խորենացի, էջ 39,
*** Նույնը, էջ 230:
**** Ն. Շնորհալի—«Ողբ Եդեսիոյ», 1829, էջ 34:
***** Մ. Ուռհայեցի, էջ 426:



չէին»*, կամ թե՝ «Զի յորժամ Հայոց նիզակաւորքն առաջի կարգէին, այսպէս յարձակէին որպէս զլեառն մի բարձր և կամ որպէս զաշտարակ մի հաստաբեստ հզօր և անշարժ, և յորժամ մեք զնոսա սակաւ մի շարժէաք, նոքա ի լեգէոն Հոռոմոց ապաստան լինէին և նոցա զվահանափակսն բացեալ զնոսա իրբև ի քաղաքորմ պարսպաւոր ամրացեալ ընդունէին»**: Ապա մի քանի էջ հետո ավելացնում է, թե իբր Դղակ իշխանին, իրբև դավաճան, բերում են այն դահլիճը, ուր Արշակ թագավորն էր, այն ժամանակ սակրավորները սպարներով ծածկում են միջանցքի վրա բացված անցքերը: «Իսկ յորժամ մուծին ի փող տանցն յորում արքայն էր, և էր փողն ընդ երկար, բազում երդս լուսիջոյցս էր թողեալ, և տանէին զնա ընդ այն, կայր շուրջ սպարակիրն փակեալ սակրաւորքն, և զերդս ամենայն լուսոյն ծածկէին: Ապա մտեալ շուրջ զնովաւ ի տեղւոջն ձգձգէին զնա սպարակիրքն»***: Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ սպարը հոմանիշ է վահանին, այս անունը նույնությամբ պահպանվել է և ուրիշ ժողովուրդների մոտ. պարսիկների մոտ կոչվում է իսպար, իսկ քրդերը, հայերի նման, անվանել են սպար: Վահանով ոչ միայն պաշտպանվում էր անհատապես ամեն մի զինվոր իր վրա հարձակվող թշնամուց, այլև ճակատում: Թշնամու ընդհանուր հարձակման դեպքում վահանավորները խիտ շարքերով շղթա էին կազմում թշնամու դեմ և իրենց վահանները ծառայեցնում իրբև մի տեսակ պատվար:

Սաղավարտը նույնպես համարվում է զրահի կարևոր մասերից մեկը, որով պաշտպանվում էր մարտիկի գլուխը և պարանոցը հետևի կողմից: Սաղավարտի գործածությունը շատ հին է. հայ պատմիչները բազմիցս հիշում են սաղավարտների և նույնիսկ նրանց վրա եղած նշանների մասին: Իշխանների և զորավարների սաղավարտները տարբերվում էին սովորական զինվորի սաղավարտից, ունենալով իրենց հատուկ տոհմական նշանները, ինչպես օրինակ՝ Մամիկոնյան Մանվելի գլխի սաղավարտն ունեցել է տոհմական նշան՝ աքծիվը: Բացի այդ՝ Փավստոս Բյուզանդը հիշում է Մեհրուժանի մասին. որպեսզի նա անճանաչելի

* Փ. Բյուզանդ, էջ 201:
** Նույնը, էջ 202:
*** Նույնը, էջ 204:

լինի և չտարբերվի մյուս զինվորներից, իր անձի ապահովության տեսակետից նա իր սաղավարտի վրա կռվի ժամանակ նշան չէր կրում։

Ս. Օրբելյանը Բաբեկ Սյունու սաղավարտի մասին գրում է. «Երկաթագամ և բեռապինդ սաղաւարտիւն զահեղակերպ գլուխն և զճակատն պղնձեայ և տախտակամա յօրինուածով ամրացուցանէր»։ Ապա ավելացնում է. «Վագրակերպեան սաղաւարտաւն զգեղեցիկն գլուխ»*։ Իսկ Վարդան պատմիչը, խոսելով վրաց Վախտանգ Թագավորի մասին, հիշում է, որ նրա սաղավարտի առաջին մասում նկարված էր գայլի պատկեր, իսկ ետևում՝ առյուծի**։

Միջնադարյան Հայաստանում տեղի ունեցած պատերազմներում բացի թված զենքերից, բերդերի և քաղաքների պարիսպները խորտակելու համար գործադրել են հատուկ մեքենաներ, որոնց պատմիչները անվանել են էշ, փիլիկուան և բաբան։ Միջնադարում քաղաքների պաշտպանության միակ միջոցը հանդիսանում էր պարսպապատումը։ Դարեր շարունակ Հայաստանը ենթակա է եղել արտաքին թշնամիների հաճախակի հարձակումներին, ուստի խիստ անհրաժեշտություն էր զգացվում քաղաքների պաշտպանության միջոցները ուժեղացնել։ Հայաստանի գլխավոր քաղաքները գրեթե բոլորն էլ պարսպապատված են եղել, ինչպես՝ Տիգրանակերտը, Վաղարշապատը, Կարինը (Էրզրումը), Մանազկերտը, Կարսը, Դվինը և, վերջապես, Անին, որոնք անընդհատ ենթակա են եղել պարսիկների, արաբների, սելջուկների և մոնղոլների հարվածներին։ Կային նաև մի շարք ամրոցներ, որոնք կռիվների ժամանակ խաղացել են խոշոր պաշտպանական դեր։ Այդ ամրոցներից աչքի էին ընկնում Արտագերսը, Կապույտ և Երնջակի բերդերը և այլն։ Այդ մեքենաների մի տեսակի մասին տեղեկություններ է տալիս Մ. Խորենացին. «Յեցուցին ի պարիսպն զի կողեցեալ էշն եւ է այս գործին մեքենայից անուաւոր յերից երից արանց մղելով տարեալ և ի ներքուստ կացնօք և սակրօք երկբերանովք և կոցաւոր մրճօք փորեալ զհիմունս»***։

* Ատ. Օրբելեան, էջ 38—39։

** Վ. Վարդապետ, էջ 97։

*** Խորենացի, էջ 28։



Ինչպես երևում է, այս մեքենան անվավոր է եղել և ներսի կողմից ունեցել է կացնի և մուրճի ձևի գործիքներ, որոնց միջոցով քանդում էին պարիսպի հիմքերը։ Այդ մեքենան դնկավարում էին երեք մարդ, որոնք հրելով մոտեցնում էին պարիսպին։ Այդ մեքենան անվանվում էր նաև խոյ, որ ուներ վերջինիս նմանություն։ Հեթում պատմիչը, խոսելով Հուլաուի արշավանքների մասին, այդ քանդող մեքենաների շարքում թվում է նաև ուրիշ մեքենաներ՝ տարբեր անվանակոչումով։ «Հուլաւոն անվեհեր ի վերայ յարձակեցաւ հանդերձ ստորերկրեայ անցիւք եւ մեքենայիւք որ իշավայրի կոչին . . . . . եւ ի մէջ ինն աւուրց էառ զայն»*։

Բացի քանդող մեքենաներից, քաղաքների նվաճման համար գործադրվել են նաև քար նետող մեքենաներ, որոնք կոչվում էին փիլիկուան և բաբան։ Չնայած այս երկու մեքենաները կատարել են միևնույն դերը, սակայն նրանց միջև կար ևս որոշ տարբերություն—մեկն ավելի խոշոր քարեր նետելու համար էր, մյուսը՝ փոքր։ Այսպես՝ Լաստիվերցին խոսելով Մանազկերտ քաղաքի պաշարման մասին, հիշում է թե բաբանը և թե փիլիկուանը. սակայն պատմիչի նկարագրությունից երևում է, որ բաբանը ավելի ահռելի է եղել, որովհետև բաբանի նետած քարի քաշը, ըստ պատմիչի, հասնում է 60 լիտրի։

«Յետ այսորիկ մեքենայս կանգնեալ, այնու պատերազմէին։ Իսկ երէց ոմն 'ի մերոցս հնագոյն ունելով զաւուրս, որ յոյժ տեղեակ էր արուեստին, և սա, իւր կանգնեալ փիլիկուանն. և լինէր յորժամ նոքա քար եղեալ 'ի պարսատիկս մեքենային և ձգէին 'ի քաղաքն, երէցն զիւր քարն դէպ ուղիղ նոցա քարին արձակէր, որպէս զի դիպեալ քար երիցուն 'ի քար անօրինացն, ի վերայ իւրեանց ընկենոյր։ Զայս արարեալ անօրինացն եօթն անգամ, ոչինչ կարացին վճարել. քանզի զօրացաւ քարն երիցուն ի վերայ քարի նոցա»**։

Վերոհիշյալ փաստից երևում է, որ թշնամու մեքենայի դեմ պաշարված բնակչության կողմից հնարվել է մի այնպիսի մեքենա, որով հնարավոր է եղել հակահարվածել փիլիկուանը և

* Հեթում պատմիչ, Վենետիկ, 1842 թ., էջ 47։

** Լաստիվերցի—Պատմութիւն, Թիֆլիս, 1912, էջ 102—103։

քաղաքի պաշտպանությունն ապահովել։ Սելջուկները հանդիպելով դժվարությունների՝ ստիպված են լինում կռվում գործադրել բարան կոչվող մեքենան, որ համեմատաբար ավելի մեծ եղած պետք է լինի։ Այս մեքենաները, ինչպես սելջուկների արշավանքների ժամանակ, այնպես էլ մոնղոլների ժամանակ իրենց դերը պահպանել են։ 13-րդ դարի պատմիչ Կ. Գանձակեցին հիշում է այդ մեքենայի մասին Կարինի և Գանձակի գրավման կապակցությամբ*։

Բարան մեքենայի մասին Լաստիվերտցին գրում է. «...Ապա այլ պատերազմական գործի պատրաստեալ, զոր ինքեանք բարան կոչէին, որ յոյժ անագին էր, զոր ասէին թէ չորս հարիւր սպասաւորք էին նորա, որք զպարանսն քարշէին, և վաթսուն լիտր քար եդեալ ի պարսատիկն՝ 'ի քաղաքն ձգէին. և առաջի նորա պարիսպ կանգնեցին 'ի բամբակի բեռանց և յայլ բաղում կարասւոյ, զի մի քար երիցուն հասցէ 'ի նա։ Եւ իբրև զայս այսպէս յարդարեցին, արձակեցին քար մի, որ դիպեալ 'ի պարիսպն ուժգնակի, փլոյց և խոռեաց զնա»**։

Սակայն թշնամու ուրախությունը երկար չի տևում. ինչպես պատմիչն է նկարագրում, պաշարվածների մեջ հնարագետ մեկը նավթից և ծծումբից պատրաստում է բռնկվող խառնուրդ և լցնում ապակե սրվակի մեջ. ապա նա ձիարշավ մոտենում է բարան գործիքին, ձեռքի շիշը շպրտում է նրա վրա և այրում։ Այդ նույն միջոցառումների մասին հիշում է նաև Մատթեոս Ուռհայեցին***։

Միջնադարյան պատերազմներում, բացի վերոհիշյալ մեքենաներից, գործադրել են նաև գաղային նյութեր, որոնց մասին հատուկենտ տեղեկություններ ենք գտնում պատմիչների մոտ։

Սեբեոս պատմիչը, խոսելով պարսկա-բյուզանդական կռիվների մասին, մեքենաների թվում հիշում է նաև հուր ցանող գործիքի մասին։ Նրա Պատմությունից երևում է, որ հրա-

* Կ. Գանձակեցի, էջ 222, 264։

** Ս. Լաստիվերտցի, էջ 103։

*** Մ. Ուռհայեցի, էջ 243։



ցան նշանակում է հուր ձգող գործիք, որը գործադրվում էր հատկապես նավերի վրա։

«Զի էր կազմեալ ի վերայ նաւացն մանգղիոնս, և մեքենայս հրացանս, և մեքենայս քարընկէցս, աղեղնաւորս և պարսաւորս զի յորժամ հասանիցեն ի պարիսպ քաղաքին»*։

Հրաձգությունը Թ. Արծրունու մոտ ավելի հասկանալի է դառնում, երբ նա տալիս է Նիկ ամրոցի վրա հարձակվելու նկարագիրը։ Արաբական Բուղա զորավարն իր կորովի աղեղնավորներով և հեծյալներով սկսում է հարձակումը Թոռնավան գավառի Նիկ ամրոցի վրա։ Պատմագիրն այստեղ հիշում է թշնամու զորքերի բոլոր տեսակի զենքերը։

«Եւ ինքն իսկ գլխովին զօրավարն Բուղայ, հեծեալ յերիվարն, պնդեալ զինքն զինու ի պատերազմ ընդդէմ իշխանին, և զկորովին աղեղնաւորացն Ելիմացւոցն և զընտիրս հեծելոց նոցա ընդ ինքեան վառեալ և ճակատի։ Եւ զայլս ազգի ազգի զինուորք ունէին վազերք և վակուրք, սուսերք և սուինք, տապարք և վիրգահանք, մեքենայք և ռմբաքարք, վահանք և նիզակք». և ապա հրաձգության մասին ասում է. «Այլ հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին, և զլոյնծ ընութիւնս յանօթս ապակեղէնս եդեալ, և մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայիցս, և զհուրն առ ընթեր նմին, հնարաւորեալ արկանել զամրոցանն»**։

Վերոհիշյալ քաղվածքներից երևում է, որ հրաձգության համար գործ էին ածվում այրող հեղուկներ։ Հրաձգությունից և ռումբերից պաշտպանվելու համար զրահավորվում էին անկիզելի հագուստներով։ Բացի այդ՝ պարիսպները և շենքերը ծածկում էին հատուկ կաշիներով՝ շենքերը հրդեհից պաշտպանելու համար։

Հայկական բարձրավանդակը դարեր շարունակ ենթակա լինելով օտարերկրյա զավթիչների հարձակումներին և ավերածություններին, նախ անցնելով հռոմայեցիների, պարսիկների, արաբների ձեռքը, ապա ոտնակոխ է եղել սելջուկ-թուրքերի, մոնղոլների ու Լենկթեմուրի հրոսակախմբերի կողմից, որոնք անխնա կերպով ավարի ու թալանի են մատնել կարևոր քա-

* Սեբէոս, էջ 236։

** Թ. Արծրունի, էջ 132։

գաղթներն ու գյուղերը։ Եվ ահա այս բոլոր ժամանակաշրջանում հայ ժողովուրդը զինված պայքարել է իր երկրի անկախության համար։ Այդ դաժան կռիվներում հայ ժողովուրդը ցուցաբերել է անսահման նվիրվածություն, տոկունություն և չտեսնված հերոսություն։ Թշնամու դեմ կռվելու և երկրի պաշտպանությունն ուժեղացնելու համար, անշուշտ, պետք է որ առաջնակարգ տեղ գրավեր զենագործության արհեստը, քանի որ Հայաստանը հում նյութի լայն հնարավորություններ ուներ։ Հայ արհեստավորները ոչ միայն պատրաստել են մարտական զենքեր, այլ նաև զբաղվել են պաշտպանության միջոցառումներով, այն է՝ տարբեր տեսակի զրահներ շինելու գործով, բացի այդ՝ երկարատև կռիվները հարկադրել են հայ արհեստավորին պատրաստել նաև պարիսպներ քանդող մեքենաներ, որոնք շատ դեպքերում իրենց տեխնիկայով գերազանցել են եկվորների կողմից գործադրված մեքենաներին։

*Ոսկերչություն եվ արծաթագործություն.*—Ոսկերչությունն ու արծաթագործությունը, որ պատկանում է մետաղագործության ճյուղին, նույնպես որոշ չափով զարգացած է եղել Հայաստանում դեռևս խալդական իշխանության ժամանակ, որի կենտրոնը հանդիսանում էր Վան քաղաքը։ Ի դեպ, մինչև վերջերս էլ Վանի ոսկերիչները համարվում էին այդ արհեստի ամենալավ վարպետները։

Չնայած այդ հին շրջանի մասին գրավոր փաստեր չկան, սակայն նյութական կուլտուրայի հարուստ մնացորդները, որոնք դուրս են եկել Հայաստանի տարբեր շրջաններից՝ Սևանի, Ն. Բայազետի, Մարտունու, Արթիկի, Կիրովականի և Ալավերդու դամբարանների պեղումներից, ինչպես նաև Թոփրախկալայի և վերջերս նաև Կարմիր բլուրից, ցույց են տալիս ոսկերչության և արծաթագործության արհեստի զարգացման բարձր աստիճանը Հայաստանում։

Դեռևս մեր թվականությունից շատ առաջ, առաջին հազարամյակին վերագրվող պեղածո զարդերի մեջ կան ոսկյա և արծաթյա մատանիներ, զանազան ձևի ուլունքներ, ականջի գնդեր, ապարանջաններ, քորոցներ, արծաթյա կախիչներ և այլ իրեր, որոնք իրենց որակով հանդիսանում են բարձր արվեստի գործեր։



Հայ պատմիչների երկերում կան բազմաթիվ հիշատակություններ ոսկյա և արծաթյա զարդերի վերաբերյալ, երբ նրանք պատմում են թագավորների, իշխանների, պալատականների նիստ ու կացի մասին։ Ֆեոդալիզմի վերելքի և ծաղկման շրջանում, երբ այդ պալատականներն ու իշխանները վարում էին ցոփ ու շռայլ կյանք, նրանց համար պատրաստվում էին ազնիվ մետաղներից իրեր, զարդեր ու զենքեր։ Ոսկերիչների ձեռքով էին պատրաստվում ականակուռ թագերը, խույրերը, գոտիները, իշխանական սեղանի արծաթյա բաժակներն ու ափսեները, ինչպես նաև զարդարվում էին սրերը, դաշույնները և այլն։ Ժամանակակից պատմիչ Ա. Լաստիվերացին իր Պատմության մեջ պերճանքի արտաքինն «անբարտաւանութիւն» է անվանում՝ «Կարի առաւել կանանց ազգի», որոնք կրում էին թանկագին գինդեր, մատանիներ, ապարանջաններ, մանյակներ և գոտիներ։

10—13-րդ դարերում հրապարակ եկած զարգացած առևտրական դասի ներկայացուցիչները ևս անժամն չէին կարող մնալ այդ թանկարժեք մետաղներից պատրաստվող զարդարանքներից ու իրերից։ Նրանցից ամենահարուստները նույնիսկ կաշխատեին մրցել ֆեոդալների հետ։ Հետևաբար Հայաստանի ոսկերիչ-արհեստավորները պետք է բավարարեին նաև այդ ուներ, քաղաքային նոր դասի պահանջները։ Այդ պերճանքի առարկաներից բաժին էր ընկնում նաև հոգևոր բարձր դասին ու եկեղեցուն, որոնց համար արհեստավորները պատրաստում էին սկիհներ, խաչեր, ավետարանի արծաթապատ և ոսկեպատ տուփեր և այլն, չհաշված խալիֆայությանը և բյուզանդական կայսրությանը տրվող թանկարժեք իրերը։ Ուստի այս արհեստը ևս ուներ ոչ միայն ներքին, այլև արտաքին լայն շուկա։ 10-րդ դարի պատմիչ Թովմա Արծրունին ոսկերչության մասին ասում է. «Եւ հրամայեաց ածել ոսկերիչ և նորոգեալ նորացոյց զանյաղթ փայտ խաչին Քրիստոսին»*։ Նույն գլխում Արծրունին հիշում է. «Արուեստագործեալ ճարտարապետի ումեմն հիւսնեալ, եւ արծաթագործ եօթն փորձեան հրաբորբոք ճարտարապետն ի բովս հալոցացն զուտ և վճիտ արծաթ ընտրելով, արծաթեզինեալն գիպայտեղէնն պատեալ արտաքուստ....»**։

* Թ. Արծրունի, էջ 393։

** Նույնը, էջ 392։

Կիրակոս Գանձակեցին խոսելով մոնղոլների արշավանքների պատճառով թաքցված իրերը փնտրելու մասին, հիշատակում է նաև թե ազնիվ և թե հասարակ մետաղներից պատրաստված իրեր. «Ապա յաժենայն գաւառաց շրջեցան ի վերայ նորա առ ի բերել և յորոնել զինչսն և զանօթն, և զոտանէին բազում ինչս ի նմա ոսկւոյ և արծաթոյ, պղնձոյ և երկաթոյ, և այլ պէս պէս հանդերձից, որ թագուցեալ էին ի դարանս և ի գետնափորս»*։

Ոսկերչության և արծաթագործության մասին հիշատակություններ կան Գոշի Դատաստանագրքում և Առակներում. «Ի թագաւորելն ոսկի խնդրէր երկրպագութիւն յաժենայն նիւթոց, և թագաւոր զանձն կոչէր, զի պատկեր եղև թագաւորի. և նովաւ անբարտաւանէր գործողն ևս ի վերայ արծաթագործաց և այլոց»**։

Էջմիածնի № 1033 ձեռագրի արծաթյա ոսկեջրած տուփի վրա աշխատել է ոսկերիչ Գրիգորը***։ Երևանի Ձեռագրատան № 274 ձեռագրի հիշատակարանում մի շարք արհեստավորների թվում անվանական հիշվում են Ալեքսանդր և Սադաղին ոսկերիչները, որոնք նվեր են տվել Տարոնի ս. Կաթուղիկեի կառուցման գործին։ Այնուհետև բազմիցս հիշատակվում են և այլ ոսկերիչների անուններ։ Վանում գրված մի ձեռագրի վերջին մասում հիշատակվում են բազմաթիվ նվիրատուների անուններ, այդ թվում նաև ոսկերիչ Թումէն և Ավետիքը, որոնք ս. Զորավոր եկեղեցուն նվիրել են արծաթե փուլաքներով սաղավարտ, խաչ և այլ իրեր։ Իսկ № 5540 ձեռագրում, որ գրված է Մոքսում, հիշատակվում է Հովհաննես ոսկերիչը։

Արհեստավորները հին անոթներից ու իրերից ձուլում էին նոր իրեր։ Այդ մասին կարդում ենք. «Ամենայն ոսկեգործ մանրէ զհին անօթ ապա ձուլէ հալացօք. կաւագործք և ոսկէգործք զբեկեալ անօթ վերստին ստեղծանին»։ Մի ուրիշ տեղում՝ «Հրոյ զօրութիւն, է զանպիտան աղան խառեալ ընդ ոսկւոյն... սրբել և յառաջին պայծառութիւն ածել ի ձեռն արուեստի ոսկեգործաց» (Հայկազյան բառարանից)։

* Կ. Գանձակեցի, էջ 223։
** Մխիթար Գոշ—«Առակք», էջ 134—135։
*** Գ. Եպ. Հովսեփյան—«Գրչության արվեստը», էջ 43.



Ոսկերչական արվեստի գեղեցիկ նմուշ կարելի է համարել Դվինում գտնված ոսկյա խաչը, որն ամբողջովին տեղական հայ արհեստագետի գործ է և վերագրվում է 7—8-րդ դ. դ։ Խաչի թևերի եզրերով մանր գնդակիկներ են, իսկ թևերի ծայրերին գնդակիկները քիչ ավելի մեծ։ Խաչի թևերի մեջ ամրացված է երեք ոսկյա թելերով հյուսված, ճիշտ նման Դվինում գտնված քարե խոյակների քանդակներին։ Տեղական ոսկերչի գործ է նաև 1939 թ. Դվինի պեղումների ժամանակ գտնված ոսկյա մանյակը՝ իր նուրբ գործվածքով և ապարանջանը։ Անից դուրս եկած արծաթյա գավաթները և խաչը միջնադարյան ոսկերիչների



Նկ. 18. Ոսկե խաչ, գտնված Դվինում. Է դար։
(Պետ. Պատմ. թանգարան)

պատրաստած լավագույն նմուշներից են։ Շատերից այստեղ բերված միայն այս մի քանի փաստերը պարզ վկայում են 9—13-րդ դարերում ոսկերչության և արծաթագործության արհեստների զարգացումը Հայաստանում (նկ. նկ. № 18, 19, 20)։

Նկ. 19. Ոսկե մանյակ, գտնված Դվինում. ԺԱ—ԺԴ դար։
(Պետ. Պատմ. թանգարան)



Նկ. 20. Ապարանջաններ, գտնված Դվինում. ԺԱ—ԺԴ դ. դ։
(Պետ. Պատմ. թանգարան)



## II. ՄԱՆԱԾԱԴՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում բազմաթիվ արհեստների մեջ նշանավոր տեղ է բռնել հյուսվածքեղեն պատրաստելու արհեստը։ Գյուղացին, իր հիմնական աշխատանքին զուգընթաց, զբաղվել է նաև տնայնագործությամբ, հատկապես ջուլհակությամբ։ Ինչպես մյուս արհեստների, այնպես էլ հյուսվածքեղենի և այդ գործով զբաղվող առանձին արհեստավորների մասին շատ քիչ տեղեկություններ կան մեր մատենագրական աղբյուրներում, չնայած որ բավական հիշատակություններ են պահպանվել այդ արհեստավորների արտադրանքի մասին։

Հայաստանը համեմատաբար ավելի հարուստ բաղա էր ներկայացնում հյուսվածքեղենի մանագործական աշխատանքների համար։ Հայաստանի կլիմայի բազմազանությունը նպաստում էր կուլտուրական բույսերի աճեցմանը, իսկ լեռնային մասերը հարուստ էին արոտատեղերով, ուր առատ սնունդ էին գտնում հարյուր հազարավոր անասուններ, որոնցից ստացվում էր մեծ քանակությամբ բուրդ։ Հայ գյուղացիությունը և ընակչության ստորին խավը, արհեստավորությունը՝ իրենց ամբողջ զգեստը և տան փռվածքը իրենք էին պատրաստում տեղական նյութերից։ Հյուսվածքեղենի համար գործ էին ածում ոչ միայն բուրդ, այլև բուսական թելեր։

Հինգերորդ դարի պատմիչ Ղազար Փարպեցին գովասանքով է խոսում Արարատյան դաշտի բերքատվության և հարուստ բուսականության մասին։ «Եւ խորհելով զայս ամենայն Արշակ թագաւորն ի միտս իւր՝ լքեալ մերժեալ թողոյր զբարի և զընիկ ժառանգութիւն նախնեաց իւրոց, զդաւառն Այրարատու, զհոյակապն և զհոչակաւորն և զականաւորն և զամենաբոյսն, զամենաբուղխն, զամենալին, զամենագիւտն ի շահս և ի զարմանս մարդկային պիտոյիցս կենաց և վայելչութեան և սթափութեան, զդաշտս մեծատարածս և որսալից. զվերինս շուրջանակի գեղեցկանիստ և պարարտաբուս,... անկարօտ ոռոգման արբուցանելով զդաշտս՝ ժատակարարէ անբաւ բազմութեամբ յոստանն, կանամբք, արտամբք, և ընտանեօք, զանպակասութիւն հացի և գինւոյ, զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն և զզա-

նազանումն իւրարուղիս սերմանցն»*։ Մխիթար Գոշն իր առակներից մեկում ցույց է տալիս, թե ինչպես օգտի տեսակետից ելնելով՝ արժեքավորվում է այս կամ այն թուփը կամ ծառը. նա հանդես է բերում բաժբակենու և սոսու վեճը. «Մերձ առ սաւսի առոգանէին երկրագործք զբամբակենիսն, և միմեանց պատուիրէին զգուշանալ, զի մի ղծառս կոխեսցեն զբամբակենիս. և լուեալ սաւսոյն զչարացաւ՝ կոչելով զնա ծառ. ասաց՝ թէ զիարդ ինձ համանուն կոչի դա ծառ, զի ես այսքան ստուար և բարձր եմ, և զրաղում տեղիս ըմբռնեալ ունիմ։ Եւ լու ի լու ոչ զանգիտեալ՝ պատասխանեալ բամբակենի ասելով։ Բարձր ես և ստուար, սակայն անօգուտ. ոչ ի շինուած և ոչ ի պտուղ և ոչ ի յայրումն գովելի. այլ թանձր ունելով ստուեր, յորմէ բամբասիս մանավանդ՝ քան թէ գովիս. իսկ ես թէպէտ փանաքի և տկար, այլ բազմաշահ. ոչ միայն մեծատանց՝ այլ և աղքատաց, ի տածել ի քաղել ի գործել և լինիմ հանդերձ որպէս զասը յոչխարաց և զվուշ ի կտաւէ և զմետաքս յորդանց...»**։

Այս առակից երևում է, որ բամբակեղենի գործվածքը համատարած էր, նրանից օգտվում էին ամեն դասի մարդիկ։

Մարկո Պոլոն իր «Ճանապարհորդության» մեջ գրում է, որ Մուշի և Մերգինի շրջաններում արտադրվում էր մեծ քանակությամբ բամբակ, որից պատրաստում էին բեհեղներ և ուրիշ կտորներ։

Այս փաստերն ինքնին արդեն գալիս են հաստատելու, որ Հայաստանի միջնաշխարհում, շնորհիվ կլիմայական պայմանների, դեռևս շատ հնուց, հացահատիկային բույսերից բացի, գյուղացիությունը զբաղվել է նաև կուլտուրական բույսերի մշակումով և շերամապահությամբ. իսկ այդ նյութերի առկայությունը վկայում է ձանձագործ արհեստավորների գոյությունը և նրանց աշխատանքի բնույթը։

Մանվածքեղենի զարգացման համար խոշոր նշանակություն ունի նաև ներկը, իսկ Հայաստանը հարուստ էր ամենալավ ներկերով և այդ արհեստով զբաղվողների թիվը բավական մեծ պետք է եղած լիներ։ Դեռ շատ հին ժամանակներից Հայաստանը նշանավոր է եղել բազմատեսակ բնական ներկերով, որոնց մասին հիշում են թե հայ և թե օտար պատմիչները։ Հնում ներկերի մեծ մասը պատրաստվել է բույսերից և հանքային նյութերից. հույն պատմիչներից Ստրաբոնը մի շարք ներկերի հետ հիշատակում է ֆիրմիզը, որի կենտրոնը համարվել է Արարատյան դաշտավայրը, հատկապես Արտաշատը։ Արաբ պատմագիր Ալ-Իստահրին և Բալաձորին ևս հիշում են «քիրմիզն», երբ խոսում են Դվինի մասին և նույնիսկ ցույց են տալիս, թե ինչպես էին տեղական բնակիչները այդ միջատից ստանում որդան կարմիր գույնը։ Այս արժեքավոր ներկի՝ «որդան կարմիրի» մասին տեղեկություն է տալիս հայ պատմիչներից Ղ. Փարպեցին, երբ նկարագրում է Արարատյան դաշտը։

«Նաև զարժատս եղէգնասէր բուսոցն ոչ ընդունայն սնուցանէ յինքեան ամենաբազմ դաշտն Այրարատոյ, այլև ի նմանէ ծնեալ որդունս ի զարդ կարմրատեսիլ գունոց, ընծայէ օգտասիրացն շահս և շքեղութիւնս»*։

Տասներեքերորդ դարի հայ պատմիչներից Կիրակոս Գանձակեցին խոսելով հարկահավաքման մասին, հայտնում է. «...զամենայն արուեստագէտս, եթէ ի քաղաքս և եթէ ի գիւղս, զամենայն ի հարկի կացուցին։ Այլ և զծովակս, և զլիճս ձկնորսաց, և զերկաթահանս, զդարբինս, և զշալարարս, և զի պիտոյ է մանրամասնաբար ասել, զամենայն զուռն շահից և հատից ի մարդկանէ»**։ Իսկ շալարարներն այն արհեստավորներն էին, որոնք զբաղվում էին հատկապես կերպասներ և բրդե կտորեղեններ ներկելով։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում մանվածքային գործը հասել էր իր զարգացման բարձր աստիճանին։ Ֆեոդալիզմի վերելքի շրջանում իշխանական բարձր խավի շռայլ ու զեղխ կյանքը մի կողմից, քաղաքային դասի հանդես գալը մյուս կողմից՝ պահանջ էր առաջացրել, որպեսզի մանվածքային գործն է՛լ ավելի զարգանա և արտադրի ավելի նուրբ բազմատեսակ կտորեղեններ, իսկ դրա համար, ինչպես վերը նշեցինք, Հայաստանը հում նյութի և ներկի լայն բազա ուներ։ Միաժա-

* Ղ. Փարպեցի, Թիֆլիս, 1908 թ., էջ 19—20։
** Մ. Գոշ—«Առակք», Վենետիկ, 1842, էջ 20։

* Ղ. Փարպեցի, էջ 21։
** Կ. Գանձակեցի, էջ 349։

ժանակ արհեստավորը պետք է բավարարեր նաև զորքի կարիքները, չհաշված այն, որ այդ նույն արհեստավորի աշխատանքի արդյունքից, որպես պարգև, ուղարկվում էր և արաբական խալիֆայությանը, և՛ բյուզանդական կայսրությանը։

Հայաստանի հյուսվածքեղենի կենտրոն հանդիսացող քաղաքներից դեռևս 7-րդ դարից աչքի ընկնող տեղ էր գրավում Դվինը։ Արաբ աշխարհագրագետ Ալ-Իստահրին Դվինի մեծության և նրա սեփական արտադրության մասին հետևյալ տեղեկություններն է տալիս. «Դվինը մեծ է Արտաբիլից, այդ քաղաքը հանդիսանում է Հայաստանի մայրաքաղաքը և նրա մեջ կառավարչի պալատն է գտնվում, որը նման է Բարդայում եղած Առանի կառավարչի պալատին և Ադրբեջանի կառավարչի պալատին, որ Արտաբիլումն է։ Դվինի շուրջը կա պարիսպ (շատ բարձր և զարմանալի), այստեղ կան շատ քրիստոնյաներ և քաղաքի մայր մզկիթը եկեղեցու կողքին է։ Այս քաղաքում արտադրվում են բրդե հագուստներ և գորգեր, բարձեր, բազմոցներ, դայթաններ և հայկական արտադրության այլ իրեր։ Նրանց մոտն էլ հենց ձեռք է բերվում «քիրմիզ» կոչված ներկը, որով և ներկում են մահուդը։ Ես իմացա, որ դա որդ է, իր շուրջը գործում է շերամի պես և, նրանից բացի՝ ես իմացա, որ այնտեղ էլ հենց արտադրվում են շատ մետաքսյա կտորներ»*։ Ալ-Իստահրու այս վկայությունը պարզ պատկերացում է տալիս Դվին քաղաքի մանվածքային արդյունագործության մասին։ Դվինից և Անիից բացի՝ Հայաստանի քաղաքներից հայտնի էր նաև Երզնկան, որտեղ նույնպես պատրաստում էին ամենանուրբ կտորներ։ Մարկո Պոլոն իր «Ճանապարհորդության» մեջ Երզնկայի մասին գրում է. «Այս մի մեծ երկիր է։ Սկսվում է մի քաղաքից, որ կոչվում է Արզինգա, ուր հյուսում են աշխարհի լավագույն բեհեղները...։ Երկրի ժողովուրդը հայեր են»**։

Երզնկայի գործվածքների մասին արաբ ճանապարհորդներից Իբն-Բատուտան ևս հետևյալն է հաղորդում. «Արզանջանի քնակիչների մեծագույն մասը հայ է, մուսուլմանները խոսում

* Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск двадцать девятый, Тифлис, 1901 г., ст. 19.

** «Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության», Ուղեգրություններ, հ. Ա., Երևան, 1932, էջ 48։



են թուրքերեն, այնտեղ կան լավ կարգավորված շուկաներ, այստեղ շինում են գեղեցիկ կերպասներ, որոնք կրում են նույն քաղաքի անունը»*։ Երզնկան հայտնի էր ոչ միայն որպես գործվածքեղենի կենտրոն, այլև որպես մեծ վաճառաշահ քաղաք, որի մասին Կլավիխոն իր աշխատության 138 էջում գրում է. «Այս քաղաքը կառուցված էր Եփրատի մոտ, քաղաքն ուներ շատ ժողովուրդ և զեղեցիկ փողոցներ և նրբանցքներ, խանութները շատ հարուստ էին, կատարվում էր մեծ առևտուր. այստեղ ապրում էին մեծ քանակությամբ քրիստոնյա հայեր և հույներ»։

Տասերորդ դարի պատմիչ Մ. Կաղանկատվացին հիշում է բեհեղի և կտավի գործվածքների մասին, ասելով. «...եւ թագաւորական հանդերձիւք պատեալ զնշխարս նոցա բազում խնկօք և անուշահոտ ծաղկօք հանդերձ դնէր ի դեպպակի զոր զշիկակարմիր մորթով կազմեալ և սպիտակ կտաւով ի վերայ յարմարեալ»**։

Կիրակոս Գանձակեցին գրում է, թե ինչպես Արճեշի մեծատուններից մեկն իր որդու մահից հետո իր ունեցած և վարձու տված կուղպակներից (խանութներից) ստացած գումարով գնում է մորթի և կտավ, պատրաստում է մեծ քանակությամբ հագուստեղեն և բաշխում աղքատներին***։

Եվրոպացի ճանապարհորդ Ռուբրուքը հանդիպում է մի վանականի, որը կտավագործությամբ է պարապում և, դժգոհ լինելով նրանից, հայտնում է, թե «մի պիր անգամ չի ճանաչում, և արհեստով կտավագործ է»****։

Կտավագործության արհեստը հատկապես ավելի շատ էր տարածված Հայաստանում, որովհետև հասարակության ստորին և միջին խավերի համար դա կենցաղային առաջնակարգ կարիքներից էր բխում, իսկ կտավի հումքը բավական առատ էր մեր երկրում։

Մխիթար Գոշն իր առակներում մի շարք արհեստավորների թվում հիշում է նաև բեհեղագործի ու ղերձակի մասին, որոնցից ամեն մեկը պարծենում էր իր արհեստով և ձգտում էր նրա գերազանցությունը ցույց տալ։ «Արքային Սողոմոնի հանդերձ

* Իբն-Բատուտա, թարգմ. պրոֆ. Ա.Հակոբյանի, 1940 թ., Երևան, էջ 30։

** Մ. Կաղանկատվացի, Թիֆլիս, 1912 թ., էջ 77։

*** Կ. Գանձակեցի, էջ 173։

**** Ուղեգրություններ, Ա. մաս, էջ 8։

ումն կարէր՝ արուեստիւ սքանչելի, և յոյժ ուրախացեալ պանծայր. բեհեզագործն ընդդէմ զիւրն յարգէ արուեստ։ Եւ լուեալ արքայի կոչեաց զնոսա և ընտրեաց ի մէջ նոցա, թէ անկազմ է կտաւ առանց կարողի. սակայն զո՞ կարէ արուեստիւն, եթէ չիցէ արարեալ կտաւ»*։

Բացի կտավից՝ բավական հարուստ տեղեկություններ ունենք ավելի նուրբ գործվածքների՝ բեհեզների և մետաքսյա կտորների վերաբերյալ։ Հովհաննես Դրասխանակերտցին բերում է մի շարք վկայություններ ամենանուրբ գործվածքների մասին, որ մեծ մասամբ հայերի ձեռքով էին պատրաստվում բարձր խավի համար. «Եւ իբրև հարց և փորձ ընդ նոցա լեալ և գրեթէ զկէս տէրութեանն իւրոյ տայ նոցա խոստանայր, այլև բազում զգեստս և զարդս ոսկեճամուկս, և ծիրանիս և երևելի լակոնացի և բեհեզս նոցա մատուցանէր, և կամարս եւ մանեակս ոսկեղէնս»**։

Բավական հիշատակություններ կան մատենագիրների մոտ բեհեզյա կտորների մասին։ Մովսես Կաղանկատվացին գրում է. «Մետաքսաձէզ և ոսկեհիւսակ զգեստս»։ Մ. Փոշը ձիթենու և թթենու վերաբերյալ առակի միջոցով բացատրում է, թե ինչից էին պատրաստվում կերպասները և ում համար էին նրանք գործածվում. թթենին պարծենում է ձիթենու առաջ նրանով՝ «զի սաղարթ իւր նիւթ է մետաքսայ. զոր որդունք ծնանին, յորմէ կերպասք լինին, զոր թագաւորք և իշխանք վայելեն»***։

Հովհ. Դրասխանակերտցին գրելով հայոց Սմբատ թագավորի կողմից Յուսուֆին տրված պարգևների մասին, ի միջի այլոց հիշում է և «երևելի զարդս հանդերձանաց»։

«...Իսկ արքայի խրախ լեալ ի բարեձիր պարգևս նորա՝ և ընկալեալ մեծաւ շնորհակալութեամբ, ոչ սակաւ ինչ քան թէ բազմամասնաբար յիւրմէն, ևս նմա ընծայէր բարեվայելուչ և չքնաղատես և երևելի զարդս հանդերձանաց, և նկարակերտ կազմուածս բազմականաց կարմրութեամբ որդանց»****։ Նույն պատմիչը, թվելով երկրորդ անգամ նույն Սմբատ Ա կողմից Ատրպատականի Յուսուֆ ոստիկանին ուղարկած նվերները, հիշում է

* Մխիթար Գոշ—«Առակք», էջ 133—134։
** Յովհ. Դրասխանակերտցի, էջ 252։
*** Մ. Գոշ—«Առակք», էջ 14։
**** Յ. Դրասխանակերտցի, էջ 198։



և մետաքսե նկարազարդ գործվածքների մասին։ «Իսկ այդ իբրև բացաւ պատրուակն՝ զեկուցաւ մեզ մոմոումն և սպառնութիւնն վայրագն գազանի հագարացւոյն, ըստ բարոյականի կամեցողի արքային Սմբատայ և այլոց ևս նախարարացն սաղրելոյ, զէմ եղեալ ևս տարաղէմ գնացի ի Պարսս Ատրպատականի առ ոստիկանն դառնացող ընծայիւք և պատարագօք բազմօք յարքունի թանգարանաց երևելի ոսկեճամուկ զգեստուք և նկարակերտ կանանց ոստայնանկութեանց բազում բազմականս կազմեալ»*։

Մետաքսյա կտորեղենն ըստ երևույթին եղել է բավական առատ և մատչելի նույնիսկ միջին խավին։ Ստ. Տարոնացին Սմբատ Ա-ի և նրա հոր՝ Աշոտի թագավորության առաջին շրջանի մասին խոսելով, հայտնում է, թե ինչպես խաղաղ էր հայ ժողովուրդը և ինչ ունևոր կյանք էր վարում. «Եւ այսպէս աւգարակաց աւանացեալ և աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ և ընչեղութեամբ, մինչեւ հովուաց անդէ որդաց մետաքսեայս զգենուլ պատմուճան»*։ Ինչքան էլ չափազանցրած լինի պատմիչը, բայց փաստ է, որ մետաքսը համեմատաբար լայն գործածության նյութ է հանդիսացել այդ շրջանում։ Իրավոր հիշատակություններից բացի՝ պեղումներից դուրս եկած նյութական կուլտուրայի հազվագյուտ մնացորդներն ևս ապացուցում են մետաքսեղենի զարգացումը Հայաստանում։ 1908 թ. Ն. Մառի ղեկավարությամբ Անիում կատարված պեղումների ժամանակ մի շարք իրերի հետ միասին Տիգրան Հոնենցի տոհմային դամբարանից հանված է նաև մի երեխայի նուրբ մետաքսյա հագուստ բանվածքով և ոսկեթել հյուսվածքներով, որը համարվում է Տիգրան Հոնենցի ազգականներից մեկի երեխայի հագուստը***։

Երևանի Պետ. Մատենադարանի 13-րդ դարի ձեռագրերից մեկում բազմաթիվ արհեստների հետ միասին հիշատակվում է նաև «դերձակություն և հալավարություն»****։ Մանածագործության մասին բավական առատ փաստեր են տալիս ձեռագրերի կազմերի ներսի կողմից ծածկված աստառները։ Բազմատեսակ ծաղկազարդերով հարուստ մետաքսյա և կտավե այդ աստառ-

* Յովհ. Դրասխանակերտցի, էջ 210։
** Ստ. Տարոնացի, էջ 161։
*** Ակադ. Հ. Օրբելի—«Անվա ավերակները», էջ 46։
**** Երևանի Մատենադարան, ձեռագիր № 695, էջ 218։

Նկ. 21. Մանկական մետաքսյա շոր, գտնված Անիում. ԺԴ դար։ (Պետ. Պատմ. թանգարան)

ները թե գեղեցիկ տեսք են տալիս ձեռագրին և թե նպաստում են նրա պահպանելուն։ Այդ գործվածքների մի մասը պատրաստված է ձեռագիրը գրած թվին և նույն երկրամասում։ Այս կտորների ուսումնասիրությունը հնարավորություն կտա մեզ պարզելու տվյալ շրջանի ժանվածքային արդյունաբերությունը և արտադրած կտորների տեսակները։

Կարևոր ենք համարում այստեղ հիշատակել Երևանի Պետ. Մատենադարանի 12—15-րդ դարերի մի քանի ձեռագրեր, որոնց կազմի ներսի աստառն աչքի է ընկնում իր հյուսվածքով և ծաղկազարդերով։ Այսպես՝ 12-րդ դարում գրված № 5554 ձեռագրի կազմի ներսը ծածկված է մետաքսյա կտորով, որը զարդարված է կապույտ ու սպիտակավուն նախշերով։ 13-րդ դարի № 5555 ձեռագրի կազմի աստառը ևս գեղին կերպաս է և ձեռագրին ժամանակակից։ № 6263 ձեռագրի աստառը, որը նույնպես մետաքսյա գեղեցիկ կտոր է, իր գործվածքով և ոճով պատկանում է 13-րդ դարին և ժամանակակից է ձեռագրին։ № № 5559,5563, 5591 և 5569 ձեռագրերի աստառները նույնքան հին են, որքան ձեռագրերը և պատկանում են 12—14-րդ դարերին։



Նկ. 22. Ձեռագրի կազմի ներսի կազմի դաճաղարդ կտորի նմուշ. ԺԲ—ԺԴ դդ։ (Մատենադարան)



Նկ. 23. Ձեռագրի կազմի ներսի կազմի կտորի նմուշ ԺԲ—ԺԴ դդ։ (Մատենադարան)

Բայց Հայաստանում ամենից ավելի շատ տարածված էր գորգագործությունը, որը պետք է բավարարեր թե տեղական

պանդիները և թե արտահանվեր արտաքին շուկաներն իբրև վաճառքի առարկաներ։ Արաբ պատմիչների տեղեկությամբ հայերը հարկի դիմաց խալիֆայությանը տալիս էին նաև գորգեր։

Թե ինչ արժեք էին ներկայացնում հայկական գորգերը և մինչև ուր կարող էր տարածված լինել նրանց համբավը, այդ մասին վկայում է 11-րդ դարում ապրող Աբուլ Փազ Բեհակի պատմագիրը. սրա վկայությամբ, երբ 1034 թ. Խորասանի շրջանի Ղազնեվյան կառավարիչ (Սահեբ-դիվան) Աբուլ Փազլ Սուրի Մուիզը Նյուշապուրից գնում է Ղազնեվյան սուլթան Մասուդիին տեսության, նա 500 բեռ թանգարժեք նվերներ է տանում նրա համար. այդ թանկարժեք նվերների թվում հիշվում են նաև հայկական գորգեր, որ ապացույց է, թե հայկական գորգերը հռչակված էին իրենց որակով*։

Ակադ. Բարտոլդն իր մի աշխատության մեջ հիշում է, թե Ղազնևյան սուլթան Մահմուդի Կաշկարի Կադր խանին ուղարկված ընծաների թվում կային նաև հայկական գորգեր։

Մարկո Պոլոն նկարագրելով Կոնիան, Սավասը և Կազարիան, հիացմունքով է խոսում այնտեղի գորգագործության մասին. «Մյուս երկու դասակարգերն են հայերն ու հույները, որոնք առաջինների հետ խառն ապրում են քաղաքներում և գյուղերում, զբաղվելով առևտրով և արհեստներով։ Նրանք հյուսում են աշխարհի ամենանուրբ և ամենագեղեցիկ գորգերը և նույնպես մեծ քանակությամբ մետաքս, որդան կարմիր և ուրիշ գույներով, և առատությամբ ուրիշ կտորեղեններ»**։

Հյուսվածքեղենի արտադրության հետ է կապված նաև ասեղնագործությունը, որը եղել է կանանց զբաղմունքը։ Նրանց նուրբ ձեռագործներով զարդարվել են իշխանական հագուստները, եպիսկոպոսների խույրերը, եկեղեցական վարագույրները և այլն։ Այդ առթիվ Կիրակոս Գանձակեցին գրում է, թե այդ ձեռնարկության օգնել են իշխաններ Դավիթ ու Սադունի եղբայրները և «նաև քոյր նոցա Արզու Խաթուն, կին Վաղթանկայ Հաթերքեցւոյ, սա բազում ինչ օժանդակ եղև. արար և վարագոյր գեղեցիկ՝ դստերօք իւրովք՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մազոյ այծից կակղազունաց, ներկեալ պէսպէս և զանազան, գործ քանդակակերպ և նկարեալ պատկերօք, ճշգրտագոյն հանուածովք տնօրիկանօք փրկչին և այլ սրբոց, որ հիացուցաներ զտեսողսն։ Եւ որք տեսանէին, օրհնութիւն տային Աստուծոյ, որ եղ կանանց իմաստութիւն ոստայնանկութեան և հանճար նկարակերտութեան»...*։

Ասեղնագործության արհեստն իր արտահայտությունն է գտել միջնադարյան գուսանական երգերում։

«Մի կենար դու խամ լաթերով,
Գնա աբերշում հագիր,
Որ նախշած է ոսկի թելերով»**։

## III. ԿԱՎԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Արհեստագործական արտադրության հնագույն ճյուղը Հայաստանում եղել է կավագործությունը։ Այս արհեստը գոյություն է ունեցել դեռևս տոհմային հասարակության կարգերում։ Կավագործությամբ, նրա նախնական ատիճանում, զբաղվել է կինը, որն աշխատելով տնտեսության մեջ, միաժամանակ պատրաստել է իրենց անմիջական կարիքների համար նաև կավե անոթներ։ Սակայն հետագայում, դրդի (բրուտի չարխը) հանդես գալուց հետո, այդ արհեստն անջատվում է տնտեսությունից և սկսվում է նրա մասնագիտացումը. այդ արհեստով արդեն զբաղվում էին տղամարդիկ՝ տնտեսությունից դուրս հատուկ արհեստանոցում։

Պղնձե անոթների գործածությունն այնքան տարածված չէր նույնիսկ Ուրարտական շրջանում և առօրյա գործածության համար բոլոր ամանեղենները պատրաստվում էին կավից։ Անթիվ կավե ամանների հնագույն նմուշներ գտնված են Սովետական Հայաստանի տարբեր շրջանների (գլխավորապես Սևանի, Ն. Բայազետի, Մարտունու, Կիրովականի, Ալավերդու, Վաղարշապատի և այլն) դամբարաններում։ Այդ դամբարաններից հայտաբերվել են զանազան մեծության և տարբեր նպատակների ծառայող անոթներ, որոնց մեջ գերակշռում են դրդի վրա շինվածները։

* Материалы по истории Туркмен и Туркмении, т. I. ст. 238.
** «Ուղեգրություններ», Երևան, 1932, հ. Ա., էջ 40։

* Կ. Գանձակեցի, էջ 203։
** Բաշակ Նահապետ, Դիվան ժե։

Կավագործությունն այդ ժամանակ արդեն հասել էր զարգացման աստիճանին։ Այդ ամանները միմյանցից տարբերվում են ոչ միայն իրենց ձևով ու մեծությամբ, այլև զարդաքանդակներով։ Նրանց ամենապարզ ստորակետաձև գծերը, ոլորաձուլյա նաշխերը, եռանկյունաձև դուրս ցցված և այլ օրնամենտները, անշուշտ, կատարվել են ձեռքով՝ նուրբ գործիքի օգնությամբ։

Պաշտամունքային նշանակություն ունեցող կավեղեն իրերը և անուշահոտ յուղերի համար գործածված հիանալի ամանները հաճախ արտաքուստ զարդարված են լինում ծակոտիներով կամ թե այդ ծակոտիների մեջ լցված է լինում տարբեր գույնի կավ՝ ամանին դեղեցկություն տալու համար։ Ամաններից բացի՝ հնում կավից պատրաստում էին զարդարանքներ, որոնցից հիշատակության արժանի են գունավոր և մեծ մասամբ սպիտակ կավից պատրաստված ուլունքները, որոնց վրա շատ հաճախ հանդիպում են մի քանի գույներ։

Չնայած 10 — 13-րդ դ.դ. պղնձագործությունը հասել էր բարձր աստիճանի, սակայն կավագործությունը դեռևս շարունակում էր պահպանել իր արժանի տեղը, որովհետև գործածության անոթների մեծագույն մասը պատրաստվում էր կավից։

Կերամիկայի ամենահարուստ մնացորդներ գտնված են Անիի, Դվինի և Ամբերդի պեղումների ընթացքում. այդ մնացորդների մեջ աչքի են ընկնում հախճապակյա ամանների կտորները՝ իրենց բազմերանգ նկարներով և նույնիսկ ուռուցիկ ու ներս ընկած օրնամենտներով։ Այդ ամանների մեծագույն մասը պատրաստվում էր տեղում. հախճապակյա ամանների նկարազարդման և օրնամենտներով գծագրելու արվեստը իր ժամանակին հասել էր բարձր կատարելագործման։ Անիից և Դվինից դուրս եկած հախճապակյա ամանների մի մասի վրա կան նույնիսկ մարդկային դեմքերի և բույսերի բարձրաքանդակներ։ Կասկածից վեր է, որ այդ երկու կենտրոններում գործադրվել է միևնույն տեխնիկան, որովհետև դեմքերի, ծաղիկների և գույների միջև պարզ նկատվում է ընդհանուր նմանություն։

Կավագործական արտադրանքի մասնագետ Բ. Ա. Շելկովնիկովի կարծիքով՝ «Հայաստանում 10—11-րդ դարերում, անոթի վրա գունազարդ կերամիկայի հետ մեկտեղ, արտադրվել են



սպիտակ շատ նուրբ հախճապակյա իրեր, որոնք դեռևս թրծելուց առաջ, զարդարվել են փորագրությամբ ու ցանցկենությամբ, և որոնք ծածկվել են թափանցիկ մերթ անգույն, մերթ գունավոր ջնարակներով։

... Հայաստանում 12—13-րդ դարերում աշխատում է ենթաջնարակային նկարներով զարդարուն և անգորի վրա փորագրված կերամիկայի արտադրությունը։ Այդ տիպին պատկանող խեցեղեն իրերը մոտենում են հյուսիսային Իրանում գտնվածներին, թեպետ սրանցից տարբերվում են իրենց զարդանկարների ոճով։ Բացի դրանից, այդ շրջանում արտադրվում էին սպիտակ, թեև կազմությամբ 11-րդ դարի խեցեղեն իրերի նման ոչ այնքան նուրբը, հախճապակյա իրեր, որոնք ծածկվում էին շատ գեղեցիկ գունավոր ջնարակով և զարդարվում վրայից գնովի ուռուցիկ օրիգինալ կերպարանքներով։ Այդ խեցեղեն իրերը, բացի Հայաստանից և Վրաստանից, ուրիշ որևէ տեղ գտնված չեն՝ մի հանգամանք, որ ցույց է տալիս, թե դրանք տեղական ծագում ունեն»*։ (Նկ. նկ. № № 24, 25, 26, 27)։

Նկ. 24. Բրեղան, գտնված Անիում (Պետ. Պատմ. Թանգարան)

Պեղումներից դուրս են եկել նաև ապակյա սրվակներ և տարբեր ձևի հախճապակյա ու ճենապակյա անոթներ, որոնց մի մասը ներմուծված է Հայաստան Չինաստանից, Ռեյից, Բյուզանդիայից, Սիրիայից և այլ երկրներից։

Անիում և Դվինում գտնված հասարակ կավե ամանների մեջ հետաքրքիր են զարդաքանդակ մեծ կարասները, որոնք ծածկված են գոտի կազմող զարդաքանդակներով։ Սրանց մեջ, հատկապես կենցաղային նկարներից, աչքի են ընկնում այծերի

* Բ. Ա. Շելկովնիկով—«Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական կերամիկայի արդյունագործությունը»։ «Տեղեկագիր» ՍՍՌՄ Գիտ. Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի, Երևան 1942, № 3—4, էջ 35։

քանդակները և երկաթաչափական ու վեցթևանի վարդաձև օրնամենտները։ Համեմատելով երկու քաղաքներում գտնված այդ կարասները, տեսնում ենք, որ նրանց վրա գործադրվել է միևնույն տեխնիկան, այն տարբերությամբ, որ Դվինում գտնված կարասի կաշվե ավելի փայլուն է։ Անիում գտնված կարասի կտորների վրա հատ ու կենտ պահպանվել են հայկական տառեր, որանից մեկի վրա կարդում ենք «Գրիգոր» անունը, որը գուցե և այդ կարասը պատրաստող վարպետի անունը լինի։ Հասարակ կավե ամանների շատերի վրա քաշված է տարբեր գույնի բարակ ջնարակ, զանազան օրնամենտներով և նույնիսկ կենդանական ու մարդկային դեմքերով։



Նկ. 25. Ջնարակած խոր քրեղան, գտնված Դվինում։ (Պետ. Պատմ. Թանգարան)

Տեղական արտադրության լավագույն նմուշներից են Անիում գտնված քարե գլանակի մասերը, որոնցով դրոշմում և տպում էին կավե մեծ կարասների գոտիների նկարազարդերը։



Նկ. 26. Հախճապակյա ափսե, գտնված Անիում։ (Պետ. Պատմ. Թանգարան)

Անիում գտնված սովորական ամաններից տարբերվում են խիստ նեղ շուրթերով ձվաձև բազմաթիվ անոթներ, որոնք ծառայել են կանանց արդուզարդի համար. սրանց մեջ պահվել է օծանելիք՝ անուշահոտ յուղեր և նույնիսկ սնդիկ։ Սնդիկի, իբրև թունավոր նյութի, սրվակը պատրաստված է հատուկ ձևով։ Ըստ ճարտարապետ Թ. Թորամանյանի՝ այս տիպի սրվակները գործածական են եղել նույնիսկ վերջին դարերում Թյուրքահայաստանի որոշ





Նկ. 27. Ջնարակած առյուծաձև ափսե, գտնված Անիում։ (Պետ. Պատմ. Թանգարան)



Նկ. 28. Հախճապակյա ափսե, գտնված Անիում։ (Պետ. Պատմ. Թանգարան)



Նկ. 29. Դահձաձև կարասի կտորներ, գտնված Անիում։ (Պետ. Պատմ. Թանգարան)



Նկ. 30. Գաճաղարդ կարաս, գտնված Դվինում։ (Պետ. Պատմ. թանգ.)

շրջաններում, որոնց բնակիչների նախնիքները գաղթել էին Անիից, և նա օրինակ է բերում իր ծննդավայր Շապին-Գարահիսարը, ուր գործածական էին այդ տիպի անոթներ։ Այդ ձվաձև անոթները, Հայաստանից բացի՝ տարածված են եղել նաև Միջին Ասիայում։ Միջին Ասիայի կենտրոնական քաղաքներում պեղումների ընթացքում հայտաբերվել են մի քանի տասնյակ միևնույն ձևի և գրեթե նույն օրնամենտներն ունեցող անոթներ։ Մենք արդեն ներածական մասում հիշել ենք այն մասին, որ Անին առևտրական հարաբերությունների մեջ էր Միջին Ասիայի հետ, և Հայաստանի արհեստավորության որոշ մասը հավանաբար անցել է Սարայ՝ իր հետ տանելով իր արհեստն ու տեխնիկան, որն և հարմարեցրել է տեղական պայմաններին։ (Նկ. նկ. № № 31, 32)։

Եթե մատենագրական աղբյուրները քիչ տեղեկություններ



ունեն տալիս մասսայական իրերի արտադրության մասին, ապա նյութական կուլտուրայի մնացորդները, ընդհակառակը, լրացնում են այդ բացը։ Ֆեոդալիզմի առաջին էտապում, իշխանական ընտանիքների և հասարակական հաստատությունների շինարարության համար գանազան զարդանկարներ ու գույներ ունեցող աղյուսները պատրաստվում էին հատուկ պատվերով, բայց 10-րդ դարից հետո արդեն արտադրվում է ստանդարտ ձևով, որպես շուկայական ապրանք և սրանց վրա նկատելի են արդեն պարզ և կրկնվող օրնամենտներ։ Բաքվի միջնադարյան մզկիթի պատի վրա կան զարդանկարներ, որոնց վրա գրված են տարբեր վարպետների անունները և թվականներ։ Այս փաստն ապացույց է տալիս, որ այդ շենքի պատի մեջ շարված աղյուսները արտադրված են եղել շուկայի համար՝ տարբեր վարպետների ձեռքով։ Անիի Առաքելոց վանքի ճակատի մեծահատիկ աստղաձև քանդակի ամեն մի թևի մեջ գրված են հայկական տառեր, որոնցից ստացվում է «Սարգիս» անունը և դա, անկասկած, այն արհեստավորի անունն է, որի ձեռքով պատրաստվել են այդ խոշոր աստղաձև հատիկները։



Նկ. 31. Սոգեկաման, գտնված Անիում։ (Պետ. Պատմ. թանգարան)

Պեղումների ընթացքում Անիում և Դվինում գտնված են նաև կավից պատրաստված ջրատար խողովակներ, որոնք ունեն իրար մեջ հագցնելու հարմարություն։

Վերոհիշյալ բոլոր իրերը (աղյուսները, խողովակները, մոզայիկան) պատրաստվել են տեղում, որի համար լավագույն ապացույց է ծառայում նաև Անիում հայտաբերված աղյուս թրծելու գործարանի փաստը։



Նկ. 32. Անդիկամաս, զանված Սարայում։

## IV. ՔԱՐԱՆՈՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՐՄՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե մենք համեմատաբար քիչ դրավոր տեղեկություններ և նյութական արտադրանքի մնացորդներ ունենք մետաղագործության, մանածագործության և մի քանի արհեստների մասին, ապա այդ նույնը չի կարելի ասել շինարարության վերաբերյալ, քանի որ մեր երկրի հարուստ և հոյակապ հուշարձաններն (նրանց կենդանի վկաներ են քարակոփության և շինարարական արհեստներին վերաբերյալ։

Այդ հուշարձաններն իրենց ոճով, կառուցման տեխնիկայով, նուրբ քանդակներով և հարուստ արձանագրություններով մեծ գանձ են հանդիսանում ճարտարապետության և հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության համար։ Այդ տեսակետից եզակի տեղ է բռնում Անին, որը հանդիսանում է 10—13-րդ դարերի պատմական Հայաստանի ճարտարապետական հուշարձանների անզուգական մի թանգարան, որտեղ կառուցողական գործը հասել էր իր ժամանակի բարձրագույն աստիճանին։



Նկ. 33. Անիի Կաթողիկե եկեղեցին հարավ-արևելքից. 1001 թ.

Տվյալ դեպքում շինարարական գործը մեզ հետաքրքրում է այնքանով, որ նա կապված է քարակոփության և որմնադրության հետ և որ այդ հսկայական շինարարությունը կատարվել է տեղական արհեստավորների, այն է՝ որակյալ քարտաշների ու որմնադիր վարպետների միջոցով։

Հայաստանի քաղաքներում, մասնավորապես Անիում, շինարարական աշխատանքն արագ թափ է ստանում հատկապես



Նկ. 34. Ախուրյանի կամուրջը Անիի մոտ. ԺԱ դար (վերակազմված)։



Նկ. 35. Անի քաղաքի պարիսպները. Ժ դար։



Բագրատունիների տիրապետության ժամանակ։ Այդ դարաշրջանին է պատկանում Անիի Կաթողիկեն, որպես անզուգական մի կոթող։

Ճարտարապետական տեսակետից նշանավոր գործ է և «Հովվի եկեղեցին» կոչված եռահարկ շենքը, որի մասին ճարտարապետ Թ. Թորամանյանը գրում է. «Իր եռահարկ ձևով «Հովվի եկեղեցին» Զվարթնոցի և Անիի ս. Գրիգորի մանրանկարն է, ներքին կողմէն օրինասիներէն մեկնող վեց աղեղներու ծայրերը առանց յենարանի կախ մնացած կախարդական երևոյթը գաղափարով և շինարարական ճարպիկութիւնով մի մեծագործութիւն արժէ՝ յատակագծի ձևը և արտաքին ակնահաճոյ տեսքը մէկ հատիկ օրինակը կթուի ինձի ամբողջ պատմական ճարտարապետության մէջ»*։

Բագրատունիների շրջանին պատկանող քաղաքացիական կառուցումներից արժե հիշել Ախուրյան գետի կամուրջները, մանավանդ 11-րդ դ. երկհարկանի, յուրահատուկ ոճով շինված կամուրջը և Անիի պարիսպները, որոնց երկարությունը հասնում է 2500 մետրից ավելի և բարձրանում են երկու կողմից սրբատաշ քարերով։ Հայաստանի տարբեր շրջաններում, Բագրատունիների տիրապետության ժամանակ, ֆեոդալ առանձին իշխանների կողմից կատարված նշանավոր կառուցումներից առանձին հիշատակության արժանի է Աղթամարի վանքը, Սանահնի և Հաղբատի վանքերը, Քոբայրի հուշարձանը, Կեչառիսի վանքը (Ախտալում), Մարմաշեն (Դուզքենդի շրջանում), Ամբերդի 11-րդ դարի եկեղեցին և պալատը (Աշտարակի շրջանում) և այլն։

Սելջուկների կատարած ավերածություններից հետո, 12—13-րդ դարերում նորից մեծ թափ է ստանում շինարարական գործը Հայաստանում։ Կրկին կառուցվում են թե կրոնական և թե քաղաքացիական շենքեր՝ իրենց դարաշրջանին համապատասխան ոճով։ Զաքարյանների ջանքերով և իրենց վասալ ֆեոդալների միջոցով, Արագածոտնում, Լոռիում, Սյունիքում և այլ շրջաններում կառուցվում են նորանոր շենքեր, որոնք իրենց ճոխ քան-

* Թ. Թորամանեան—«Անի քաղաք, թէ ամրոց», «Ազգագրական Հանդէս», գիրք XXIII։

Նկ. 36. Աղթամարի ս. Խաչ եկեղեցին. Ծ դար։





Նկ. 37. Սանահնի ժամատան պատերից մեկի խոյակը. Ժգ դար։



Նկ. 38. Հառիճավանքի եկեղեցին հյուսիս-արևելյան կողմից

դակագործությամբ եզակի տեղ են գրավում հայ ճարտարապետության մեջ, ինչպես, օրինակ, Հառիճի վանքը, Հովհաննավանքը, Հաղարծինը, Գոշավանքը, Մակարավանքը, Նորավանքը, Տեղերը (Դբեղը) և այլն, որոնց նմանները շատ կան Հայաստանի զանազան շրջաններում։ Զաքարյանների տիրապետության շրջանի սեփականություն պետք է համարել գույնզգույն մոզայիկ քարերից պատրաստված պատերը և ստալակտիկ շրջանակներն ու



պսակները։ 12—13-րդ դարերում խաչքարերի քանդակագործությունը հասել էր բարձր աստիճանի։ Այս դարերում զարգանում է նաև ժայռափոր եկեղեցիների կառուցումը, որի ամենափայլուն օրինակն է հանդիսանում Գեղարդի վիմափոր եկեղեցին։ Եկեղեցիներից ու պալատներից բացի՝ կատարվում են նաև առևտրական հարաբերությունների հետ կապված կառուցումներ, ինչպես, օրինակ, կամուրջներ, իջևանատներ, հյուրանոցներ և այլն։ Ահա այս շենքերի կառուցման գործի ամենախոշոր բաժինը պատկանում է քարտաշ արհեստավորին։

Բավական հետաքրքրական և կարևոր նշանակություն ունեն այն նշանները, որոնք փորագրված են այս կամ այն վարպետի կողմից կառուցված շենքերի պատերի վրա։ Հայաստանում այդպիսի նշանների հանդիպում ենք 7-րդ դարից մինչև 15-րդ դարը կառուցված շենքերի վրա։ Քարտաշ վարպետների այդ նշանների մասին ճարտարապետ Թ. Թորամանյանը մանրամասն գրել է իր հոդվածներից մեկում*։ Իրենց տեսակներով խիստ բազմազան այդ նշաններին մենք հանդիպում ենք ոչ միայն Զվարթնոցի վրա, այլ և Անիի, Թալինի, Մաստարայի, Ադիամանի, Բյուրականի և այլ հուշարձանների վրա։ Այդ նշաններից կարելի է մոտավորապես իմանալ տվյալ շենքի վրա աշխատող վարպետների թիվը և ըստ որակի աշխատանքի դասավորությունը, որովհետև ամեն մի վարպետ, ըստ իր որակի, պատրաստել է շենքի այս կամ այն մասի քարերը, կամարները, սյուները։ Զվարթնոցի վրա № 2 աստղաձև նշանը, որը փորագրված է բոլոր կամարաքարերի ու որմնասյուների վրա, ցույց է տալիս, որ, իրոք, այդ նշանն ունեցող վարպետը ժամանակ է եղել հատկապես կամարաքարեր և որմնասյուներ տաշելու գործում։ Բացի հուշարձանների այդ հարուստ մնացորդներից և նրանց վրա եղած նշաններից, պատմիչների մոտ հիշատակություններ կան նաև քարագործ արհեստավորների մասին։

13-րդ դարի պատմիչ Ս. Օրբելյանը գրում է. «Եւ նա հայցէր գանձս բազումս և արուեստաւորս զի շինեսցէ զաւերեալ տեղիսն։ Եւ առաքեցաւ առ ժամայն հաղար այր, հինգ հարիւր քարագործ և հինգ հարիւր փայտագործ»**։ Օրբելյանի այս հի-

* Դիտ. և Արվեստի ինստ. «Տեղեկագիր», Երևան, 1927 թ., № 2։

** Ս. Օրբելեան, էջ 84։



Նկ. 39. Գեղարդավանքի մեծ եկեղեցու հարավային ճակատը։

շատակուությունը ցույց է տալիս, որ շինարարության մեջ աշխատել են մեծ թվով քարագործ բանվորներ։

Նկ. 40. Վարպետների բարձրաքանդակները Զվարթնոցում. Է դար։

Հայ պատմագիրները քարի հետ գործ ունեցողներին կոչել են «քարագործ», որոնք հանդիսացել են տվյալ շինարի և նախագծողը, և կառուցողը։ Ասողիկ պատմիչը գրում է, որ 939 թ. Կոստանդնուպոլսում պատահած երկրաշարժից վնասված Այա-Սոֆիայի վերակառուցման պլանը տալիս է Տրդատ անունով մի

հայ ճարտարապետ. «Այլ անդ դիպեալ ճարտարապետին Հայոց Տրդատայ քարագործի՝ տայ զօրինակ շինուածոյն, իմաստուն հանճարով պատրաստեալ զկաղապարս կազմածոյն եւ սկզբնաւորեալ զշինելն, որ և գեղեցկապէս շինեցաւ պայծառ քան զառաջինն»*։ Աղթամարի արքունական ընակարանի և տաճարի շինության գործը Գագիկ Արծրունի թագավորը հանձնարարում է Մանվել ճարտարապետին**։



Նկ. 41. Վարպետների նշաններ Զվարթնոցի տաճարի վրա։

Քարագործ վարպետների մասին հատ ու կենտ տեղեկություններ կան վիմական արձանագրությունների մեջ***, որոնցից երևում է, որ Կեչառիսի կառուցման գործին մասնակցել է Վեցիկ վարպետը, իսկ Շամշադինի շրջանի Վարագա վանքի կառուցման արձանագրության մեջ (1198 թ.) հիշվում է, որ այն կատարվել է «ձեռամբ վարպետի Մխիթարա եւ Ոխե Թուխ» (645+551=1196) շինեցի զեկեղեցի ձեռամբ Հաւր՝ Գրիգորո եւ նորին արբանեակի ձեռքով»****։ 13-րդ դարի մի այլ արձանագրության մեջ նույնպես հիշվում է, որ Վասակի հրամանով շինվում է եկեղեցի՝ «ձեռամբ Յովհաննէս վարդապետին...»*****

Այդպիսի փաստեր կան նաև այլ հուշարձանների վրա եղած կառուցողական արձանագրություններում։

Շենքի շինությունը շատ հաճախ տևել է երկար, օրինակ՝ Տաթևը կառուցվել է 11, Մարմաշենը՝ 41, Գանձասարը 32, Զվարթնոցը՝ 10 տարվա ընթացքում և այլն։ Սակայն այդ կառուցումների երկարատևության պատճառը չպետք է բացատրել արտադրողական ուժերի ցածր մակարդակով, այլ կարող էին լինել քաղաքական և այլ պատճառներ։

Շինարարության նորմալ ընթացքի վրա հաճախ բացասաբար են անդրադարձել պատերազմները. օրինակ՝ 7-րդ դարում Զվարթնոցի հսկայական եկեղեցին կառուցվել է 10 տարվա ընթացքում, ընդհատումներով, որովհետև այն կառուցող Ներսես Տայեցի կաթողիկոսը արաբական արշավանքների և այլ պատճառներով ստիպված էր հեռանալ երկրից, և շինարարությունը ընդհատվել է մի քանի տարով։ Բագրեվանդի ս. Հովհաննես եկեղեցին, եթե վստահենք վիմագրի ընթերցվածքի ճշտությանը, շինվել է նույնպես 10 տարվա ընթացքում։ Թեև այստեղ ընդհատման մասին խոսք չկա, սակայն, եթե նկատի ունենանք, որ 7-րդ դարի սկզբին, նախքան արաբների արշավանքը, սասանյանների և Հերակլի միջև տեղի ունեցած երկարատև կռիվները գլխավորապես Հայաստանի հողի վրա էին, ապա հասկանալի կդառնա շինարարության ձգձգման պատճառը։

Հիշյալ արտաքին կամ քաղաքական հանգամանքներից բացի, այս երևույթի մեջ պակաս դեր չի խաղացել և կառուցողական տեխնիկան, որի մասին իր բանավոր զրույցներից մեկում մեզ հայտնեց հանգուցյալ ճարտարապետ Թորամանյանը։ Կառուցվող շենքերի դիմացկունության համար կառուցման ընթացքում եղել են և դիտավորյալ ընդհատումներ, հնարավորություն տալու համար, որպեսզի շաղախն ամբանա արևի ազդեցության տակ, մանավանդ որ այդ կառուցողական հսկայական աշխատանքները կատարվում էին գլխավորապես ամառվա ամիսներին։ Ահա հենց սրանով պետք է բացատրել որոշ եկեղեցիների ու վանքերի շինության երկարատևության պատճառը։

Անիում սակայն Ն. Մառի պեղումների ժամանակ երևան հանված պարիսպները և աշտարակներն իրենց վրա ունեն զանազան թվականներ կրող արձանագրություններ, որոնք մեծ մասամբ վկայում են հենց պարիսպների շինության տարբեր ժամանակները։ Այս տարբեր թվականները մի շարք գիտնականների բերել են այն եզրակացության, որ այդ պարիսպների կառուցումը տևել է շատ երկար և որ մեկի սկսած գործը շարու-

---

* Ասողիկ, էջ 251։

** Թ. Արծրունի, էջ 252։

*** «Վիմական տարեգիր», էջ 106։

**** Կ. Ղաֆադարյան — «Պատմա-հնագիտական դիտողություններ Նոր Բերդի Կյուրիկյան իշխանության մասին», ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», 1940 թ. № 4—5, էջ 168։

***** Նույն տեղը, էջ 17։

նակել է նրա հաջորդը, մինչև պարիսպների շինության վերջնական ավարտումը։ Ուստի առաջին ձեռնարկողից մինչև ավարտողը թողել են կառուցման վերաբերյալ վիմական հիշատակություններ։ Սակայն այդ տարբեր թվականները կապ չունեն ընդհանուր կառուցումների հետ, որովհետև այդ արձանագրությունները իրենց էպիգրաֆիկ ոճով համընկնում են հիմնական կառուցման շրջանի թե կառուցողական և թե հնագիտական արվեստներին։ Դրանք իրականում վերաբերում են զանազան ժամանակներում տարբեր մարդկանց կողմից կատարված նորոգումներին, և յուրաքանչյուր նորոգող պարսպի որևէ աչքի ընկնող տեղում գրոշմել է իր անունն ու տարեթիվը։ Դրանով է բացատրվում նաև այն, որ որոշ արձանագրություններ կապ չունեն հիմնական շինարարության հետ, այլ միայն մասնակի նորոգումներն են նշում «շինեցի» ընդհանուր բառով, որովհետև ամեն մի իշխող միշտ էլ ցանկացել է մեծագործ ցույց տալ իրեն։ Եվ վերջապես այդ նույն պարիսպների վրա եղած մի շարք անբովանդակ արձանագրությունները կարող են նվիրատվական նպատակներով գրված լինել։ Պարիսպների և ընդհանրապես ռազմագիտական նշանակություն ունեցող օբյեկտների շինությունը չէր կարող այնքան էլ երկարաձգվել, որոնց վրա մշտապես գործադրվել է ճորտական պարտադիր աշխատանքը՝ քաղաքի պաշտպանությունն ապահովելու նպատակով։

## V. ՀՅՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Պատմական Հայաստանում տարածված և կարևոր արհեստների շարքին է պատկանում հյուսնությունը։

Գյուղատնտեսական փայտյա գործիքները, տնային կահկարասին, փոխադրական միջոցները և այլն պատրաստվում էին հատուկ վարպետների ձեռքով։ 10—13-րդ դարերում հյուսնությունը բավական զարգացած արհեստներից մեկն էր։

Հյուսները խոշոր աշխատանք էին կատարում նաև շինարարության ասպարեզում։ Կրոնական թե քաղաքացիական բազմաթիվ շենքերի վրա եղած փայտյա բոլոր տեսակի գործերը նրանց ձեռքի աշխատանքի արդյունքն են։ Հնում փայտի գործածությունը պարփակված չէր միայն ծածկեր, տախտակամածներ և առաստաղ շինելու մեջ, այլ փայտից պատրաստում էին նաև այլներ, կամարներ, միափեղկ դռներ, պատուհանների շրջանակներ և այլն, որոնց վրա շատ հաճախ փորագրվում էին ճոխ քանդակներ։ Այդ տեսակետից ուշադրության արժանի են Սևանի եկեղեցու դուռը և խոյակները, Մուշի Առաքելոց վանքի դուռը և Անիի գրքակալը, որոնք աչքի են ընկնում իրենց փորագրություններով և արվեստի մեծ վարպետությամբ։

Ստ. Օրբելյանը իր աշխատության մեջ հազար արհեստավորների թվում հիշելով հինգ հարյուր քարագործ, ավելացնում է նաև «հինգ հարիւր փայտագործ»*։ Կ. Գանձակեցին հիշում է հյուսնի անունը և նրա կատարած գործը.

«Շինեաց և զարտուն մի զեղեցկաշէն յարկօք, արուեստաւոր ունելով զհիւսն Մխիթար, որ ի բազում իրս աշխատ եղև եկեղեցեացն և Վանիցն»**։

Հյուսները, շինարարության վրա աշխատելուց բացի, բավարարել են նաև ազգաբնակության լայն պահանջները՝ պատրաստելով տնային կահկարասիք և կենցաղային իրեր, որոնցից շատերը փորագրվում, զարդարվում էին։ Հյուսների և հյուսնության մասին մեր մատենագիրները քիչ տեղեկություններ են տալիս։ Մովսես Կաղանկատվացին իր Պատմության մեջ հիշում է մի հյուսնի և նրա որդի Հովհաննեսին***։ Հովհաննես Դրասխանակերտցու մոտ հիշվում է «հիւսնոց մամուլ» գործիքը, որով տանջում էին քրիստոնյաներին նրանց պարանոցը սեղմելով****։ Մխիթար Գոշն իր առակներում հիշատակում է հյուսնի արհեստը, երբ այն համեմատության մեջ է դնում երկրագործության հետ. «Ի թագաւորէն Ալեքսանդրէ մեծարեալ լինէր երկրագործ քան զհիւսն, յորժամ ապարան նմա շինէին և նախանձ ընդ նմա կալան հիւսն եւ հողագործ»*****։ Առակներում հիշվում է նաև, որ մի հյուսն պատրաստել էր սեղան՝ թագավորին տանելու համար, հույս ունենալով, որ փոխարենը, որպես նվեր, կստանա կալված-ներ, այնինչ թագավորը նրան տալիս է միայն 100 սպիտակ

* Ստ. Օրբելեան, էջ 84։
** Կ. Գանձակեցի, էջ 209։
*** Մ. Կաղանկատվացի, էջ 302։
**** Յ. Դրասխանակերտցի, էջ 239։
***** Մխիթար Գոշ—«Առակք», էջ 132

(արծաթ դրամ). արհեստավորը գանգատվում է, ասելով, որ հազար հյուսնից մեկը չէր կարող պատրաստել նման իր, և որ թագավորը արհեստավորի արժեքը չգիտե*։

Հյուսն վարպետները պատրաստում էին և փոխադրական միջոցները (սայլեր, նավակներ, նավամատույցներ, և այլն)։ Հայաստանի լճերի վրա կատարվող նավագնացության մասին վկայում է Թ. Արծրունին, երբ խոսում է Աղթամարի շինարարության առթիվ Գագիկ Արծրունյաց թագավորի ձեռքով։ «...ի շրթունս խորայատակ հիմանց ծովուն զնէ զրունս անաւորատեսս, հաստահեղոյսս, բևեռալինս որով և զմասն ինչ ծովուն ի կղզին կոյս հատանելով՝ հրաշալիս իմն ներգործեաց, բազում նաւաց յօրինեալ խաղաղ և անքոյթ նաւահանգիստ»**։



Նկ. 42. Փայտե խոյակ Սևանի Առաքելոց եկեղեցուց. Թ դար։
(Պետ. Պատմ. թանգարան)

Հովհաննես Դրասխանակերտցին հայտնում է, թե երբ Սյունյաց Վասակ և Սահակ իշխանները հալածանքի են ենթարկվում արաբների կողմից, այն ժամանակ նրանք «...նաւակառոյց լեալք սրամար թիակօք իբր ի տապանի ինչ երթեալ զօղեալ ամբանային ի Սևան կղզւոջ»***։ Նավարկության մասին վկայություններ ենք գտնում նաև վիմական արձանագրություններում****։

* Մ. Գոշ—«Առակք», էջ 132։
** Թովմա Արծրունի, էջ 294։
*** Յ. Դրասխանակերտցի, էջ 229։
**** «Վիմական տարեգիր», էջ 6—8։





Նկ. 43. Մշո Առաքելոց եկեղեցու փայտե փորագիր դուռը։
(Պետ. Պատմ. թանգարան)



Նկ. 44. Փայտե փորագիր դրքակալ. գտնված Անիում։ (Պետ Պատմ. թանգարան)

## VI. ԿԱՇԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Մատենագրական աղբյուրները տեղեկություններ են հաղորդում նաև կաշվի հետ կապված մի շարք արհեստների՝ սառաջության, կոշկակարության, մորթեգործության և այլնի մասին։

Հայաստանում միշտ էլ զարգացած է եղել անասնապահությունը, որպես ազգաբնակության հիմնական զբաղմունքներից մեկը։ Անասնապահությունն ապահովում էր կաշեգործության զարգացման բոլոր նախադրյալները։ Հայաստանի մի շարք վայրերում տարածված են եղել կաշի մշակելու արհեստանոցներ (ղարաղխանաներ), որտեղ աշխատել են մեծ թվով խաղողդներ (դարաղներ)։ Այս արհեստանոցները հում կաշի են մատակարարել կաշեգործության հետ կապված զանազան արհեստավորների՝ վերամշակման ենթարկելու այն։

Գրավոր աղբյուրներում շատ քիչ հիշատակություններ կան այդ արհեստանոցների և այնտեղ աշխատողների վերաբերյալ։ Մխիթար Գոշի մոտ հանդիպում ենք մորթեգործ արհեստավորի և խաղախորդի վեճի մասին։ Այդ վեճն ընթանում է ամեն մի արհեստին արժանի գնահատական տալու ուղղությամբ. «Խաղախորդ ոմն էանց ընդ դուռն մորթէգործի, և սկսաւ այպանել, և չարահոտ զնա կոչել. և նորա երթեալ թշնամանէր ասելով։ Եթէ յոսկեգործաց և կամ յայլոց ևս նախատ լինէի, ի դեպ էր, զու ժահահոտ քան զիս, զիարդ հայարձակիս»*։ Նման փաստերը սակավ են, սակայն մեր մատենագիրները բազմաթիվ տեղեկություններ են տալիս կաշվեղենի պատրաստի արտադրանքի մասին։ Կասկածից վեր է, որ կաշեգործական այդ արհեստանոցների թիվը Հայաստանում եղել է բավականին շատ։ Կաշվի հետ առնչություն ունեցող արհեստավորների արտադրանքը, անշուշտ, քիչ տեղ չէր զբաղում գյուղատնտեսության զգալի պահանջների մեջ (ինչպես՝ արոր, գութանի փոկեր, ճոպաններ, խարազաններ պատրաստելը և այլն)։ Կաշեգործ վարպետները մեծ գործ էին կատարում բավարարելու նաև բանակի, մանավանդ հեծելազորի կարիքները։ Նրանք պատրաստում էին թամբեր, սանձեր, կա-

* Մ. Գոշ—«Առակք», էջ 135։

պարոններ, պատյաններ և այլն և ազգարնակության, մանավանդ քաղաքային բնակիչների, ոտնամանները և բավարարում այլ կարիքները։ Եվ եթե այս բոլորին ավելացնենք և այն խոշոր պահանջը, որ կաշեգործությանն առաջադրում էր տարածված գիր ու գրականությունը պատրաստելու մեծ քանակությամբ մագաղաթ և ձեռագրերի կազմի համար հատուկ կաշի, այն ժամանակ հասկանալի կլինի այդ արհեստների կարևորությունն ու զարգացման աստիճանը։

Կոշկակարությունը Հայաստանում եղել է զարգացած արհեստներից մեկը։ Այդ մասին վկայում են գրեթե մեր բոլոր պատմիչները։ Կոշկակար արհեստավորներն արտադրել են թե որակով և թե ձևով մի քանի տեսակ կոշիկներ և բավարարել են ինչպես իշխող դասի (թագավորների, իշխանների, ազնվականության, հոգևորականության), այնպես էլ քաղաքային դասի կարիքները։

Գոշն իր առակներում հիշում է, թե ինչպես «Այր ոմն զանկեալ զեշ եկեր ի փողոցի, անդէն ետես զկոշկակար՝ զի ատամամբք պարզէր զմորթ, և սկսաւ բամբասել զնա որում ասաց. «Այր դու եթէ մեռեալս մորթ այսպէս չար է, և այն զի ոչ ուտեմ, որչափ այդ զի մարմին ուտես, և այն անդէն»*։

Սրանից կարելի է եզրակացնել, թե կոշկակարն ինչ միջոցներ է գործադրել իր աշխատանքի պրոցեսում։ Այս սովորությունը, ատամներով կաշվի այս կամ այն մասը ձգելու և լայնացնելու սովորությունը, որոշ արհեստավորների մոտ պահպանվել էր մինչև վերջին ժամանակները։ Մի այլ տեղ հիշվում է մի ոմն տաճիկ կոշկակար, որ շուկայում նստած կոշիկ է կարում**։

13-րդ դարի ձեռագրերից մեկում հիշվում է մուճակակարություն (կոշկի տեսակ) որպես առանձին արհեստ. «Մուճակակարն և ջուլհակն հանց մարդ լինին, որ զայլոց բարի կամենան»***։ Ստ. Օրբելյանը կամենալով ցույց տալ, թե ինչպես ուսուցիչը տհաս մանուկից կատարյալ մարդ է պատրաստում, ի միջի այլոց օրինակ է բերում նաև արհեստավորին, ասելով. «... իսկ արհեստաւորք զոյացուցանեն յանպատշաճ իրանց պատշաճաւոր և պիտանի. որպէս հիւսունք ի մայրից սեղան և աթոռ. կարուակք յօղեաց՝ կօշիկ և զգեստ։ Դարբինք ի քարանց զերկաթ, և յերկաթոյ՝ սուսեր և այլն՝ ինչ գործի»*։

Տեղեկություններ կան և վիմական արձանագրություններում, որտեղ հիշատակվում է ոչ միայն առանձին կոշկակարների, այլև կոշկակարների հատուկ թաղերի մասին**։

Կաշեգործության հետ կապված են և թամբագործության ու սանձագործության (լկամարարության) վերաբերյալ արհեստները։ Նախնական շրջանում, երբ դեռ աշխատանքի տեխնիկական բաժանումը արհեստների ներսում չէր խորացել, այս երկու աշխատանքը կատարում էր մի արհեստավոր. թամբագործները բավարարում էին ոչ միայն ֆեոդալական բարձր խավի և գյուղացիության, այլև Հայաստանի ողջ կովող հեծելազորի կարիքները։ Անշուշտ, թամբերի ձևի և նրանց որակի միջև կար մեծ տարբերություն, նայելով թե ում համար էր պատրաստվում և ինչ նպատակով. այսպես՝ Ստ. Օրբելյանը հիշում է, թե «հեծեալ ի սպիտակ ջորւոջ ոսկեզօծ թամբօք»***։

Միջնադարյան Հայաստանի կենտրոնական քաղաքներում նույնիսկ գոյություն է ունեցել սառաջների առանձին թաղամաս։ Սառաջության, լկամարարության և թամբագործության մասին տեղեկություն կա նաև 13-րդ դարի պատմիչ Առաքել Անեցու թարգմանած ձեռագրում։

Արհեստների զարգացման մասին մեր ձեռագրերը տալիս են մի քանի փաստեր միայն, որոնցով որոշ պատկերացում ենք կազմում արհեստագործության մեջ առաջ եկած աշխատանքի բաժանման վերաբերյալ։ Սառաջության, լկամարարության և թամբագործության մասին նույն ձեռագրում կարդում ենք հետևյալ հետաքրքրական տողերը. «Սառաջն և Մազմանն կանայք լինին, լկամարարն ատենահաս մարդ լինի... թամբարարը իրաւարար մարդ լինի»***։ Սառաջ, լկամարար և թամբարար առանձին արհեստների մասին նախորդ դարաշրջաններում որոշակի տեղեկություններ չունենք, սակայն համարձակ կարելի է ասել, որ այս երեք արհեստներն այն ժամանակ կենտրոնացած են

* Մ. Գոշ—«Առակք», էջ 136—137։
** Վարդան Այգեկցի—«Առակք», էջ 172։
*** Երևանի Պետ. Մատենադարան, № 625, էջ 219։

* Ստ. Օրբելեան, էջ 7։
** «Վիմական տարեգիր», էջ 95։
*** Ստ. Օրբելեան, էջ 73։

եղել մեկ արհեստավորի ձեռքում, քանի որ արհեստների մեջ դեռևս չկար աշխատանքի լայն բաժանում։ Իսկ մեր քննարկած դարաշրջանում, ինչպես ցույց է տալիս այդ ձեռագիրը, ի դեմս սառաջի մենք տեսնում ենք արդեն որոշակի աշխատանքի մասնագիտացում, օրինակ՝ լկամարարը զբաղվում է միայն երասաններ պատրաստելով։ Եթե մինչև այդ երասանների կաշվե մասերը ևս պատրաստում էր նույն արհեստավորը, որ հանդես էր գալիս սառաջ ընդհանուր անվան տակ, այժմ արդեն աշխատանքը պահանջում էր ավելի նեղ մասնագիտացում, որ պետք է կատարվեր տարբեր արհեստավորի ձեռքով։ Թամբագործության հետ սերտորեն կապված է նաև համետագործությունը (փալանդուզությունը), որ բավականին տարածված էր Հայաստանում, նամանավանդ եթե նկատի ունենանք փոխադրության պրիմիտիվ միջոցները՝ գրաստներով, թեև պիտի նկատել, որ համետագործը համեմատաբար քիչ գործ ուներ կաշվի հետ։

Ինչպես նշեցինք, մեծ քանակությամբ կաշի է մշակվել մագաղաթի համար։ Մագաղաթը պատրաստում էին հատկապես այծի, հորթի և երբեմն նաև նապաստակի կաշվից։ Մագաղաթի մշակումը մեծ աշխատանք էր պահանջում և ավարտվում էր երկար պրոցես անցնելուց հետո։ Կաշի էր սպառում և կազմարարության գործը, որը հանդիսանում էր ձեռագրերի պահպանման ամենաանհրաժեշտ միջոցը։ Որպեսզի գիրքը չփչանա, ձեռագրերի երկու կողմերը ամրացնում էին բարակ տախտակներով և ապա կաշեպատում, իսկ ներսի կողմից ծածկում էին ծաղկազարդ մետաքսով կամ հասարակ կտավով։ Այնուհետև արտաքին կողմից կաշին (գրքի մեկ կամ երկու երեսը) զարդարում էին գրոշմանիշերով, օրնամենտներով կամ թանկարժեք մետաղյա խաչերով և այլն և առանձին, աչքի ընկնող տեղում գրում կազմողի անունն ու թվականը։

Բացի վերև թվարկված արհեստներից՝ գրավոր աղբյուրներում հիշատակվում են մի շարք այնպիսի արհեստներ, որոնք թեպետ անմիջականորեն կապ չունեն արտադրության հետ, սակայն այդ գործով զբաղվողները հանդիսանում էին արհեստավորներ։ Արհեստավոր էր համարվում ոչ միայն հացարարը (հացթուխը), գուսան-պկազարկը (պարկապզուկ փչող), տոպոպզարկը (թմբկահարը), այլև աղթարարը, պարտիզպանը, բաղնիսպանը, նատավը, մոքերիկը (ջրեպան)։ Աղթարարությունն ևս արհեստ էր համարվում և բավականին տարածված և հարգված արհեստներից էր միջնադարյան Հայաստանում, նույնիսկ ամեն մի թաղամաս ուներ իր առանձին աղթարարը—հեքիմը, որը կատարում էր բժշկի դեր։ Մենք հարկ չենք համարում այս թվարկված արհեստների մասին մեկ առ մեկ խոսել, քանի որ դրանք անմիջապես չեն կապվում արտադրության հետ։

(Տես այս աշխատության վերջում զետեղված արհեստների ցանկը։)

Նախորդ գլխում մենք արդեն ասացինք, որ ֆեոդալիզմի վերելքի շրջանում (9—13-րդ դ.դ.) թե առևտուրը և թե քաղաքային կյանքը բավականին զարգացած էին Հայաստանում։ Այդ շրջանի քաղաքները հանդիսանում էին վարչական և տնտեսական ինքնուրույն վայրեր, ունենալով քաղաքային նոր առաջացող դասը։ Այդ քաղաքներն իրենց արտադրության եղանակով զգալիորեն տարբերվում էին շրջակա գյուղերից, մի հանգամանք, որ ինքնին առաջ է բերում հակասություններ՝ գյուղի և քաղաքի միջև։

Մարքսը խոսելով աշխատանքի բաժանման մասին, գրում է.

«Աշխատանքի բաժանումը որևէ ժողովրդի մոտ իր հետ բերում է ամենից առաջ արդյունաբերական և առևտրական աշխատանքի առանձնացումը երկրագործական աշխատանքից, իսկ այդ նշանակում է՝ նաև քաղաքի անջատումը գյուղից և նրանց շահերի միջև հակասությունը»*։

Մարքսի այս սպառիչ բնորոշմանը լիակատար կերպով համապատասխանում են Հայաստանի տնտեսական զարգացման

* Архив К. Маркса и Ф. Энгельса, кн. I, 1928, стр. 234.



պայմանները՝ մեր քննարկած ժամանակաշրջանում։ Անին, որպես առաջնակարգ քաղաքներից մեկը, իր արդյունագործական արտադրության բնույթով տարբերվում էր շրջակա գյուղերից։ Այստեղ արդեն անհամեմատ ուժեղացել էր աշխատանքի բաժանումը, ազգաբնակության հիմնական մասը զբաղվում էր արհեստներով ու առևտրով և իր արտադրանքով բավարարում նաև շրջապատի գյուղական ազգաբնակության պահանջները։ Այս մասին դեռ 11-րդ դարում Ա. Լաստիվերտցին գրում է. «...մանաւանդ ամուրն Անի և որ շուրջ զնովաւ գտերք իւր՝ առաւել յամբարտաւանութիւն. կրթեալ՝ ընդդէմ երկնից կայթս հարկանէին»*։

Հայաստանի կենտրոնական քաղաքների հիմնական բնակչությունն անհամեմատ ավելի ազատ և արտոնյալ վիճակում է եղել։ Փաստերը ցույց են տալիս, որ քաղաքի բնակիչներն ավելի բարձր են դասվել, քան շինականները։ Քաղաքային դասի արտոնյալ վիճակի մասին տեղեկություն է տալիս դեռևս Մովսես Խորենացին, որի ժամանակ քաղաքային կյանքն անհամեմատ թույլ է եղել, քան 10—13-րդ դարերում։ Վաղարշ թագավորի կողմից սահմանված կարգի մասին գրելիս, Խորենացին բերում է թագավորի հրամանի բովանդակությունը, ըստ որի պետք է ավելի հարգել ու պատվել քաղաքացիներին, քան գյուղացիներին։

«Հրաման տայ՝ քաղաքացեաց մարդկան արգոյ և պատիւ լինել առաւել քան զգեղջկաց. և գեղջկաց պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս. և քաղաքացեաց մի կարի առ գեղջկօքն պերճանալ, այլ եղբայրաբար վարիլ, վասն բարեկարգութեան և աննախանձոտ կենաց, որ է շինութեան եւ խաղաղութեան կենաց պատճառք»**։

Քաղաքային դասի արտոնյալ վիճակի մասին հաղորդում է նաև 10-րդ դարի պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին՝ Զվարթնոցի շինարարության առթիվ խոսելիս***։ Այնուհետև քաղաքային դասի և շինականների փոխհարաբերության մասին տեղեկություն ենք գտնում նաև Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ում, որտեղ նա խորհուրդ է տալիս, որ քաղաքային դասը չարհամարհի շինականներին։

«Պատուէր տամք և քաղաքայնոցդ, և որք ի վաճառատեղոցս նստէք՝ գնել և վաճառել, և առ արուեստաւորսդ, զի ուղղու-

* Ա. Լաստիվերտցի, էջ 164։

** Մ. Խորենացի, էջ 110—111։

*** Յ. Դրասխանակերտցի — Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1910 թ., էջ 88։

թեամբ տանիցիք գկեանս ձեր... Եւ մի ոք խաբէութեամբ և նենգաւորութեամբ վաճառեսցէ... Եւ մի արհամարհէք զչինականն՝ իբրև զանգէաս, յաղագս պարզամտութեան իւրեանց»*։

Վերոհիշյալ վաստերն արդեն ցույց են տալիս, որ, իրոք, քաղաքացիներն անհամեմատ ավելի բարձր են դասվել, քան չինականները, չնայած երբեմն արհեստավորությունը տարել է նաև կոռային աշխատանք։ Սակայն մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում արհեստավորությունն արդեն պետք է ազատագրված լիներ ֆեոդալներից, որպեսզի կարողանար ներքին և արտաքին շուկայի համար արտադրել մասնայական սպառման ապրանքներ։ Չնայած այս մասին մատենագրական տեղեկություններ չունենք, սակայն այդ պետք է տեղի ունեցած լինի 10-րդ դարից հետո մի թայն։ Այդ մասին դրավոր տեղեկություններ կան Հայաստանին անմիջական հարևան երկրներից, որտեղ այդ պրոցեսն սկսվել է 9-րդ դարից։ Բուխարայի (Միջին Ասիա) մոտ գտնվող Իսաջա վայրի բնակիչները 9-րդ դարում զբաղվում էին բամբակի հյուսվածքի արտադրությամբ և այդ գյուղը խոշոր ֆեոդալ Սագիրբին Անմեդզադի սեփականությունն է համարվել, որն ամեն տարի բնակիչներից դանձել է 100.000 դիրհեմ։ Հենց այդ դարում էլ արհեստավորները 170.000 դիրհեմի փրկագին են վճարում և դառնում ազատ։ (Ա. Յակուբովսկի)։

Եվրոպական քաղաքներից Ֆրեյբուրգի կոշկակարները (12-րդ դ. առաջին քառորդում) իրենց դուքսին պարտավոր էին տալ կոշիկներ՝ պատերազմ գնալու համար. դարբինը պարտավոր էր եպիսկոպոսին վճարել տարեկան 4 հատ ձիու նալ իր սարքով։ Գերմանիայում, Մագդեբուրգ քաղաքի կոշկակարները 12-րդ դարում (1157 թվին) գնել էին իրենց վարպետներից կառավարիչ ընտրելու իրավունք։ Նրանք իրենց դիմումի մեջ գրել էին. «Որովհետև մեր քաղաքի արհեստավորները, փոքր թե մեծ, իրենց դատարանով և վարչությամբ, այնպես կազմակերպել ենք կամենում, որ նրանք ոչ մի վարչություն իրենց վրա չունենան, բացի այդ, որ իրենք համաձայն են իրենց միջից ընտրել, այդ

* Ն. Շնորհալի—«Գիրք, որ կոչի ընդհանրական». Ս.-Պետերբուրգ, 1788 թ., էջ 73։



իրավունքի համար պարտավորվում են տարեկան 2 թալեր վճարել Մագդեբուրգի արքեպիսկոպոսին»։*

Ֆրանսիայում ևս արհեստավորները գնում էին իրենց իրավունքները որոշ վճար կամ պատրաստի արտադրանք տալով և այդպիսով իրավունք էին ստանում ազատ զբաղվելու իրենց արհեստով։

Պետք է ենթադրել, որ մոտավորապես նույն ճանապարհով էլ ընթացել է Հայաստանի արհեստավորության զարգացումը և այն էլ, ինչպես ասացինք, հավանաբար 10-րդ դարից հետո, այսինքն այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ Հայաստանի քաղաքներն ունեին իրենց ներքին շուկան և իրենց արտադրանքով ու հում նյութով մատակարարում էին արտաքին առևտրին։ Ավելի վաղ շրջանում այդ կատարվել չէր կարող, քանի որ դրանից առաջ գոյություն ունեցող ֆեոդալական հարաբերությունների պայմաններում քաղաքները չենք կարող դիտել որպես առևտրա-արհեստավորական կենտրոններ, որովհետև դեռևս չկար համապատասխան շուկա, ուստի և աշխատանքի լայն բաժանում։ Ամեն մի բանվոր, ինչպես Մարքսն է ասել, «պարտավոր էր իմանալ մի շարք աշխատանքներ, պարտավոր էր արտադրել այն ամենը, ինչ որ կարող էր պատրաստել իր գործիքների միջոցով»**։

Մեր քննարկած շրջանում արդեն, ինչպես տեսանք, Հայաստանի մի շարք քաղաքներում (Անիում, Դվինում, Արծնում, Կարսում, Կարինում) առևտրական հարաբերությունների լայնացմամբ սկսել էր արհեստագործական արտադրության մեջ աշխատանքի ավելի լայն բաժանում և տնտեսության դրամական ձևի զարգացում։

Առևտրական հարաբերությունների զարգացման օգտին են խոսում 10-րդ դարից հետո եղած արձանագրություններում բազմիցս հիշատակվող կալվածների, այգիների, ձիթհանքերի ու ջրաղացների գնման և վանքերին նվիրելու մասին, այսինքն անշարժ գույքն անգամ դարձել էր առևտրի առարկա։ Բացի այդ՝ կան հիշատակություններ նաև դրամական կուտակման մասին

* «Մշակ», 1890 թ., № 95։

** *Կ. Մարքս* և *Ֆ. Էնգելս*—Архив, книга первая, 1928, стр. 235.

գիտողալ իշխաններից շատերի մոտ*։ Էջմիածնի արձանագրություններում հիշվում է մեծաքանակ դրամների և կարմիր դուկատի մասին**, որ կուտակվում էր գլխավորապես վաշխառուական ճանապարհով։

11—14-րդ դարերում վաշխառուական կապիտալն արդեն կատարում էր իր քայքայիչ դերը, որից տուժում էին, ի թիվս այլոց, նաև արհեստավորները։ 11-րդ դարի պատմիչ Ա. Լաստիվերցու կարծիքով՝ վաշխի կուտակումը կատարվում է ի հաշիվ աղքատների. «Այս է բաժին անիրաւ քաղաքաց, որ շինեն զինքեանս արեամբ օտարաց և ի քրտանց տնանկաց փարթամանան, և ի վաշխից և յանիրաւութեանց զտունս իւրեանց ամրացուցանեն»***։

Վաշխառուական կապիտալի քայքայիչ դերն այնքան մեծ է եղել, որ նույնիսկ իր արտահայտությունն է գտել օրենսդրական գրքերում, որի համար մշակված են եղել հատուկ կետեր։ Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքի» թե՛ աշխարհիկ և թե՛ կրոնական օրենքներում վաշխով զբաղվողների համար ունի առանձին հոդվածներ, որոնցով արգելվում է վաշխառությամբ զբաղվելը։ Նա նույնիսկ գտնում է, որ դրամագլուխը պետք է անփոփոխ մնա և երբեք չմեծանա վաշխի ավելացումով. «Ապա թէ կար լցէ փոխառողին, տացէ փոխատուին զնոյն գլուխն մնալ առ նմա զնոյն չափն եւ այդ ըստ կարի լիցի»****։ Իսկ նույն աշխատության 356 էջում գրում է. «Եթէ արծաթ փոխ տացես եղբօր քում որ աղքատ լիցէ եւ բնակեսցի առ քեզ, մի՛ ճնշեսցես զնա և մի՛ արկանիցես նմա տոկոսիս»։

Վաշխառուական կապիտալի մասին ունենք տեղեկություններ նույնիսկ 11-րդ դարից շատ առաջ, Հովհաննես Մանդակունու (5-րդ դար) կրոնաբարոյական ճառերում. նա ցույց է տալիս, թե վաշխի ծանրացումը ինչպիսի քայքայիչ ազդեցություն է թողնում։

«Եւ պատուհասեալք պատժին չարաչէս խնդրողք վաշխիցն և փողոցն՝ որ ընդդէմ պատուիրանացն աստուծոյ չարեսցա» իւ-

* Կիրակոս Գանձակեցի, էջ 240։

** «Էջմիածնի տարեգիրք», էջ 124, 137։

*** Ա. Լաստիվերտցի, էջ 167։

**** Մխիթար Գոշ—«Դատաստանագիրք», էջ 357։



գեանց ի վաշխու տան, և տոկոսիւք անդէն պահանջել և անակնածելի ուտեն զժարմինս տնանկաց և ըմպեն զարիւն նոցա անողորմ»*։ Իսկ Ներսես Շնորհալին իր «Թուղթ ընդհանրական»-ում խոսելով առևտրի մասին, խորհուրդ է տալիս դրամը վաշխով չտալ, այլ որպես եղբայրներ օգնել և կարեկից լինել միմյանց։ «Մի՛ տայք զարծաթ ձեր ի վարձու ըստ մարգարէին, այնոցիկ, որք նեղին ի բռնութենէ իշխողաց, և ուտէք զաղքատութեան վաստակս նոցա՝ ի շահս վաշխիցն. այլ՝ որպէս եղբայրք՝ կարեկիցք և օգնականք լերուք միմեանց»**։

Ինչպես վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, վաշխառուական կապիտալի կուտակումը կատարվում էր Հայաստանի աշխատավոր ժողովրդի հաշվին. հարկերի մեծ մասը ծանրացած էր նրա վրա։ Այսպիսով, հարկերի բազմացման հետևանքով ավելի վատթարանում էր աշխատավոր ժողովրդի դրությունը, որն արտահայտվել է երբեմն պոռթկումներով։ Աշխատավորները շատ հեշտությամբ ընկնում էին վաշխառուների ցանցի մեջ, նամանավանդ այնպիսի շրջանում, երբ հարկահավաքների պահանջկոտությունը շատ ավելի խիստ էր։ Այս դրությունը ստիպում էր գյուղացուն և քաղաքի ցածր խավին, ապա նաև արհեստավորությանը, դիմել վաշխառուին և զրավական տալով՝ տոկոսով որոշ գումար վերցնելու, իսկ հետագայում հնարավորություն չունենալով ժամանակին վճարելու, զրկվում էին գրավ դրված և կամ վաճառքի հանված իրենց անշարժ կամ շարժական գույքերի որոշ մասից, կամ ամբողջից։

Ավելորդ չէր լինի այստեղ հիշատակել ժամանակի վաշխառության ներկայացուցիչներից մեկին, որ Զաքարյանների տիրապետության շրջանում կատարել է բավականին խոշոր դեր։ Այդ առևտրական վաշխառուն հանդիսանում է Տիգրան Հոնենցը, որն իր հաշվին կառուցել է Անիի ս. Գրիգոր եկեղեցին և թողել հետևյալ արձանագրությունը.

«ՌԿԴ [1215 թ.] շնորհիւն եւ ողորմութեամբն Աստուծոյ յորժամ տիրեց քաղաքիս Անւոյ. հզաւր և տիեզերակալ Ամիր Սպասալար և Մանդատուրթա խուցես Զաքարիայ և որդին նորա Շահն-

* Յովհան Մանդակունի—Ճառք, 1860, էջ 63—64։

** Ներսէս Շնորհալի—«Թուղթ ընդհանրական», էջ 73։

շահ, ես Տիգրան, ծառայ Այստուծոյ որդի Սմբատաւրենց Սուլթան, յազգէ Հոնենց... շինեցի ս. Գրիգորոյ... և ետու ընծայս ի վանքս սբ. Գրիգորոյ հայրենիք զոր գնել էի գանձով և վճռամբ հայրենէտիրաց և զոր ես ի հիմէ շինել էի դայսոսկի, Գաւառխոնեց գեղին կէսն Քարտին և. Դանկն... և փնդուկն ի քաղաքիս, հայրենիք բաղնիսն... խանապարն կուղպակնոցն ու կամարակապ փնդուկն ու մարագն հետ քաղնեցն տէր Սարգսի աքոռն ու մարագն զոր գնեցի կալն և բ. ակն ձիթհանք... այգի ա. յերևան այգի ա. յՈշական այգի ա. Կոշ... զայս որ գնած է, և այլ բազում գրաւկնած էր, զոր ոչ արձանագրեցի վանացս էի տվել ու թէ տէրքն թափեն ոակին վանացս զոր ուրիշ իմ անդարձագրին եմ գրել»*։

Այս արձանագրության մէջ, ինչպես տեսնում ենք, եկեղեցուն նվիրված հողամասերի և արդյունագործական ձեռնարկությունների որոշ մասը գրավ է դրված եղել վաշխառու Հոնենցի մոտ, որն իր հերթին նվիրում է եկեղեցուն. այդ գրավ դնելու մէջ հավանաբար խոշոր դեր են խաղացել վաշխառուական մեծ տոկոսները։

Մի այլ վկայություն. «ՉԺԸ [1269 թ.]... ես Թաիկ թագոհի, զուստր Շարապշահին, ետու ի Հոռոմոսի վանքս զԱբելի ակնորի Դէլա դռանն, զոր իմ որդին Հազրպէկն ի Գարեգոյնէն գրաւկնեց, է։ ձ, սպիտակ» ը։ ձ։ Սպիտակ ի վերա խարճարար, որ եղաւ. Ո։ շ։ սպիտակ»**։

11—13-րդ դարերում, ինչպես ցույց են տալիս փաստերը, առևտրա-վաշխառուական կապիտալը կուտակման համար միջոցների մէջ որևէ խորություն չէր դնում։

Շատ բնական է, որ շահագործման այս ցանցի մէջ պետք է ընկած լինեին նաև արհեստավորները, ուստի այստեղ անհրաժեշտ է քննել արհեստավորական դասի դրությունը, նրա իրավական վիճակը, կապված իշխող դասի քայքայիչ գործունեության հետ։ Սակայն, չմոռանանք, որ այս շրջանում արհեստավորության շահագործումը տարբերվում է նախորդ դարերում

* Գ. Ալիշան—«Շիրակ», Վենետիկ, 1881, էջ 75—77։

** «Վիմական տարեգիր», էջ 112։ Այստեղ պետք է կարդալ, ոչ թե Ռ. Շ., այլ Ռ. Շ. (1500), որպեսզի ընդհանուր գումարը ճիշտ ստացվի։



տեղի ունեցած շահագործման ձևերից, որին մենք կանդրադառնանք հետո։

Այս ժամանակաշրջանում արհեստավորների շարքում մենք նկատում ենք սոցիալական շերտավորում և աշխատանքի բավականաչափ խոր բաժանում։ Հայկական և օտար աղբյուրները տեղեկություններ են տալիս արհեստավորների արտադրած ապրանքների մասին, բայց ոչ այնպիսի մանրամասնությամբ, որպեսզի հնարավոր լիներ ցույց տալ արհեստների միջև գոյություն ունեցող աշխատանքի բաժանման ողջ պատկերը։ Մատենագիրների մոտ կան հատ ու կենտ տեղեկություններ միայն, որոնք ցույց են տալիս, թե ինչպես ֆեոդալները, բացի ճորտերից, շահագործել են նաև արհեստավորությանը՝ ձրի և պարտադիր աշխատանքով։

Անտարակույս, քաղաքների պարիսպների, մատույցի վանքերի և հասարակական շենքերի կառուցման մէջ գործադրվել է արհեստավորների ձրի և պարտադիր աշխատանք։ Ապացույց կարող են ծառայել Անի քաղաքի վանքերի և պարիսպների ներկա մնացորդները, որոնք կարող էին կառուցվել գերազանցորեն պարտադիր աշխատանք կիրառելու պայմաններում։

Եթե ճորտ գյուղացին Անիի և ընդհանրապես Հայաստանի այդ հոյակապ կառուցվածքների վրա գործադրել է իր ֆիզիկական աշխատանքը և տվել փոխադրական միջոցները, ապա արհեստավորությունը մասնակցել է իր կառուցողական վարպետությամբ։ Անիում գտնված արձանագրություններից մեկում, որ գրվել է բյուզանդացի կատապան Բագրատ Վախցու ժամանակ, տեսնում ենք շահեկան տեղեկություններ՝ մասնավորապես գյուղացու կոռի մասին։ Այդ արձանագրության մէջ ցույց է տրված թե ինչպես բյուզանդացի կատապանը վերացնում է, ի թիվս մի շարք առևտրական հարկերի, նաև ձրի պարտադիր աշխատանքը*։ Պարզ է, որ բյուզանդացի կատապանի կողմից ձրի և պարտադիր «անդարիոն»** հարկի վերացումով ձգտում էին ստեղծել

* «Վիմական տարեգիր», էջ 27։

** Անգարիոն հունարեն բառը նշանակում է ձրի աշխատանք, ձրի ծառայություն։ Թյուրքիայում «անկարիա» նշանակում է ձրի կամ բռնի աշխատություն, Հ. Աճառյան—«Հայերեն արմատական բառարան»։

ապառողների ներքին մասամբ՝ բարձրացնել ազգաբնակության գնողունակությունը։ Արձանագրության մեջ հիշատակված «անդարիոն» տերմինն ընդգրկել է հավանորեն բոլոր տեսակի ձրի և պարտադիր մարդկային աշխատանքները, որի տակ ընկնում էին ոչ միայն շինականները, այլև արհեստավորների որոշ մասը, մանավանդ կառուցողները։ Ի դեպ՝ մինչև վերջերս թյուրքական բանակում գոյություն ուներ որոշ զորական միավոր, որը կոչվում էր ուղղակի «անդարիա» և որի պարտականությունն էր պարտադիր աշխատանքներ կատարել տվյալ զորական միավորի համար։

Պարտադիր աշխատանք է կիրառվել նաև Ագթամարի վանքի վրա, որը կառուցված է 10-րդ դարում. այդ մասին ընդարձակ նկարագրություններ են պահված Թովմա Արծրունու մոտ, ուր և հիշատակվում է արհեստավորների մասնակցությունը։

«Հրաման տուեալ բազում արուեստաւորաց և անթիւ մարդկան զնատյալ վկմս ծանուցս գժուարակիրս հոսել, ընկենուլ յատակս ծովուն անհնարին խորութեանն։ Ապա շարունակում է։ «Յայնժամ և իւր իսկ արքայի ամենիմաստ հասողութեամբն հանդերձ բազում արուեստաւորօք զլար ճարտարութեան ի ձեռն առեալ գծել»*։

Բացի այդ կոռային աշխատանքից՝ արհեստավորները հարկատու էին նաև պետությանը։ Մենք այստեղ կբերենք Բյուզանդական կառավարության կողմից փոխարքա նշանակված Բագրատ Վիկացու թողած արձանագրության այն մասը, որը վերաբերում է առևտրական մի շարք հարկերի թեթևացման, ենթադրելով, որ այն տարածվել է նաև արհեստավորության վրա։

«Եւ զինեւոր Անեցի, եթէ սայլով, եթէ գրաստով ազատ է։ Եւ Անեցի, որ իւրենն մորթելիք գնէ, բաժն ազատ է։ Եւ շալակաւոր Անեցի յամէն ցեղ բաժին կէսն ազատ է»։ Ապա վերջում ավելացնում է. «և ի նստին կարէն Ռ. դրամն ազատ է»**։

Այս արձանագրության վերջին նախադասությունից կարելի է ենթադրել, որ այն տարածված պետք է լիներ նաև արհեստավորության վրա, որովհետև «նստին» բառը ցույց է տա-

* Թ. Արծրունի, էջ 293—294։

** «Վիմական տարեգիրք», էջ 27։



լիս նստակյաց մի որևէ աշխատանք կատարելը՝ կապված տեղի հետ, լինի այդ առևտրական թե արհեստավոր։

Ավանի 1285 և 1287 թ. թ. արձանագրություններից երևում է, որ հարկից ազատված են եղել ոչ միայն Ավանի այգիները, այլև ջուլհականոցը կամ ջուլհակը, որ դրանից առաջ երևի հարկ էին տվել հորակտավով*։

13-րդ դարի պատմիչ Կ. Գանձակեցին խոսելով մոնղոլների վարած հարկային քաղաքականության մասին, նշում է, որ արհեստավորները ևս հարկադրման են ենթարկվել պետության կողմից. «... այլ և զամենայն արուեստագէտս, եթէ ի քաղաքս և եթէ ի գիւղս զամենայն ի հարկի կացուցեն։ Այլ և զծովակս, և զլիճս ձկնորսաց, և զերկաթահանս, զդարբինս, և զշապարտաս, և զի պիտոյ է մանրամասնաբար ասել, զամենայն դուռն շահից հատից ի մարդկանէ»**։ Ինչպես տեսնում ենք, հարկատու են դառնում ոչ միայն քաղաքի, այլև գյուղի արհեստավորները։

Արհեստավորների և վաճառականների հարկատվության մասին Մ. Դոշը ևս իր «Դատաստանագրքում» գրում է. «Այլ թէ ընակիչն ընդ արուեստի և կամ ընդ վաճառի հարկիցին»***։ «Դատաստանագրքում» կան արժեքավոր փաստեր նաև արհեստավորների իրավունքների և պարտականությունների մասին.

«Արուեստաւորք ամենայն ըստ որում և իցեն արուեստի, եթէ հատուածով գործիցեն և եթէ վարձով, յորժամ ոչ ըստ հաճոյից տեառն գործիցեն, այլև զնիւթն ապականիցեն, դատաստանաւ է ըստ հաճոյից նոցա առնել դարձեալ, կամ զապականեալն ի գնոյն ըստ արժանւոյն լնուլ և ապա լիով հատանել վարձու։ Ապա թէ ոչ պակասեալ ի վարձէ ըստ արժանւոյն որպէս տեսանին դատաւորք արասցին»****։

«Դատաստանագրքի» այս կանոնը ցույց է տալիս արհեստավորական դասի հարաբերությունը պատվիրատուի հետ (լինի նա առևտրական թե ֆեոդալական դասից)։ Արհեստավորները պատասխանատու էին պատվիրած ապրանքի որակի և քանակի կամ ժեծության համար, հակառակ դեպքում, անտարբեր վերա-

* Կ. Ղսիդարյան,—«Ավանի Երկրեզվյան ծածկագիր արձանագրություն», Երևան, 1946, էջ 18—20։

** Կ Գանձակեցի, էջ 349։

*** Մ. Դոշ—«Դատաստանագիրք», էջ 314։

**** Նույնը, էջ 436։

բերվողները և կամ չարամտորեն յուրացում կատարողներն ու փչացնողները ենթարկվում էին դատական պատասխանատվության։ Այստեղից էլ իմանում ենք, որ արհեստավորներն աշխատում էին թե «հատավարձով» և թե «վարձով»։ Աշխատանքի այդ ձևերը, անշուշտ, նպաստում էին աշխատանքի ինտենսիվացմանը։ «Վարձով» աշխատանք կատարելը, մեզ թվում է, պետք է հասկանալ նաև այն, որ որոշ խավի արհեստավորները, ինչպես միշտ, աշխատել են ոչ իրենց սեփական արհեստանոցում, այլ եղել են «որդավարձով» աշխատողներ, որոնք գործյալ պատասխանատու էին իրենց հանձնարարված պատվերի որակի և ժամանակին ու անթերի կատարելու համար։

Արհեստավորը թեպետ իր ապրանքի ազատ վաճառողն էր և ձեռք էր բերել անկախություն, սակայն փաստերն ասում են, որ ֆեոդալ իշխանների և վաշխառուների կողմից նա հաճախ ենթարկվել է հարկադրման, շահագործման։ Այսպիսի պայմաններում արհեստավորությունը պետք է որ իր շահերը պաշտպանելու համար, միջոցներ ձեռնարկեր՝ կազմակերպեր հավաքություններ և հանդես գար միացյալ ուժով։ Այս ճանապարհով է ընթացել թե Եվրոպայի և թե Արևելքի քաղաքների արհեստավորության զարգացումը։ «Միացյալ ավազակային ազնվականության դեմ միավորվելու անհրաժեշտությունը, շուկայական ընդհանուր շենքերի կարիքն այն դարաշրջանում, երբ արդյունագործողը եղել է միաժամանակ և վաճառորդ, դեպի ծաղկող քաղաքները ներհոսող փախստական ճորտերի կոնկուրենցիայի աճը, ամբողջ երկրի ֆեոդալական հասարակարգը, այս ամենը ծնեցին հավաքություններ»*։

Անհավանական չէ, որ 10—14-րդ դարերում հավաքություն եղած լինի նաև Հայաստանի գլխավոր քաղաքներում, մասնավորապես Դվինում և Անիում։ Սակայն մի հանգամանք չպետք է մոռանալ, որ Հայաստանի արհեստավորական կազմակերպության հարատևությանը և լիակատար ձևակերպմանը զգալի չափով խանգարել են երկրի վրա տեղի ունեցող հաճախակի արշավանքները։ Մանավանդ Հայաստանի արհեստավորական դասը ենթակա է եղել անընդհատ և բռնի տեղահանման, գերեվարման և արտագաղթի՝ դեպի հարևան երկրները։

Եղած փաստերով, դժբախտաբար, առայժմ ի վիճակի չենք պարզելու համքարային կազմակերպության իրավական կողմն իր ամբողջությամբ։ Այդ հարցը լուծելու համար անհրաժեշտ է իմանալ արհեստավորության աշխատանքի պրոցեսի տեղությունը, վարպետի և իրեն ենթակա քարգահի ու աշակերտի փոխհարաբերությունները։ Բայց և այնպես կողմնակի և տեղական փաստերից կարելի է հնարավորության չափ տալ Հայաստանում համքարությունների գոյությունը և արհեստավորների համախմբումն այդ կազմակերպությունների մեջ։

Հայաստանը տնտեսական ու կուլտուրական սերտ կապեր ուներ հարևան և հեռավոր այնպիսի երկրների հետ, որտեղ այդ դարերում արդեն կային համքարություններ. օրինակ՝ Պարսկաստանում և Միջին Ասիայում գոյություն են ունեցել արհեստավորական կազմակերպություններ 9—10-րդ դարերում, և Հայաստանը հազիվ թե բացառություն կազմեր, քանի որ մոնղոլների տիրապետության ժամանակ մանավանդ նա հանդիսանում էր այդ երկրների միջև տեղի ունեցող առևտրական հարաբերությունների հանգուցակետը, գտնվում էր միևնույն տիրապետության ներքո և հենց Հայաստանը մինչ այդ էլ առևտրական հարաբերության մեջ է եղել Պարսկաստանի, Միջին Ասիայի և Բյուզանդիայի հետ։ Սակայն, բավական չէ տեսականորեն կամ համեմատական եղանակով անել ենթադրություններ, անհրաժեշտ է ավելի իրական փաստերով, այն է՝ մատենագրական կամ նյութական կուլտուրայի հուշարձանների՝ մեզ հասած տվյալներով ժառանգել այս հարցին։ Պրոֆ. Յակուբովսկին Սարայ-Բերքեի մասին խոսելիս, գրում է, որ Ղրիմից և այլ վայրերից այնտեղ գաղթել են արհեստավորներ։ Սարայից հանված նյութական կուլտուրայի հուշարձանները ևս հաստատում են Հայաստանի ու Միջին Ասիայի քաղաքների առևտրական կապը և հայ արհեստավորության առկայությունն այնտեղ։ Շուկայի համար արտադրված իրերի նմանությունը նկատվում է ոչ միայն Կերամիկայի, այլև մետաղյա իրերի վրա։ Սարայում գտնված մի կավե բեկորի վրա արաբերեն տառերով պարզ գրված է հայ վարպետի անունը՝ «Յարգիս»։

* К. Маркс и Ф. Энгельс—Сочинения, IV, стр. 14—15.

Ավելին։ Միջին Ասիայում կառուցված շենքերի և իրերի վրա նկատվում են արհեստավոր վարպետների նույն այն նշանները, որոնցից կան նաև Հայաստանում։ Միջին Ասիայի ցեխային կազմակերպությունների վերաբերյալ կան բազմաթիվ հիշատակություններ։

Նկ. 45. Կերամիկայի կաթսա, վրան փորագրված «Սարգիս» անունը. գտնված է Միջին Ասիայում։ (Էրմիտաժ)

14-րդ դարի արաբ պատմիչ Իբն-Բատուտան գրում է. «Պարսկաստանի հարավ-արևմտյան մասի խոշոր քաղաքներից Սալահանում և Շիրազում, ինչպես և Փոքր Ասիայի քաղաքներում ավյալ բնագավառի արհեստավորներն ընդգրկված են եղել համապատասխան կազմակերպությունների մեջ, նրանք ունեցել են իրենց գլխավորը, որ կոչվում է «քելու»։ Այդ կազմակերպություններ



թյունների հատկանշական գծերից մեկն այն է, որ նրանք հյուրասիրություն են ցույց տալիս ճանապարհորդներին։

Փոքր Ասիայում արաբ պատմիչը ծանոթացել է երիտասարդ արհեստավորների հետ, որոնք կոչվում էին «ախիա», որ նշանակում է եղբայրներ, երիտասարդ մարդիկ. դրանք զանազան արհեստների ենթավարպետներ էին։ Այս եղբայրությունները թեպետ իրենց հիմքում ունեին արտադրական բնույթ, սակայն շատ հեռու էին զնացել իրենց արհեստավորական խնդիրներից, դարձել էին հասարակական ուժ, խառնվում էին քաղաքական կյանքի մեջ և համառ կռիվներ մղում անհաճելի իշխանության դեմ։ Նրանց եղբայրության արտաքին հատկանշական գիծն էր բարձր թաղիքե գլխարկը և գոտուց կախված դանակը։ Նրանք ունեին իրենց զեկավար շեյխերը, առանձին գանձարաններ, շենքեր, հատուկ նշաններ, բացի այդ՝ ունեին ընդհանուր սեղան և հավաքվում էին միասին։ Ապա ավելացնում է, որ ինքը Անատոլիայում ծանոթացել է կոշկակարների ցեխի շեյխի հետ, որը զեկավարում էր 200 արհեստավորի աշխատանքը Սվազում, հանդիպել է Ալիֆատա ախի-պիչակի (դանակ պատրաստողների) ցեխի մարդկանց։ Լոտիկե քաղաքում նա հանդիպել է զենքեր պատրաստող ցեխի արհեստավորներին*։

Եվրոպացի ճանապարհորդներից Շարդենը 1692 թ. խոսելով Պարսկաստանի համքարային միությունների մասին, կանգ է առնում նաև էջմիածնի զանգակատան 1683 թվի արձանագրության վրա, ըստ որի Թիֆլիսի արհեստավորները, հավաքված համքարության մեջ, պարտավորված են եղել էջմիածնին մոմ տալ տարեկան ամեն մի դուքանից (խանութից) մի չարեք (մի քառորդ), որի փոխարեն միաբանությունն իր հերթին պարտավոր էր ամեն տարի նավակատիկի օրը հիշել նրանց պատարագի ժամանակ**։

Ս. Եղիազարովն իր նշանավոր աշխատության մեջ*** ուսում-

* *Якубовский А. Ю.*—„К вопросу о происхождении ремесленной промышленности Сарая Берке, Лен-д, 1931, էջ 21—23։

** Յ. Եպ. Շանխաթունեան — «Սարգսութիւն հին Հայաստանեաց», հատ. Ա., էջ 40։

*** *Егиазаров С. А.*—„Исследования по истории учреждений в Закавказьи, часть II, Городские цехи, Казань, 1891 г.

նասիրել է նաև Երևանի, Կարսի և այլ քաղաքների արհեստավորական կազմակերպությունների կյանքը 18—19-րդ դարերում իրենց ողջ մանրամասնություններով։ Չնայած վերոհիշյալ մեջբերումները վերաբերում են 18—19-րդ դարերի արհեստավորության կյանքին, սակայն նման փաստերը մեզ հնարավորություն են տալիս այդ միավորությունների սկզբնավորումը տանել ավելի առաջ, քանի որ հիշյալ դարերում արհեստավորական կազմակերպությունները երևան են գալիս իբրև կատարելապես կազմակերպված, որոշ կանոնադրությամբ առաջնորդվող միություններ, իսկ այդ վիճակին հասնելու համար հարկավոր էր երկար ժամանակի փորձառություն, ամենայն հավանականությամբ համքարությունները Հայաստանում ձևակերպվել են Բագրատունիների շրջանում։

Անդրկովկասի համքարային կազմակերպությունների հնության մասին մենք ունենք այնպիսի հեղինակավոր գիտնականի վկայություն, ինչպիսին է ակադ. Ն. Մառը, որը խոսելով Կովկասի և Հայաստանի արհեստավորության մասին, գտնում է, որ նրանք եղել են ժառանգական, կիրառել են ընտրական սկզբունքը, գոյություն են ունեցել արհեստակցական եղբայրություններ, որոնք և հետագայում վեր են ածվել համքարությունների*։

Եղիազարովը խոսելով 19-րդ դարի էսնաֆության մասին, գտնում է, որ այդ կազմակերպության արմատները գալիս են ավելի հին շրջանից՝ 13—14-րդ դարերից։ Նա միաժամանակ օրինակ է բերում, թե ինչպես Արևմտյան Եվրոպայում, 1253 թ. Էտիեն Բուալոյի ժողովում, որտեղ հավաքված է եղել Փարիզի արհեստավորությունը, հայտնում են իրենց ցեխային կազմակերպությունների հնության մասին, չնայած մինչև այդ նրանք չեն ունեցել գրավոր կանոնադրություն։ Այնպես էլ Արևելքում համքարությունները սովորություններով են ղեկավարվել և չեն ունեցել գրավոր կանոնադրություն իրենց կազմակերպության վերաբերյալ**։ Նույն վիճակում են գտնվել համքարությունները նաև մեզ մոտ։

Մեր հին բանասերներից Շանշյանը, Մարանդյանը և ուրիշները, որոնք զբաղվել են Հայաստանի էսնաֆության

* Ակ. Н. Я. Марр—„Кавказский культурный мир и Армения", էջ 16—17։

** «Մշակ» օրաթերթ, 1890 թ., № 95։



խնդրով և նյութեր են հավաքել մեծ մասամբ վերջին դարերի վերաբերյալ, գտնում են, որ այդ կազմակերպությունների գոյությունը դալիս է հնից։

Շանշյանն իր «Երկու խոսք համքարության մասին» գրքում ասում է. «Համքարը հին է այնպես, ինչպես նրա արհեստը, կրոնավոր՝ ինչպես նրա պատրոնները»։

Ակադ. Մանանդյանն իր „О торговле и городах Армении" աշխատության մեջ խոսելով արհեստավորական կազմակերպությունների մասին, գրում է. «Արհեստավորների միությունները գոյություն են ունեցել Բագրատունիների շրջանի թե Բյուզանդական կայսրության և թե խալիֆայության ենթակա քաղաքներում»*։

Ինչպես հայտնի է միջնադարյան քաղաքների պատմությունից, արհեստավորական և առևտրական ցեխերը թե Բյուզանդիայում և թե եվրոպական քաղաքներում, ըստ իրենց արհեստների տեսակների, տեղավորված էին առանձին թաղամասերում և նրանց համար պետության կողմից սահմանված էր որոշ կարգ ու կանոն։

Ուսպենսկին իր „История Византийской империи" աշխատության մեջ հիշատակում է Ժնեվի գրադարանի 1893 թ. հրատարակված մի կանոնագիրք, ուր ի միջի այլոց խոսվում է նաև 22 ցեխերի մասին։ Այդ կանոնադրությունը պատկանում է 10-րդ դարին և տալիս է մանրամասն տեղեկություններ Բյուզանդական ցեխերի կոլեգիաների մասին, ծանոթացնում է նրանց իրավունքների և պետության հանդեպ ունեցած պարտավորությունների հետ։ Կանոնադրության մեջ հիշվում է նաև ցեխերի ավագների ու նրանց պարտականությունների մասին։ Այդ կոլեգիայի կանոնադրությունը, որ բաղկացած է 26 պարագրաֆից, իր մեջ ամփոփում է առևտրական և արհեստավորական ցեխերի ներքին կանոններն ու իրավունքները։ Այս նույն երևույթը գոյություն է ունեցել արևելյան երկրներում՝ Պարսկաստանում, Միջին Ասիայում, անշուշտ, նաև Հայաստանի մի շարք քաղաքներում։

* Ակ. А. Манандян—„О торговле и городах Армении", Ереван, էջ 165.

Արհեստավորական և առևտրական թաղամասերի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են տալիս 12—14-րդ դարերի նվիրատվական արձանագրությունները, որոնցից պարզվում է, որ Հայաստանում ևս արհեստավորներն ունեցել են իրենց հատուկ թաղամասերը։

Անիում Շապադինի թողած մի արձանագրության մեջ, որը վերաբերում է 1348 թ., հիշվում է «Գտակկարոց» թաղի մասին. «... ես Շապադինս... այլ նաու զԱչով պահեցի կէսն, որ Հովթը թվանց գնել էի, եւ մէկ կուղպակ, որ ի յԱմիր Հասնա գնել էի ի գտակկ[ա]րոցի խանապըրի դռանը դիմաց է»*։

Արջո-Առիճի անթվական մի արձանագրության մեջ հիշվում է «փոլկարարոց» և «սառաճփողոց»։

«Յանուն աստուծոյ հայրենիք որ կա վանիցս այս է։ Բաչխին բուրքն և ախոռն. և զ (6) պատարագ...։ Փոլկարարոց կուղպակն և տունն ի ներքևն, զ (6) աւր պատարագ. աւր (3) գ. Բունկանն և գ. (3) Մխիթարչին։ Աբդիլսահէ տունն դ. (4) աւր ժամ։ Յովհաննիսի տունն աւր գ. (3) ժամ։ Սարանփողոցի կուղպակն դ. (4) ժամ. բ. (2) աւր Շնահուորկանն և բ. (2) Գէորգա»։ Սառաճփողոցը հիշվում է նաև Բագնայրի անթվական մի արձանագրության մեջ**։

Հոռոմոսի 1251 թ. արձանագրության մեջ, որ թողել է Առիւծ անունով մեկը, կարդում ենք. «... եւ տուի ընձա զհայրենի զիմ կուղպակն, որ ի կաւշկակարոցին»***։ Նույն վանքի մի այլ անթվական արձանագրության մեջ կարդում ենք. «Վարհամ [Վահրամ] ետ կուղպակ ի Դարբնոց փողոցին մաւտ ի սբ. Գրիգորն»****։

Բագնայրի մի ուրիշ անթվական արձանագրության մեջ հիշվում է «Նալպանդոնոց» փողոց։

«Ես Թարիկ Թագուհի, դուստր Շարափշահի, եւ երկու կուղպակ յիմ կուղպականոյն, որ ի Նալպանդոնոցին...»*****։

Անիի 1213 թ. արձանագրության մեջ, որ վերաբերում է

* «Վիմական տարեգիր», էջ 169։
** Նույնը, էջ 223։
*** Նույնը, էջ 95։
**** Նույնը, էջ 241։
***** Նույնը, էջ 78։



Տիգրան Հոնենցին, կարդում ենք. «... Ես Տիգրան... եաու նուէրք ի սուրբ կաթուղիկէս զիմ Գանձակին կուղպակն, որ ի Կատանոցին»։*

Բագնայրի 1209 թ. վերաբերող արձանագրության մեջ հիշվում է «Բազնոց».

«Ես Մամխաթունս, դուստր Աչերեսին, եաու զիմ կուղպակն, որ ի փողոցկտերն է ի բազնոց...»**։

Այս բոլորից պարզ երևում է, որ Հայաստանի կենտրոնական քաղաքներում արհեստավորները, դրանց հետ միասին նաև առևտրականները, կենտրոնացած են եղել առանձին թաղամասերում։ Վերև հիշատակված թաղամասերից յոթը արհեստավորական են, իսկ մեկը (Բազնոց)՝ առևտրական։ Անտարակույս, այս թաղամասերի գոյությունը սերտորեն կապված է համքարային կազմակերպությունների հետ, որոնք պահպանվել են 18—19-րդ դարերում։ Այս առթիվ Ս. Եղիազարյանը հիշում է Թիֆլիսի Հավլաբարի փողոցներից «Շիլաչի» թաղը, որ նույն անունով է կոչվում նաև Երևանի թաղերից մեկը, ուր կենտրոնացած են եղել ներկարարները։ Անիի մի ուրիշ արձանագրության մեջ հիշվում է, որ բաժակի և քաթանի առևտրի համար իշխանության կողմից որոշված է եղել հատուկ վայր և այդ օրենքներին պարտավոր են եղել ենթարկվել այդ գործով բոլոր առևտրականները։ Պեղումների ժամանակ այս նույն շրջանից հայտաբերվել են մի շարք արհեստավորական և առևտրական շենքերի, խանութների մնացորդներ։

Անիից և Դվինից բացի՝ Հայաստանում արհեստավորական թաղամասեր են եղել գրեթե բոլոր գլխավոր քաղաքներում, ինչպես Էրզրումում, Ալաթում, Վանում, Կարսում, Երևանում և այլն, որոնց համքարություններն իրենց թաղամասերում շարունակվել են մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակը, ունենալով նույնիսկ իրենց հատուկ կանոնները (տես հավելված՝ Էրզրումի և Ախալցխայի արհեստավորների կանոններից նմուշներ)։

Ղրիմում 1607 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանում (Ստեփանոս Գրչի կողմից), քաղաքի գովքն ասելիս, նկարագրվում են արհեստավորական և առևտրական թաղամասերի գո-

* «Վիմական տարեգիր», էջ 54։
** Նույնը, էջ 49։

յությունն ու նրանց տեսակները։ Գրիչը, ինչպես երևում է, մեծ ափսոսանքով է հիշում անցյալը։

Աւերեցին և քանդեցին
Զայն շէն բոլոր ըզքաղաքնին
Երեք անգամ կողոպտեցին
Մինչ ճրոաքաղրս արուրին։
... Բաղնիկք և խանք կան գովելի.
Մաքուր ջրով աննըմանի,
Ամանութքն շուկայքն բարով ի լի
Վայ ինձ, որ ես անտի ելի։
Վաճառականաց էր նա տեղի
Եւ չորս կողմանց գային յայտնի
Ծախէր բեռնով ապուրշումի.
Եւ այլ զինչ որ բեռնով լինի։
Եքնէր նախշի ապուրշումի,
Գունըզգունաց յամէն ցեղի,
Ղազազի բան և գերձակի.
Եկթայ թավթան վալայ շարի
Զիվթա թավթա պուրուն-ճուկնի
Մուղատամներ սայլ զումաշի.
Այս ամ զոր յիշեցի,
Ի միջանէն բեռնով էլնի։
Կայր պեղաստան մէնն գմբէթի.
Բազում խանութք ի յիւր միջին
Շատ գոլվաթորք նստեալ կարգի.
Ծախեն քըթան եւ քեսայի։
Գրատակարնոցն ի յիւր քովի
Կարեն ոսկով արախճընի.
Եւ պազաստան մ՝այլ հըրէի
Մէջն էր զումուշ և չուխանի։
Ոսկերչնոցն էր գովելի,
Շամայ սպահի պազար նմանի
Կայր շատրուան մի ի միջի
Եւ վարպետայք խանութք ի լի։
Ելնէր ադէկ թաս ու թափսի
Վարպետարան մեծ կըղպաքնի
Եւ գոյնզգոյն սախտիանների
Եւ այլ բաներ գարմանալի։
Զոր մէկն ասեմ գոութախնին.
Զանիաթ-քարքն և զարուեստնին,
Սիրաս կայրի և կըսկըծի. շատք ասնագեն և ծիծաղին*։

Չնայած այս հիշատակարանը վերաբերում է 17-րդ դարի սկզբին, սակայն փաստերը ցույց են տալիս, որ սելջուկյան և ապա մոնղոլական տիրապետության վերջին շրջանում, Հայաստանի քաղաքային կյանքի անկման հետ միասին, արհեստավորներն ու առևտրականները գաղթելով Ղրիմ, Միջին Ասիա և այլ վայրեր, իրենց հետ տարել են հայկական կուլտուրան, արհեստն ու արվեստը՝ հարմարեցնելով նոր ապրած միջավայրին։ Դրա համար էլ դառնացած և մեծ ափսոսանքով են հիշում անցյալը։

Արհեստավորական կազմակերպությունների հարցի հետ սերտորեն կապված է նաև առևտրա-ֆինանսական օրգանների գոյության խնդիրը։ Այդ օրգանների գոյության արմատները ևս, ինչպես և մյուս վարչական մարմիններինը, գալիս են հնից։ Վիճական արձանագրությունների մեջ բազմիցս հիշվում է «տաղմաչիների» մասին, որոնք հավաքում էին առևտրական մաքսը։ Եղել է չափ ու կշիռների և շուկայի հսկիչ, կամ գլխավոր, որ կոչվել է «մուքթասիբ»։ Ալիշանի «Շիրակ» աշխատության մեջ կարդում ենք. «Յետ պատրոնացս աւագագոյն կամ կարևորագոյն ի պաշտօնէ այս Անւոյ՝ երևին ոստիկանք հարկաց կամ մանաւանդ մաքսից, տաճիկ բառիւ Տամղաճի (կնքահայր) կոչեցեալ։ Ոչ գիտեմ զնոցա տեղի ունէր եթէ զքաղաքատեսչացն՝ ի հնագոյն արձանս յիշեալ մուսայիպն որ է Միւհթէսիպ ըստ արաբաց ոստիկան համարակալ չափուց ու կշռոց»**։

Այս օրգանի մասին հիշում է նաև Ս. Գունդստաբլն իր «Դատաստանագրքում». «պարտ է գիտենալ, որ զվաճառացն և զբազրնոյն սահմանն ի քաղաք և ի դուրս՝ պարոնութիւնն սահ-

---

* ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Մատենադարան, Ձեռագիր № 2672, էջ 400 տ. բ։

** Ալիշան—«Շիրակ», էջ 101։

մանկ. գիրաւունքին գչափն և գկշիռն և գայլն յայսպիսեացս և դուքսերն մուխթարնին ի վերայ այսր ասատելով ըղորդ պահին»*։

Մխիթար Գոշն ևս իր «Դատաստանագրքում» հիշատակում է, որ չափ ու կշռի ասպարեզում գեղծարարութիւն կատարողների համար սահմանված է եղել առանձին պատիժ։ Այդ երկու դատաստանագրքում հիշվում են շուկայական «Մուխթասիբի» գոյութեան մասին։ Այդ նույն օրգանի մասին հիշատակութիւն ենք գտնում նաև Բյուզանդացի Մագիստրոս Ահարոնի 1045—1054 թ. թ. թողած արձանագրութեան մեջ. «... այլ եւ ի խնդրոյ իշխանաւորացս խափանեցի և զգիւտ երկուց լտերց, զոր տայր մուքսիքն...»**։

Վերոհիշյալ օրգանի գոյությունը պահպանվել է նույնիսկ 19-րդ դարում։ Երվանդ Շահազիզը իր «Հին Երևան» աշխատության մեջ խոսելով առևտրի մասին, ասում է. «Առևտրի շուկայի հսկողությունը հանձնված էր շուկայապետին և այդ ձևը պահպանվել է Երևանում և Հայաստանի մյուս քաղաքներում 19-րդ դարում, որը կոչվել է «բազարբաշի»։

«Դաղմաչիներից» և քաղաքային ադմինիստրացիայի մյուս ներկայացուցիչներից բացի, վիմական արձանագրություններում և մատենագրական աղբյուրներում կան հիշատակություններ քաղաքների գլխավորների—երիցանիների մասին։ Մատենագիրներից Արիստակես Լաստիվերցին Անիի գրավման պատմության մեջ հիշատակում է քաղաքի գլխավորներին. «իսկ քաղաքացի գլխաւորքն, որ նստէին Անի...»։ Ապա նույն պատմիչը գրում է. «... այն որ առաջ ցուցաւ. Դանիէլի ի տեսողութեան իւրում, և կոչեալ զգլխաւորս քաղաքին, և զմեծամեծս յիշխանացն ասէ ցնոսա, թէ ոք ի ձէնջ վստահանայ ելանել զօրօք յարևելս, և դադարեցուցանել զգոռն պարսից, և նուաճել զաշխարհս ի խաղաղութիւն»***. մի այլ տեղում ասում է. «Եկեալ առաջի գլխաւորքն քաղաքին՝ խնդրեն, թէ մինչդեռ կենդանի ես, կացո զոք թագաւոր, որպէս զի մնասցէ առանց խռովութեան քաղաքս»****։

* Գանդասար—«Դատաստանագիրք», Էջմիածին, 1918 թ., էջ 63։
** «Վիմական տարեգիր», էջ 27։
*** Ա. Լաստիվերցի, էջ 61, 116։
**** Նույնը, էջ 119։



Ավելի ուշ շրջանի մատենագիր Ստ. Օրբելյանը ևս գրում է. «Զոր և անգիտեցեալ Իվանէի հնձեալս գումարէր և զօրս կազմէր։ Եւ էին միաբան ամենայն գլխաւորք և ազատք...»*։

Այս փաստերը հաստատում են, որ այդ «երիցանների» քաղաքի (գլխավորների) ինստիտուտը գոյություն է ունեցել մեզ զբաղեցնող ժամանակաշրջանում, որի մասին Ս. Եղիազարյանն ևս իր հիշյալ աշխատության մեջ գրում է. «Ավագների սիստեմը և վարչական օրգանների իշխանությունը մնում է, ինչպես գոյություն է ունեցել 11—14-րդ դարերում, միայն անվանական փոփոխությամբ»։

Արհեստավոր վարպետը, որ համարվում էր արհեստանոցի տերն ու տնօրենը, ինքը միայնակ չէր կարող արտադրել այն, ինչ որ անհրաժեշտ էր լայն շուկայի պահանջները բավարարելու համար։

10—14-րդ դարերում Հայաստանի արհեստավորության մեջ իրենց ուրույն տեղը պետք է ունենային ենթավարպետը և աշակերտը։ Այլ կերպ հնարավոր չէ պատկերացնել արհեստագործության այդ զարգացած վիճակը։

Հայաստանի կենտրոնական և գլխավոր քաղաքներում՝ Անիում և Դվինում, գոյություն են ունեցել խոշոր արհեստանոցներ, որտեղ կարող էր աշխատել վարպետը իր քարգահի և աշակերտների հետ։ 1907 թ. Անիում և 1939 թ. Դվինում կատարված պեղումների ժամանակ գտնվել են մեծ քանակությամբ պղնձի և այլ կահկարասիքի մնացորդներ, որոնք ցույց են տալիս խոշոր արհեստանոցներ լինելու փաստը։

Մ. Գոշի «Դատաստանագրքում» «հատվածով» և «վարձով» աշխատելու մասին եղած արտահայտությունը ցույց է տալիս արդեն արհեստավորների աշխատանքի տեսակը արհեստանոցում։ Հայկական մի շարք աղբյուրներում կան հիշատակություններ արհեստանոցների մասին. «Զարուեստանոցն, և զարուեստս թողեալ, կազմեաս զայնպիսի արուեստանոցս դիւաց (զթատրոնս)։ Այս արուեստք քան զամենայն արուեստս լաւագոյն է, սորա արուեստանոցն յերկինս շինեալ է» (Հայկազյան բառարան)։

Ալիշանն իր «Նշմարք»-ում Անիի մասին խոսելիս՝ հիշում

* Ստ. Օրբելեան—Պատմ. Նահանգին Սիսական, Թիֆլիս, 1917 թ., էջ 284։

է այնտեղ արհեստանոց, «Փնդուկք կամարակապս», ինչպես նաև «Ազգի-ազգք կուղպաք արուեստից և ձեռագործաց»։

«Անվ ատորերկրյա հարկն ալ վերերկրո հատակն և հողակույտներն ալ որոնք կծածկեին անոնց մեծագոյն մասը, գրեթե բոլոր կերպարանը, փողոցները, զուգակները, գործատները, կողպակները և իջևանները»։

Այս գործարաններում է կենտրոնացած եղել այդ ժամանակվա արտադրության մեծագույն մասը։

Համքարային կազմակերպությունները, ինչպես Արևմտյան Եվրոպայում, այնպես էլ Արևելքում մեծ մասամբ եղբայրական և կրոնական որոշ սկզբունքներով են կազմակերպել։ Ցվյալ համքարությունն իր անդամի առօրյա կյանքին, դժբախտության և ուրախության մասնակից է. արհեստավորները ցույց են տալիս իրար փոխադարձ օգնություն։ Այսպիսի հարաբերություն պետք է որ գոյություն ունեցած լիներ նաև մեզ մոտ։

«Զի կարասցեն զարուեստակիցսն ի տագնապս ապրեցուցանել։ Եթէ արուեստագետք առ արուեստակիցսն այնչափ խնամակալութիւն ցուցանեն։ Ժողուէին մաքաւորքն առ արուեստակիցն» (Հայկազյան բառարան)։

Արհեստավորական կազմակերպությունների հարցը քննելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նրանց ներքին կարգերին—կանոններին։ Համքարություններն ունեցել են իրենց համայնական կարգերը, նրանց ներքին վեճերը լուծվել են արհեստավորական առանձին խորհուրդներում։

Մխիթար Գոշն իր մի շարք առակներում հանդես է բերում տարբեր արհեստավորների մեջ գոյություն ունեցող վեճերը, օրինակ՝ երկաթագործի և պղնձագործի, բրուտի և կտավագործի, դերձակի և ջուլհակի միջև և այլն։

Այդ բոլոր վեճերը, որ արտահայտվում են առակների ձևով, ոչ այլ ինչ են, բայց եթե կազմակերպված տարբեր ցեխերի վեճեր միմյանց դեմ, որոնք իր ժամանակին Մխիթար Գոշի կողմից ենթարկվել են քննադատության։ Նա իր առակներից մեկում խոսելով տարբեր արհեստներ ունեցող արհեստավորների



միջև ծագած վեճի մասին, ցույց է տալիս նաև այդ վեճի լուծումն առանձին ատյանի միջոցով։

«Պղնձագործ և երկաթագործ ի խնամենալն՝ արուեստիւ ճոխաբանէին. և ի լինել հակառակութեանն, յատեան եւս երթային ծերոց և նոքա մեծարգոյ ցուցին զերկաթագործ ասելով, թէ հաստարակաց օգտակարն պատուական է»*։

Գոշի այս կարևոր հիշատակությունը ցույց է տալիս, նախ՝ որ պղնձագործի և երկաթագործի վեճը լուծվում է ծերերի առանձին ատյանում, և երկրորդ՝ վեճը լուծվում է հօգուտ այն արհեստավորի, որի արտադրությունն ավելի մեծ օգուտ է տալիս տվյալ միջավայրի և ժամանակի հասարակության ընդարձակ շրջանին։

Եթե այդ ինստիտուտը (ծերերի ատյան) գոյություն է ունեցել Հայաստանի քաղաքներում, ապա համքարային կազմակերպությունների գոյությունն անհերքելի փաստ է և այլ կերպ էլ լինել չէր կարող։

Կրկնենք մի անուղղակի փաստ ևս, որ դարձյալ գալիս է հաստատելու արհեստավորական համքարային կարգերի հնությունը։

Բանասեր Մարանգյոզյանը, որ զբաղվել է համքարության խնդրով, իր մի հոդվածում, որտեղ խոսում է Կարինի (Էրզրումի) արհեստավորական համայնական կարգերի մասին, գտնում է, որ այդ կարգերը գալիս են հնուց և այդ հնության մասին նա տեղեկություն է ստացել Ախալցխայի ծխատեր քահանա տեր Զորաբաբել Դալանջյանից, որը Ախալցխայում քահանա եղած ժամանակ իր ազգական Յայլախանյանցների (որոնք մինչև օրս էլ գոյություն ունեն) մոտ եղած մի հին ձեռագրում կարդացել է այն մասին, որ Մուրադ Բեյը (Մուրադ Ա—օսմանյան սուլթան), երբ ծպտյալ շրջում է ժողովրդի մեջ, մի անդամ ներկա է լինում մի դատավարության, ուր քննվում էր մի թուրք աշակերտի բողոքը հայ վարպետի դեմ, որն իրեն ծեծել էր։ Հայ վարպետը դատարանում հայտնում է, որ արհեստավորների մեջ գոյություն ունեն համայնական կարգեր և իրենց միջև եղած վեճերը քննվում են համայնական այդ դատարանում և ոչ թե պե-

* Մ. Գոշ—«Առակք», էջ 134։

տական դատական ատյանում։ Սուլթանն այդ դեպքից հետո էսնեֆության ավագներ է նշանակում տաճիկ շեյխերից և հրաժարում է աջակցություն ցույց տալ էսնեֆությանը։ Այս բոլոր փաստերն անվիճելիորեն ապացուցում են համքարական կազմակերպությունների գոյությունը միջնադարյան Հայաստանում։ Սակայն մենք չենք կարող առայժմ քննության նյութ դարձնել աշակերտի և վարպետի, վերջինիս և քարգահի միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունը՝ բավականաչափ փաստեր չլինելու պատճառով։ Գոշի «Դատաստանագրքում» հատավարձի և օրավարձի հիշատակությունները դեռևս մեզ հնարավորություն չեն տալիս միջամուխ լինելու սոցիալական հարցի քննությանը, քանի որ չունենք այլ օժանդակ տվյալներ։ Սակայն, հենց համքարության գոյության փաստը, ինչպես և վարձու աշխատանքի մասին եղած հիշատակությունները հիմք են տալիս մեզ հանգելու վերոհիշյալ եզրակացության։

## Ա Ղ Բ Յ Ո Ւ Ր Ն Ե Ր

Անհրաժեշտ ենք համարում հիշատակել այն աղբյուրները, որոնք հիմք են ծառայել մեր ուսումնասիրությանը և որոնք վերաբերում են ֆեոդալական Հայաստանի 9—13-րդ դարերի արհեստներին և նրանց հետ կապված խնդիրներին։

Մենք հիմնականում օգտագործել ենք հայ և օտարազգի մատենագիրներ, վիմական արձանագրություններ, օրենսդրքեր, այլևայլ ձեռագրերի զանազան հիշատակարաններ և նյութական կուլտուրայի հնացորդներ։ Միաժամանակ, որպես օժանդակ աղբյուրներ, օգտվել ենք նաև առակներից ու երգահաններից։

Սույն աշխատության մեջ օգտագործվել են գլխավորապես հետևյալ մատենագիրները՝ Ղ. Փարպեցի (5-րդ դար), Սեբեոս (7-րդ դար), Ղևոնդ Երեց (8-րդ դար), Թովմա Արծրունի (10-րդ դար), Ստ. Տարոնցի—Ասողիկ (10—11-րդ դ.դ.), Ա. Լաստիվերտցի (11-րդ դար), Կ. Դանձակեցի (13-րդ դար), Վ. Վարդապետ (13-րդ դ.), Ստ. Օրբելյան (13—14-րդ դ.դ.)։

Մատենագրական աղբյուրներում քիչ տեղեկություններ կան Հայաստանի բնակչության արհեստների և ժանավանդ հասքարական կազմակերպությունների մասին, ուստի նրանցով հնարավոր չէր լրիվ պարզել արհեստավորական կազմակերպությունների ներքին հարցերը։

Արձանագրությունների նկատմամբ գլխավորապես օգտագործել ենք Կ. Կոստանյանցի կազմած «Վիմական տարեգիրք» ժողովածուի նյութերը (հրատ. Գիտությունների Ակադեմիայի, Պետերբուրգ, 1913 թ.)։ Գլխավորապես ուշադրություն ենք դարձրել 10-րդ դարից հետո եղած արձանագրություններին, որոնք շահեկան տեղեկություններ են տալիս ոչ միայն հարկերի և շինարարական հարցերի, այլև արհեստավորների և արհեստավորական թաղամասերի վերաբերյալ։

Կարևոր աղբյուրների շարքը կարելի է դասել նաև Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», որտեղ կան առանձին տեղեկություններ արհեստների և արհեստավորության մասին։ Այդ տեղեկությունները ցույց են տալիս արհեստագործության մեջ գոյություն ունեցող աշխատանքի բաժանումը և իշխող դասի վերաբերմունքը արհեստավորական խավի նկատմամբ։

Բավական նյութ են բովանդակում նաև Վարդան Այգեկցու և Մխիթար Գոշի առակները։ Այդ առակները վերաբերում են մի այնպիսի ժամանակաշրջանի, երբ ֆեոդալական հասարակարգում առաջացել էր ճեղքվածք, հրապարակ էր եկել քաղաքային դասը (առևտրականներ և արհեստավորներ), որն իր անմիջական շահերով հակադրվում էր ֆեոդալական իշխող դասերին։ Առակները մեզ հետաքրքրել են այնքանով, որքանով նրանք կապված են արհեստների և արհեստավորական կազմակերպությունների զարգացման խնդիրների հետ։ Որոշ առակներում արտացոլվել են տվյալ դարաշրջանի սոցիալական հարաբերությունները և արհեստավորական խմբերի միջև եղած տարաձայնությունները։ Այս տեսակետից առակներում կան բավական հարուստ տվյալներ։

Մեր առջև դրված խնդիրը պարզելու համար օգտագործել ենք նաև մի շարք երգահաններ, որոնց մեջ ևս շահեկան տեղեկություններ կան արհեստների մասին։ Չնայած որ երգահանները, ինչպես վերևում ասացինք, չի կարելի համարել հիմնական աղբյուր, սակայն, նրանց մեջ հիշատակված արհեստների անունները հաստատում են, որ, իրոք, երգահանը գրած ժամանակաշրջանում Հայաստանում գոյություն են ունեցել այդպիսի արհեստներ։

Մեր կողմից օգտագործված երազահանների մեծ մասը պատկանում է 16-րդ դարին և ավելի ուշ շրջանի, բացառությամբ մեկի, որ գրված է 12-րդ դարում և 13-րդ դարում թարգմանված է հայերեն։ Այս երազահանում հիշատակված են 30-ից ավելի արհեստներ, որոնցից մի քանիսի անուններն արաբական և պարսկական ծագում ունեն, ինչպես, օրինակ, լկամարար, սլեհարար և այլն. սրանից եզրակացնում ենք, որ արհեստների այդ անունները ծանոթ են եղել Հայաստանի բնակչությանը, ուստի և թարգմանիչն ավելորդ է համարել այդ արհեստների անունների հայերեն թարգմանությունը տալ։

Մենք անհրաժեշտ չափով օգտագործել ենք նաև նյութական կուլտուրայի մնացորդները, գլխավորապես հին շենքերը, քաղաքատեղիները, բարելեֆները, արտադրության գործիքները, տնային իրերը, արդ ու զարդերը և այլն։ Այս մնացորդների միջոցով մենք ծանոթանում ենք Հայաստանի և նրա հարևան ժողովուրդների մշակույթի, արհեստների, արվեստի, տեխնիկայի և կենցաղային սովորությունների հետ։

Նյութական կուլտուրայի մնացորդներից մենք գլխավորապես օգտագործել ենք Դվինի և Անիի պեղումներից հանած իրերը, որոնք գերազանցապես համընկնում են մեզ հետաքրքրող դարաշրջանին։

Բացի սկզբնաղբյուրներից, օգտագործել ենք նույնպես մի շարք ուսումնասիրություններ, որոնք վերաբերում են արհեստներին և համքարություններին կամ ամբողջովին վերաբերում են այդ հարցերին։ Այդ աշխատություններից հիշատակելու է А. Якубовский—„К вопросу о происхождении ремесленной промышленности Сарая Берке“, Ленинград, 1933, նույնի „Самарканд при Тимуре и тимуридах“, Ленинград, 1933։

Այս մոնոգրաֆիաներում հեղինակը տվել է Սարայի և Սամարղանդի տնտեսական զարգացման պատկերը, առևտրական հարաբերությունները՝ կապված արհեստների և արհեստավորական կազմակերպությունների հետ։

Սրանց մեջ քննարկվում են նաև այդ ժամանակվա Հայաստանի արհեստների և տնտեսական զարգացման որոշ հարցերը։ Կան առանձին աշխատություններ և մի շարք հոդվածներ՝ Անդրկովկասի համքարական կազմակերպությունների մասին, որոնք



վերաբերում են 18—19-րդ դարերին։ Դրանցից արժեքավոր է Սողոմոն Եղիազարյանի „Исследование по истории учреждений в Закавказьи“, часть II („Городские цехи„), Казань, 1891.

Եղիազարյանն իր աշխատության մեջ տվել է Անդրկովկասի համքարային կազմակերպության ամբողջ պատմությունը, պարզելով նրա թե տնտեսական և թե իրավական կողմը. նա այդ բոլորը կապել է միջնադարյան եվրոպական երկրների՝ Գերմանիայի և Ֆրանսիայի համքարությունների հետ, բայց քիչ է խոսել այդ կազմակերպությունների հանդես գալու ժամանակի մասին, որոնց արմատները, մեր կարծիքով, պետք է փնտրել 10—14-րդ դարերի Հայաստանի տնտեսական և սոցիալական հարաբերությունների հիմքում։

Համքարության վերաբերյալ ունի առանձին աշխատություն Ախվերդովը („Тифлисские амкары“, 1883). «Մշակ»-ի համարներում վերատպված են Մարանդյոզյանի, Ասլանյանի և ուրիշների հոդվածները Ախալցխայի, Կարսի և Էրզրումի «էսնաֆության» մասին։

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### (ՍԱՀՄԱՆԱ) ԴՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՅՄԱՆԻ

Շ(նոր)հոք ամենասուրբ և խաղաղարար Հոգուն Աստուծո և ինքնահոժար հավանությամբ մեր այս Կարին քաղաքի բարեկարգ իշխան ազայից, խոհական արհեստավորաց և բոլոր իսկ բարեմիտ ընակչաց՝ սահմանվեցավ քաղաքական հարկատվության այս հաճելի կանոնը, որ ամեն մարդ յուր առեստուրին գյորե և մեկը ծախածին գյորե և մյուսը ձեռքը անցածին գյորե և այլն, ինչպես որ ույժիշն է և հասարակության բարի է. որով կվերացուցվի անիրավությունը՝ անօրենությունը՝ խռովությունը՝ զրկանքը և բամբասությունը՝ անիծաբանությունը՝ հայհոյությունը՝ ոխակալությունը. և ամեն չարյաց արմատ տնելությունը. և կհաստատ(վի) օրենքը՝ խաղաղությունը՝ բարեհամբավությունը՝ քաղցրաբանությունը՝ ճշմարտությունը՝ և խոկական քրիստոնեական (ան)բիծ հավատ հատկությունը և ամեն բարյաց մայրը, այսինքն եղբայրսիրությունը։

* * *

«—» Բայց մեք հանուն ամենասուրբ երրորդության հավատացյալ քրիստոնեական ճշմարիտ օրինոք կրթյալ բոլոր դեմուրչի գյուռճու դրան քյոշեի համայն վարպետներս՝ այս վերը հիշված քաղաքական սահմանադրության բարի լինելը ճանչնալով միաբանությամբ և եղբայրական սիրով հետևեցանք. և ահա ամենքս վկայությամբ աստուծո հրևշտակաց. և մարդկանց) հանուն ամենասուրբ երրորդության հոր և որդվո և հոգվույն սրբո ուխտ կդնեմք, որ որքան թե մեր դեմուրչության արհեստին մյութալիխ եղած և թե մյութալիխ չեղած ապրանք առնումք և ծախեմք. և որքան երկաթեղեն որ շինեմք և ծախեմք. տալի երկաթեն և լարով ծախված բահեն մատե. բոլոր ծախած-



ներուս մեկ զուրուշին մեկ փարայ քաղաքական հարկը պարտական եմք հատուցանել գանձանակին. բայց սալի երկաթին և լարով ծախված բահին երկու զուռուշին մեկ փարայ պարտական եմք առանց ստության վճարել գանձանակին. զերեմ մեր միաբանությանը համար գանձանակ մի հաստատեցինք և Սիմոն եղբայր գանձապետ կարգեցինք։

Այս հարգելի գանձապետ եղբայրն մեր կատարյալ ջանադրությամբ ամենայն հոգածությամբ և ճշմարիտ հավատարմությամբ պատասխանե մուխայեթ լինել և մեր քյոշեի էնաֆի բոլոր ծախած ապրանքին հարկը վերը գրված պայմաններուս գյորե շարթե շաբաթ շրջել և ժողովել ու գանձանակը լեցնել մինչև ի մեկ ամսո լրումը և ամեն մեկ ամսագլխուն մեր քյոշեի միաբանության երևելի անձանց գիտությամբն գանձանակն բացվի և անոր արդյունքովն ժամանակ առ ժամանակ անխռով խաղաղությամբ առանց բանտի և կապանաց մեր քաղաքական հարկը անտարունջ հատուցվի որ տուածնիս ալ աստուծո առջևը լինի և չկորսվի։

* * *

«... Եվ ասիկ ալ ազեկ միտք առնելու է. թե ինչ կերպիվ և իցե եթե մարդ մի այս պայմանիս մեջն է աստուածմեն չվախենալով զգուշություն չունենայ և հինգ փարայի անիրավություն ընե հասարակության քեսեին. այն հինգ փարայն գողէ. և Քրիստոսի սուրբ ավետարանեն և սուրբ եկեղեցվո կանոնական սահմանադրութենեն կլսեմք և կհավատամք. որ գողին խոստովանությամբ թողություն չի լինիր և քահանայն չի կրնա անոր թողություն տալ. մինչև որ գողցածը ինչենե (՞) տիրոջը չհասցնե կամ անկեց թողություն չառնու. և եթե այն գողցածին տերը կեցած իքեն տիրոջը չհասցնե կամ անկեց թողություն չառնու, և եթե այն գողցածը բյություն ողորմություն տա, աստուծո ընդունելի չէ։

* * *

Զերեմ ինչ մարդո վերա որ կերպով մի անիրավություն և ստություն գտնվեցավ. յոլի էրքյանի դատաստանաց իրավունքով դատվելեն և նախատվելեն ետքը յուր ականջը փակելուն և այս-

աստվածային բաներուս մտիկ չընելուն համար խանութը կփակեմք. գող ըլլալուն համար աստուծո բարեը չպիտի անոր տամք և առնումք. թե կամապաշտությամբ անդեղջ մնա խանութին ապրանքովն ձեռքին կառնումք և բեռան կընեմք։ Իսկ եթե մեղքը ճանչնա և մեղայական զղջումով թողություն խնդրե. ըրած անիրավության և գողության մեկ փարային տեղը չորս փարա պիտի առնումք գանձանակին. և խաղան դեվյուրմիշ ընել տալով. ապա թե մեր էսնաֆին մեջ պիտի ընդունենք. և մարդ մի այնպիսի խարեբա գող անողորժին չպիտի ողորմի, և անոր մեկ փարայի հիլլեի չարության գործը չպիտի ծածկե. թե մեծ ըլնա այն անիրավը և թե փոքր, թե երևելի մարդ ըլլա և թե աղքատ։ Զերեմ ոք որ հիլլեպաղ մարդուն պահպանություն ընե և տեր լինի. կամ խաթր նայելով չխոսի. և մեր էսնաֆի քյոշեի վարպետաց և երևելի անձանց և գանձապետ եղբորը եթե չհայտնե ինքն ալ անիրավե և անոր գործքին իշխանե և հանցավորի դատաստանով նախատվելու է։ Ապա ինչպես որ զեմյուրչի էսնաֆի համայն հավատացյալ հայազգի եղբարքս համախոհ միաբանությամբ զրել տալով այս ուխտադրության և պայմանի գիրս կնքեցինք և մատնահարեցինք. այսպես համախոհությամբ վրեժխնդիր եմք հիլլեքեր անիրավ մարդուն։ Եւ այս աստվածահաճո խաղաղաբար և հասարակաց օգուտ սահմանադրությունս պարտական եմք մինչև ի ժամ հաստատուն պահել. այնպես ալ պարտական են հաստատուն պահել մեզնեն ետքը եկող վարպետները. և եթե մեր օրը և թե մեզնեն ետքը խռովասեր մարդիկ այս սահմանադրությունս վերցնել և քակել կամենան, թող գիտենան այնպիսիները, որ բարության աղբյուր է աստված և աստուծո կամացը հաճո եղածը բարի է. այս սահման(աղրություն°) ս ալ (բարի է°). և բարուն հակառակ եղողը աստուծո հակառակ, ապա այնպիսի աստուծո կամացը ներհակ եղող մարդկանց կորըստյան պատճառ է յուրյանց չար կամաց հոժարությունը մեք անպարտ եմք։

* * *

Ի 1825 ամի տեառն. ի դեկ. 25։ Իմայը դպարան Կարնոյ։ Ծառայ տեառն ուստապաշի Թորոն, մահտեսի պէտ. քէքէ-



ճողլի. Խաչոին գրիգոր, կար. մանտ. սիմոնեան, մանտ. յոհ. մեհյեան մկր. վարդանեան, տոն. պէտրոսեան, խաչ. սաղաթէլյան, վարդ. մահ. մինասեան, մահ. մաթ. կիրակոսեան, կար. էյվազեան և այլն։

Դարբիններին էսնաֆուն, ինչպես երևում է ստորագրություններից, վարպետների թիվը հասնում էր 31-ի (С. А. Егиазаров, „Городские цехи“, էջ 361—367)։

## ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԹՈՒԽԹ

Ղաֆաֆների, խասչարխաֆիների և էսկիշճիների էսնաֆի։

Շնորհօք Ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ և ամենամաքուր մաղթանօք ամէնօրհնեալ Տիրամայրն Սուրբ Աստուածածնին սէր, խաղաղութիւն և ողորմութիւն եկեսցէ և հանդիցէ և սփռեալ ծաւալեսցի ի միջոյ քաղաքիս մերում գուժարեալ համայն քրիստոնեայ հաւատացեալ էսնաֆ եղբարցն մեր և զկնի այնոցիկ մերս դաֆաֆ, խասչարխաֆ և էսկիճի էսնաֆիս՝ վարպետազլուխ, յարգելի անձանց, վարպետաց, ուստապաշի և իկիտպաշի եղբարց և ժրաջան գանձապետաց և համայն մեծ և փոքր Նորարողրոջ խալֆայից, զարդարեսցէ հոգւով և մարմնով. տամբք և տեղօք, սերելօք և բարեկամօք և ամենայն գոյականօք ծաղկեցուսցէ մինչ ի խորին ծերութիւն հասուցանելով։

* * *

Բայց էվելի պորձլու եմք աղոթք ընել առ Աստված մերս քաղաքի բազմերջանիկ և քրտնաջան Հովվապետի սրբազան Կարապետի արքեպիսկոպոսի ընտրյալ և հոգիատես հորն մերս հաստատ, զերաժ իրան աշխատությունովն, հաջողությամբն Աստուծո եղավ այս.—իճէթներս (°) և աղեկ կարգապահություն թեքմիլ եղավ մեր քաղաքի քրիստոնյա էսնաֆին մեջն. պոլլու խրատ տալովն և շատ անգամ եկեղեցվո մեջն խրատ հորդորմամբ խրատելովն. մախսուս ջանք արավ և կատարեց. ասոր համար մենք պետք է տայիմա շնորհակալ ըլլամք և խնդիր անենք՝ Ամենագթածն Աստված տացե երկար կյանք և ի վերա իրան աթոռս և գավազանին իշխան և հաստատ պահեսցե և տա կարողություն, որ մեզ համար խրատող ըլլա։

* * *

Աճապա գիտե՞ք սիրելի հարք և եղբարք խալֆաներ, թե ինչու՞ եմք եկել հայս տանս մեջն և հայս հոդային գումարքյալ նստյալ եմք։ Ու կերանք ու խմեցինք ու վայելեցինք այս մարմնավորական ուրախությունս. իշան հիմա մեզ իլայիխե միսյանց թերիֆ անել ու ֆիտենալ. այս (անունն տուր) նորին եկավ մեր դաֆաֆ, խասչարբլխճի և էսկիճի էսնաֆի մեջն եղավ մեզ հետ եղբայր հայսպես մեզ բերեց, որ այս մեծ հանդեսս վայելեցինք։ Ցոյլե իսե մեքալ պետք է հերպեր թարաֆեն մուխիեթ կենամք այս մարդուս, թե առատին և թե հարկին կողմանե, ինչպես մինասպն է անանկ խրատեմք. և միաբերան խնդրեմք հարարչեն մերմե՝ այս մարդուս ալ տա բարի հաջողություն և իրան գործույն հաստատ պահեսցե, երևելի և հանրահույթ փորձանաց ազատ արասցե։ Հիմա ըխտիզա արավ թերիֆ անել և պատուեր տալ այս մարդույս, որ ինչպես մեր էսնաֆին պայմանագիրն գրված կա և մեր խատեկոֆն ամենքս ալ մոհյուր զարդած եմք տասանորդն սենքի օրտինայն մեղի պես անտրտունջ պիտիր հատուցանե, որ զանձապետն երթա ժողովե ծայր երեսով միամիտ սիրտ ըլլալով թեսլիմ անե։

* * *

Լեքին այս ըսածնուս վերջն մեկ բան ունեմք թերիֆանել (ու). չյունքի Եղիա մարգարեն մաշեգործ էր սենքի տապախ և մաշկյակ կշիներ հագուստի համար և կարեր վերարկուս և այլն։ Հայսկիից կերևի, թե հոգևորապես մեր ուստապաշին՝ վարպետն է։ Ցոյլե իսե մեզ պետք է մեր գործույն հաստատ ճնամք և ճշմարտությունն աղեկ սիրեմք. չլինի մեր ուստապաշին հոգևորապես մեզ դատե զիրա վրեժխնդիրն. սենքի մեր հայրֆեթին մարգարեն գիտնալով՝ տայիմա մտքներիս պահենք և մեք սիրով մնամք։ Եթե սեր և միաբանություն ունենամք, Աստված ամենաբարին նորին բարի աղոթյուքն կարող է զհոգևոր և մարմնավոր վեր (ս) մեր բժշկել և կայնեցնել մեզ հաջողության մեջ։ Եվ եթե ճշմարիտ ըլլամք. աշիքյար կերևի, թե մենք մարգարեն պարտավոր կառնումք, սենքի մեր հախն գուզեմք. և այն ատենն զոր ինչ խնդրեմք, Աստված ալ մարգարեին մարիֆաթոֆն կուտա։



Եվ ինչպես Եղիսե մարգարեն իրան աշակերտն ըլլալով՝ Եղիա մարգարեն համբառնալոյ ատենն ըսավ՝ թինչ գուզես, ասա քեզ որդյակ, ըսավ թե շնորհքդ ինձի ըլլայ. որ (ը) համբառնալո ատենն իրան վերայի մաշկյակն, սենքի կաշիե շինած վերարկուն գլխին ձգեց. ամեն մարգարեական շնորհոք լցուավ աշակերտն։ Եվ մեք ճշմարիտ ըլլամք և խնդրեմք՝ հոգևորապես վերարկուն մեր հոգվո վրան ձգեսցե և ամենախնամն Աստված հյուրուս գալստյանն մեզ արժանի արասցե և ընդ արդարան պահեսցե։ Եվ միաբան ասասցուկ զտերունական աղոթքն. Հայր մեր, որ հերկինս և այլն (С. А. Егиазаров, Городские цехи, էջ 384—388)։

## ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԿՕՇԿԱԿԱՐ ԱՐՀԵՍՏԱՒՈՐԱՑ

Ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։ Բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնու և սրբոյն Յովհաննու Կարապետի, Ստեփանոսի Նախավկային և առաջին լուսաւորչացն մերոց՝ Սրբոյն Թադէոսի և Բարդուղէմիոսի և սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և սրբոց առաքելոց, մարգարէից, հայրապետաց, վարդապետաց և ամենայն սրբոց հնոց և նորոց, յայտից և անյայտից մաղթանօքն տացէ Տէր աշխարհի խաղաղութիւն, խռովարարաց հաշտութիւն, մանաւանդ քրիստոսասէր հայ եղբարց և մեր այս գումարքալ կօշկակար արհեստաւորաց՝ մեծաց համբերութիւն, փոքունց խոնարհութիւն, ճշմարտութիւն և ամենեցունց սէր, միաբանութիւն և գործի յաջողութիւն։

Գիտե՞ք սիրելի արհեստակիցք և դու՝ (այսանուն) նորընտիր վարպետ, մեր արհեստի հիմն է սուրբ Եղիա մարգարեն, սորա շինորհիվն է, որ մենք այս օր ի ջարս կանոնավոր արհեստավորաց կամք, սորա օրհնությունովն է, որ մեք այս օր կապրենք ինչպես կանոնավոր մարդ. ուրեմն ինչպես որ նա ավանդեց մեզ այս արհեստը սրբությամբ և անխարդախ, մենք ալ նորան երախտապարտ չգտնվելով՝ պարտ եմք գործադրել անխարդախ աշխատել մեր աշակերտներին սովորեցնել անխարդախ, եթե կուզենք սրբույն մարգարեին օրհնությունը վայելել և պարտազանց չգտնվել. որ և է վարպետի խարդախ ձեռագործին պարտ եմք վրեժխնդիր լինել, ինչպես մի մարդասպանի օրենքը վրեժխնդիր լինի։

Եվ դու (այսանուն) ի ներկայության այս տեղ դումարված բոլոր վարպետաց առջև քո ուստության արժանավորությունը ցույց տալով՝ պիտի կրես անուն ուստայի. և մենք անավասիկ շնորհավորելով խնդրեմք ամենաողորմ Արարչեն՝ տացե քեզ երկար կյանք, հաջողություն և արհեստիդ անխարդախ գործադրություն ինչպես որ մատաղ կյանքովդ ճշմարտությամբ ծառայեցիր մինչ այս անունը, այնպես ալ հետ այսորիկ մինչև ի մահդ ճշմարտությամբ գործադրես։ Ահա քո աշխատավոր վարպետիդ մխարեան կասեմք. «յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։

Լսիր նորընտիր վարպետ, որպես որ քո պատվական վարպետը իրան հոգևոր սրբազան պարտքը կատարեց, հասուց քեզ քո նպատակին՝ չինայելով աշխատությունը—սովորեցուց արհեստը, անպակաս վարժեցուց, իբրև հայր բարի կյանքի և բարի ճանապարհի մեջ. այնպես ալ դու՝ նոր ընտիր վարպետ, պարտես նմանություն բերել քո ուստաներին, ունենալով քո աշակերտների վերա բարի սիրտ, ճշմարիտ նպատակ և հանձնել ուստության կոչմանը և լսել վերջին մեր հետագա վարպետներից, թե՝ «յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։

Ախալցխա, 1875 թ. 20 մարտ.

(С. А. Ег.—„Городские цехи“, էջ 389–390)։

## ՍՐՀԵՍՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(9—13-րդ դ. դ.)

1. Դարբնություն
2. Պղնձագործություն
3. Զինագործություն (սլեհարարություն)
4. Նետաբար
5. Քարտաշություն
6. Հյուսնություն
7. Բրուտագործություն
8. Ջահրա
9. Ջուլհակություն
10. Դերձակություն
11. Ասեղնագործություն
12. Մորթեզործություն
13. Թամքագործություն
14. Կոշկակարություն
15. Ոսկերչություն
16. Արծաթագործություն
17. Հուլնարարություն
18. Մագաղաթ և թուղթ պատրաստող
19. Կաղմաբարություն
20. Մոմող
21. Գրիչ
22. Փորագրիչ
23. Ծաղկող
24. Նալբանդություն
25. Կողպայքարարություն (փականագործություն)
26. Լկամարարություն (սանձարարություն)
27. Մուճկակարություն (կոշկակարություն)
28. Մետաքսագործություն
29. Բեհեզագործություն
30. Գորգագործություն
31. Ներկարարություն
32. Գտակկարություն
33. Փոլկարություն
34. Մազմանություն
35. Լարարարություն
36. Հալավարարություն
37. Կատնոց (լայն զգեստ կարող)
38. Սանրարություն

## ԱՐՀԵՍՏՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՆՄԻԶԱՊԵՍ ԿԱՊՎԱԾ ՉԵՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

1. Պկաղարկ (պարկապզուկ փչող)
2. Տոպոպզարկ (զուռնաչի)
3. Փորեզիկ (փերեզակ, ժանրավաճառ, բախալ)
4. Նատաւ
5. Մոքերիկ (Ջորեպան)
6. Մաչալում
7. Դարբասպան
8. Պարտիզպան
9. Բաղնիսպան
10. Ըռքեպան (ձիապան)
11. Խարբանդան (իշապան)
12. Ուղտապան
13. Հաջամն
14. Ադոթարար
15. Գուսան
16. Հացրար

## ԷՍՆԱՖԻՑ ԱՆՎԱՆՔՆ ԵՎ ԹԻՎՔՆ ԵՆ ԱՅՍՈՐԻԿ*

1. Սառաֆ (սեղանավոր)
2. Խուլումճի (ոսկերիչ)
3. Տյուլպենտճի (ծաղկաբար, տաջող)
4. Հացագործ
5. Քեբեստեճի (փայտյա շինանյութ վաճառող)
6. Քեմհանճի

* «Դիւան Հայոց պատմութեան», Թիֆլիս, 1914 թ., գիրք ժ, էջ 333. Դյուտ քահանա Աղանյանը սույն հատվածը բերում է «Մանր մատենագիրք» վերնագրի տակ, առանց հեղինակի անվան և թվականի.—շարունակությունից կարելի է եզրակացնել, որ սա վերաբերում է 18-րդ դարի երկրորդ կեսին։

7. Սանտալճի (հողաթափ կարող)
8. Քյուրքճի (մուշտակագործ
9. Թերզի (դերձակ)
10. Մինթանճի (բաճկոն կարող)
11. Հին փարչաճի (հին կըտորեղեն կամ զգեստ ծախող)
12. Սահաթճի (ժամագործ)
13. Պեզազ (կտոր վաճառող)
14. Օթուրախճի (նստարան պատրաստող)
15. Ղազանճի (պղնձագործ)
16. Տյուրկեր (հյուսն)
17. Ֆիլճանճի (գավաթագործ)
18. Սեստճի (պետք է լինի մէստճի)-(բարակ կաշվից կոշիկ կարող)
19. Համամճի (բաղնիսպան)
20. Աշճի (խոհարար)
21. Խայէխճի (գայերգչի) (թիավար, նավավար)
22. Մանկավարժք
23. Խըլըճճի (գըլըճճի) (թուր շինող)
24. Պերպեռ (վարսավիր)
25. Բապուճճի (մաշկակար)
26. Չիլինկիր (փականագործ)
27. Զուլհակ
28. Խավուխճի (գավուզճի) (գլխակագործ)
29. Նոր փարչաճի (նոր կըտորներ ծախող)
30. Պոզմաճի (հնակարկատ)
31. Տոզրամաճի (ատաղձագործ, որ պատրաստում է ավելի նուրբ մասեր՝ շրջանակներ, դռներ և լուսամուտների մասեր)
32. Սեռեֆճի (սաղաֆագործ)
33. Սըվաճի (ծեփող)
34. Սառաճ (թամբագործ)
35. Խորասանճի (ծեփած կղմինդր վաճառող)
36. Ալչըճի
37. Զարխճի
38. Զեռմլեկճի (բրուտ)
39. Յուքյուճի (հարթուկարար)
40. Պյուքիճի (թել ոլորող)
41. Թարապխանաճի (պանդոկապետ)
42. Մանավ (մրգավաճառ)
43. Չիլփոզճի
44. Էսկիճի (հին կոշիկներ կարկատող)
45. Ղազեզ (մետաքսեղեն վաճառող)
46. Ճիզմեճի (տղամարդու երկարավիզ կոշիկ կարող)
47. Խափամաճի (գափամաճի)—(հագուստեղեն և կոշկեղեն վաճառող)
48. Էքսերճի (մեխագործ)
49. Ղալիբախճի (գլխակագործ)
50. Խաֆաֆ (կոշկավաճառ)
51. Թյուքյունճի (ծխախոտավաճառ)
52. Սրմաքեշ (ոսկեթելով բանող)
53. Ախտեր (դեղավաճառ)
54. Փեշտամալճի (գոգնոց, բաղնիքի ցամքոց գործող)
55. Սոֆճի («սոֆ» կոչված կտոր գործող)
56. Սեմենիճի (հյուսատ կարող)
57. Պչախճի (գանակ շինող)
58. Մախասճի (մկրատ շինող)
59. Զալբխճի (ծխամորճ շինող)
60. Էնֆիյեճի (քթախոտավաճառ)
61. Թոմպախճի
62. Միսկճի (անուշահոտ յուղ եփող)
63. Բժիշկ
64. Պախալ (նպաստավաճառ)
65. Բիբաղճի (գիրք վաճառող)

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Ալիշան Ղ.—«Այրարատ», բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890 թ.

2. Ալիշան Ղ.—«Սիսական», Վենետիկ, 1893 թ.

3. Ալիշան Ղ.—«Շիրակ», Վենետիկ, 1881 թ.

4. Անանյան Հ.—«Ցուցակ հայերեն ձեռագրաց Թավրիզի, Վիեննա, 1910 թ.

5. Բասմաջյան Կ.—«Ցուցակ հայերեն ձեռագրաց», Պարիզ, 1899 թ.

6. Акад. Бартольд В.—Персидская надпись на стене Анийской Мечети Мануче—Анийская серия № 5, СПБ, 1911 г.

7. Акад. Бартольд В.—Историко-географический обзор Ирана, СПБ, 1902 г.

8. Егиазаров С. А.—Изследования по истории учреждений в Закавказьи, часть II, Городские цехи, Казань, 1891 г.

9. Էնգելս Ֆ.—Անի-Դյուրինգ, Երևան, 1936 թ.

10. Эмин Н. О.—Армянские надписи в Карсе, Анп.

11. Թորամանեան Թ.—Անին քաղաք, թէ ամրոց» («Ազգագրական Հանդէս», ԻԲ և ԻԴ գրքեր)։

12. Թորամանյան Թ.—Շինանյութերն ու նրանց զարգացության կերպը հին Հայաստանում, Երևան, 1932 թ.

13. Իբն Բատուտա—Օտար ազգությունները հայերի մասին, թարգմ. Անանյանի, Երևան 1940 թ.

14. Ինճիճեան—Հնախօսութիւն Հայաստանեայց աշխարհի, Ա. և Բ., Վենետիկ, 1835 թ.

15. Լալաեան Ե.—«Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», Թիֆլիս, 1915 թ.

16. Կանաեան Ստ.—«Ցուցակ հայերէն ձեռագրեաց Ներսիսեան դպրոցի», Թիֆլիս, 1893 թ.

17. Յովսէփեան Գ.—«Մի էջ հայ արուեստի և մշակոյթի պատմութիւնից», Հալեպ, 1930 թ.

18. Յովսէփեան Գ.—«Գրչութեան արուեստը հին Հայոց մէջ», Վաղարշապատ, 1913 թ.

19. Հույն պատմիչների վկայությունները հին Հայաստանի ռակու հանքերի և նրանց տեղի մասին, Երևան, 1925 թ.

20. Ղաֆարյան Կ.—Պատմական դիտողություններ Նաք-բերդի գյու-

բիկյան իշխանության մասին, «Տեղեկագիր» Արմֆանի, № 4—5, Երևան, 1940 թ.

21. Ղաֆադարյան Կ.—«Ամանի երկրագործյան ծածկագիր արձանագրություններ», Երևան, 1946 թ.

22. Маркс К.—Капитал, том I, Москва, 1928 г.

23. Маркс К.—Капитал, том III, 2-ая часть, Москва, 1928 г.

24. Маркс К.—Архив, книга первая, Москва, 1928 г.

25. Маркс К. и Энгельс Ф.—Сочинения, том IV.

26. Материалы по истории туркмен и Туркмении, том I, Ленинград. 1939 г.

27. Ակ. Մառ Ն.—«Անի» ավերակները» («Արարատ» ամսագիր, Վաղարշապատ), 1911 թ.

28. Марр. Н. Я.—„Ани", Ленинград, 1934 г.

29. Марр Н. Я.—Кавказский культурный мир и Армения, Петроград, 1915 г.

30. Марр Н. Я.—Кавказ и памятники его духовной культуры, Петроград, 1919 г.

31. Марр Н. Я.—Анийская серия, № 12.

32. Марр Н. Я.—Батум, Ардаган, Карс—исторический узел национальных отношений Кавказа, Петроград, 1922 г.

33. Ակ. Մանանդյան Հ.—«Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», Երևան, 1936 թ.

34. Ակ. Մանանդյան Հ.—«Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում», Երևան, 1941 թ.

35. Манандян А.—О торговле и городах Армении, Ереван, 1930 г.

36. «Մշակ» օրաթերթ—1883 թ. № № 34, 136, 1890 թ. № 109, 95 և 1891 թ. № № 65, 66, 67, 68.

37. Յովհաննէս եպ. Շահխաթունեան—Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Ա. հատոր, Էջմիածին, 1842 թ.

38. Шакназарян А.—Двин. историко-географический очерк, Ереван, 1940 г.

39. Шелковников Б. А.—Художественная керамическая промышленность средневковой Армении. „Известия" Армфана, Ереван, 1942 г.

40. Чубинов Г.—Декоративное убранство Анийских карасов, Петроград, 1916 г.

41. Ստրաբոն—Օտար աղբյուրները հայերի մասին, թարգմ. Հ. Աճառյանի, Երևան, 1940 թ.

42. Ստամբելյան Խ.—Հին Հայաստանի կուլտուրան, հատ. Բ., Երևան, 1941 թ.

43. Ստամբելյան Խ.—Մխիթար Գոշի Դատաստանագիրքը և հին հայոց քաղաքացիական իրավունքը, Վիեննա, 1911 թ.

44. Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 29-ый, Тифлис, 1901 г.



45. Տաշեան Յ. Վ.—Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895 թ.

46. «Տեղեկագիր» Գիտության և Արվեստի ինստիտուտի, № 1, Երևան 1921 թ.

47. » № 2, Երևան 1927 թ.

48. » № 3, Երևան, 1938 թ.

49. Նյութեր հին Հայաստանի պատմությունից, Երևան, 1935 թ.

50. «Տեղեկագիր»—Պատմության և Գրականության ինստիտուտի, II գիրք, Երևան, 1937 թ.

51. Успенский—История Византийской империи, т. I, СПБ.

52. —Ուղեգրություններ, հատ. Ա, Երևան, 1932 թ.

53. Ակ. Հ. Ա. Օրբելի—«Անւոյ աւերակները», Վաղարշապատ, 1911 թ.

54. Акад. Орбели И.—Путеводитель по городищу Ани, № 4, 1910 г.

55. Якубовский А. Ю.—К вопросу о происхождении ремесленной промышленности Сарая Берке, Ленинград, 1931 г.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Էջ

Համառոտ ակնարկ Հայաստանի բարբարական և տնտեսական դրության մասին 9—13-րդ դարերում . . . . . 5

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

*Արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում* . . . . . 21

I. *Մետաղագործություն* . . . . . 39

1. *Դարբնություն* . . . . .

2. *Զինագործություն* . . . . .

3. *Ոսկերչություն և արծաթագործություն* . . . . . .

II. *Մանածագործություն* . . . . . 73

III. *Կավագործություն* . . . . . 83

IV. *Քարակոփություն և ոսկեզարություն* . 90

V. *Հյուսնություն* . . . . . 102

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

*Համքարության հարցը* . . . . . 113

*Աղբյուրներ* . . . . . 136

*Հավելվածներ* . . . . . 140

Տպագրված է տպագրության 21 նոյեմբերի 1946 թ. վ.Ֆ 12012, պատվ. 764
Հրատ. № 331, տիրաժ 2000, 9¾ տպ. մ., մեկ մամուլում 38.400 տպ. նիշ

ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի տպարան, Երևան, Աբովյան № 104